



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1023

F. huempp

:33

C-15

Chichipe
1878

2010

b 2001

1499

1499

Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

Հ Յ Ա Հ

Ե Ս Կ Ա Գ Ա Շ Ա Ր Ր Կ Ի Կ



541

I. Վասոր

(Բ. Գործ)

աշխատասիրեց

ՅՈՒՀԱՆՆԵՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Լուսնա
Տ Փ Ի Բ Ո.

Յովհաննես Մարտիրոսանցի 1026 թ.

1878

Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

33 415-4.

W 844



~~727~~
ՅԱՐԱՋՈԲԱՆ

Մենք ժողովեցինք Հայերիս մէջ արմատացած նախապաշտումները և մտադիր ենք շարունակել այս գործը, եթէ մեր յոյսերը չեն դաւաճանիլ մեզ: «Ինչու ժողովեցիք. հարկաւո՞ր էր արդեօք ժողովելը, գուցէ կ' հարցնի մեզ ընթերցողը: Մենք կ' պատասխանենք: Ժողովեցինք, որ իմանայինք, թէ ի՞նչպիսի նախապաշտումներ կան մեր միջ, որքան մեծ է նոցա թիւը, նոքա մինչև որ աստիճան նախապաշտուածների խելքի ծնունդ են. որտեղ երուածայն աւելի շատ է նախապաշտուած և որանդ նա թօթափել է իւր վերայից այդ մնոտիսապաշտութիւնները:

Գալով երկրորդ հարցին, կասենք: Հարկաւոր էր ժողովել որովհետեւ մեզ հարկաւոր է ծանօթանալ մեր զանազան հասարակութիւնների, հետեւբար և ամբողջութեան մտաւոր զարգացման հետ: Գիտենալով, թէ ինչպիսի մոլորութեան մէջ է ընկած որևէ հասարակութիւն, մենք կարող ենք այդ մոլորութեան առաջն առնել զանազան միջոցներով: Կարողենք փրկել նորան այն բարոյական, մտաւոր և նիւթական վնասներից, որոնց մէջ նաև ընկնումէ միշտ:

Ուսումնասիրել նախապաշտումները, դա մի այնպիսի վսեմ գործ է, որի համար հարկաւորէ բարձր փիլիսոփայական գիտութիւն և շատ տարիների աշխատութիւն: Հասնել ցանկալի նպատակին, ոչ միայն մենք, այլ և նոյն իսկ եւրոպացիք չեն կարողացնել:

Այս նիւթի վերաբերութեամբ մեր ձեռքն ընկաւ մի գրքով «Des erreurs et des préjugés populaires» առունով: Դա՝ Փրանսիայի Արտաքին գործերի մինիստր

Дозволено цензурою. Тифлисъ. 1 Декабря 1877 года.



(3349
40) 16956-58

Tipografia I. Martirosianca na Orob. u. d. № 5.

Ը. Վարդի ինքսոնի աշխատութիւնն է, որ իբրև հրապարակախօսութիւն (լեզվայ) կարդացուելէ Փարիզում և տըպագրուած է այնտեղ 1866 թուին:

Պ. Վաղղինգտօնը, ցաւելով յայտնումէ իւր ունկնդիրներին, որ նորա ձեռքբում՝ չկայ մի Փրանսիարէն աշխատութիւն նախապաշարութիւնների վերայ, որ կարողանար աւելի պարզ և հասկանալի կացուցանել նոցա նշանակութիւնը: Եւ աւելացնումէ, որ վերջին դարու մի Անգլիացի գիտնական, բժիշկ Թօմաս Բրաուն անունով՝ կազմել է մի կատալոգ ժողովրդական նախապաշարութիւնների:

Պ. Վագրինգտոնը այդ աշխատութիւնը անկատար է համարում, որովհետեւ, չ'նայելով, որ նա բաղկացտծէ երկու հատորից, որոնցից իւրաքանչիւրն ունի 4-500 երես, այսուամենայնիւ նոքա իւրեանց մէջ պարունակում են միայն այնպիսի նախապաշտումներ, որոնք յարաբերութիւն ունին բնական պատմութեան հետ: Պ. Վագրինգտոնը նոյնպէս մատնացոյց է լինում մի գրքի վերայ, որ առ այժմ մենք չկարողացանք ձեռք բերել:

Այսպէս ահա, մեր ընտրած նիւթը շատ ընդարձակ է,
նորան կազմակերպող մասները շատ բազմասեռի են. Եւ,
ինչպէս ընթերցողը նկատումէ, մենք նորան ներկայացնում
ենք մի հում և անսհակ նիւթ։ Ուրիշ տեսակ վարուել,
մենք չեինք կարող։ Թող ուրիշներն աշխատեն պատրաս-
տել մեր տռաջարկած նիւթից այն, ինչ որ հարկաւոր է.
Անտարակայս ենք, որ սա՝ ժամանակով կ'գրաւի իւր վերաց
երեւելի գիտնականների ուշադրութիւնը։

Պ. Վաղգինդտոնը իւր աշխատութեան մէջ, որքան
թոյլ է արվում մի հրապարակախօսի, մի համառօա հայեացք
է ձգում նախապաշտումների վերայ։ Աւելքը համարելով
ամիողջ զրքուկի թարգմանութիւնը, մենք գուրս ենք բե-

բումնորա միջեց այն կետերը, որոնց վերայ գլխաւորապէս ուշադրութիւն է դարձրել նորա հեղինակը:

«Սախապաշարումները, -ասումէ պ. Վադիինգտոնը, -
այն սխալ և միանգամայն անմիտ կարծիքներն են, որոնք
դիւրութեամբ ընդունուել և տարածուել են, յետոյ յա-
մառութեամբ պահպանուել և արմատացել են, . . . : Դա
մի ցաւ է, մի մեծ ցաւ, մարդկային հոգու և հանձարի
խարազաններից մէկը»: Յետոյ մի թեթև ակնարկութիւն
անելով նոյն ծագման վերայ, -ասումէ. Ճաատ հին ժամա-
նակներում, Նգիպտացիք պաշտումէին էական կամ երեա-
կայական կենդանիներ, որոնք կամ օգտակար էին մարդուս
կամ մասսակար, : Յոյները և Հռովմայեցիները սրաաբեկվում
էին, երբ, -պատրաստուած, լինելով հեռաւոր ճանապարհ
գնալու կամ որ և է ձեռնարկութիւն սկսելու, -լում էին
գիշերային բուի սուր ձայնը կամ ագռաւի գրաւոցը:

Սիջեն գարում մենք տեսնում ենք զալարի բարձր
վհուկներ և հմայողներ: Գաւանանք դեպի ներկայ ժամա-
նակը, մենք գտնում ենք միևնոյն թուլութիւնները, մի-
ենոյն երեխայութիւնները, միևնոյն երեխայական երկիւղը,
որ պատճառում մեր մէջ՝ երբեմն պատահմամբ վայր
ընկնող աղամաննը, երբեմն ականջի ծփոցը, կամ օրեւէ պահա-
պան շան գիշերային ունոցքը, որ եթէ տեսնում են գիշերը,
յուսոյ նշանէ, կէսօրին՝ հոգսի նշանէ, իսկ առաւօք՝ վատի,
...: Տեսնում էք, պարոններ, այն թշնամին, որ կանգնած է
մերա ռաջը, նախապաշարումն, դամի թշնամի է հազար ռ-
բիւր զլիններով: Չ'վախենանք դորա հետ պատերազմելու:

Յառաջ տանելով իւր խօսքերը, պ. Վագիթ սկզբունքը
ընդհանուր հայեացք է ձգում այն բոլոր առարկաների
վերայ, որնք նախապաշարման նիւթ են դարձել: Այս-
տեղ նա յիշումէ հետեւեալ նախապաշարումն: Եթք երե-

խան ծնվումէ, իսկյան նորան ցոյց են տալիս աստղերին, որ գրուի նորա ճակատագիրը, իմացուի, թէ նա ինչ աստղի է ծնուած, և աւելացնումէ, թէ երեխայի ճակատագիրը այն պէտքէ լինի, ինչոր այդ բոպէին գուշակում է իմաստուն աստեղաբաշխը: Եւ ասումէ Ա.յս մոլորութիւնը մեզ աւանդել են Քաղղէացիք, այդ՝ բարելոնի գիտնական աստեղաբաշխները, որոնց մասին գուք ամենքդ լսել էք, և յետոյ հաստատել են միջն դարու հրէա և արտացի աստեղաբաշխները, . . .:

Սորանից յետոյ հեղինակը կարգով խօսում է՝ աստղերի, համաստեղատների, երկրի, մէտաների, բյուերի, կենդանիների և մարդու վերայ: Եւ, որովհետեւ դոքա բոլորն էլ նախապաշտումների նիւթ են դարձել-ուստի հեղինակը խօսումէ նոցանից իւրաքանչիւրի վերայ առանձնապէս:

Պ. Վարդինգտոնն ասումէ. «Երկար ժամանակ կարծում էին, թէ աստղերը անբիծ մարմններ են, մինչև որ արեգակի վերայ եղած բծերի յայտնագործութիւնը յաւիտենապէս թաղեց այդ հին կարծիքը: Ահա երկու օրինակ, որ ես հանում եմ «Logique de Port-Royal»-ից: Երկուում կայ մի համաստեղատուն, որին անուանել են կնքումը կայ մի համաստեղատուն, որին անուանել են կշիռ, ևոր նման է կշռի: Կշեռը արդարութեան նշան է. կշիռ, ևոր նման է կշռի: Կշեռը արդարութեան նշան է. ուրեմն, նոքա, որոնք ծնվում են այս համաստեղատան ուրեմն, նոքա, որոնք ծնվում են այս համաստեղատան տակը, կ'լինեն ճշմարիտ և արդարադատ: Կենդանակամարի մէջ կայ նոյնպէս երեք նշան, որոնցից մէկին անուանում են՝ Խոյ, միւսին՝ Ցուլ, երրորդին՝ Ա.յծեղջիւր: Խոյն, ցուլը և այծեղջիւրը որոճող կենդանիներ են: Ուրեմն, նայեցէք այս գատողութեամբ) նոքա, որոնք դեղ են (նայեցէք այս գատողութեամբ) նոքա, որոնք դեղ են ընդունում այն ժամանակ՝ երբ լուսինը այդ կենդանակերպներից մէկի տակն է գտնվում: Կրկին կ'փոխեն դեղը»: «Չեզ յայտնի է, որ երկար ժամանակ կարծում էին,

թէ երկիրը անշարժ է, և ամբողջ երկինքը իւր անհունարմիններով և անհուն տարածութիւնով հեռացած է մեզանից և պտտվումէ մեր փոքրիկ մոլորակի շուրջը: Աստեղաբաշխութեան արածյառաջադիմութիւնները պարզաբանեցին այդ բոլորը մարդուս առաջեւ, և մեր օրերում, անդամ շատ փոքր կրթութիւն ստացած մարդիկ լսել են, որ երկիրը շարժվում է իւր վերայ և արեւի շուրջը:

«Բնութեան բոլոր թագաւորութիւնները մարդուս համար մի առիթ են եղել սխալանքի և մոլորութեան մէջ ընկնելու, թելաղբելով նորան շատ յիմար կարծիքներու օրինակ. հանքային թագաւորութեան մէջ, երկար ժամանակ հաւատում էին, թէ բոլոր մէտանները կարող էին ուկի դառնալ մի նիւթի միջոցով, որի միայն գաղտնիքն էր հարկաւոր իմանալ, և որին անուանում էին փիլխոփայական քար: Ոչոք չ'գիտէր նորա անոնք-բայց ամենքը հաւատում էին նորան. և բաւական էր միայն ձեռքը դնել այդ խորհրդական առարկայի վերայ, և նորա ըսկ շօշափում կարող էր ոսկի փոխարկել երկաթը, պղինձը, կափում կարող էր միւս բոլոր մէտանները: Նոյնպէս միջին դարու պարը և միւս բոլոր մէտանները: Նոյնպէս միջին դարու սոկէգործները, այլ և միքանի թագաւորազներ մեծ եռանդրով աշխատում էին գտնել այդ փիլխոփայական քարը: Տարաբաղտաբար, այժմեան գիտնականները չեն հաւատում դրան և չեն որոնում այդ քարը, այնպէս որ, ելյոյս չ'կայ, որ մենք կարողանանք գտնել նորան:»

Տունկերից մէկը նոյնպէս մտել է այն մոլորութիւնների շալքում, որոնք տարածուած են այսօր: Հին Գոլուացիք, մեր նախնիքը և նոցա հեթանոս քուրմերը կալնի յեղ, մեր նախնիքը և նոցա հեթանոս քուրմերը կալնի յատկութիւններ էին տալիս, կատածառին գերբնական յատկութիւններ էին տալիս, կատածառին գերբնական յատկութիւններ էին տեսակ ծէտեր և առաջարկում էին ժողովում էին ամեն տեսակ ծէտեր և առաջարկում էին ժողովում

դրվդին, որ պաշտեն նորան: Հները դարձնիք էին պահում կայծակից պաշտպանուելու համար: Ֆրանկինից ըսկած մենք աւելի լաւ շանթարգելներ ունինք:

Կենդանիների մէջ բաւականէ յիշել սՓինկսի և Փէնիկսի (փիւնիկ) առասպելական անունները: Փէնիկսը միակ թռունն էր, որ վերածնվում էր իւր մոխրից. յետոյ սաւամանդրը (մողէս), որի մասին կարծում էին, թէ կրակի մէջ էր ապրում. և փոքրիկ աչքերաւոր խլուրդը, որին երկար ժամանակ կոյր էին համարում:

Մարդը և իւր պատմութիւնը նոյնպէս մի հարուստ նիւթ են տուել կարծիքներին, ստութիւններին և առասպելներին: Խ՞նչու, օրինակ դեռ ևս այսօր առողջութիւն են ցանկանում փաշտացողներին: Ահա ինչու: Մի ժամանակ թագաւորում էր մի մեծ, տարափոխիկ մահ (էպիգեմիա), որի առաջին նշանը փաշտան էր: Ահա, այստեղից է առաջ գալիս շնորհաւորելու այս խօսքը՝ «Առողջութիւն»:

Պարոններ, ամենքին յայտնի է, որ Քրիստոսիոր Կօլումբոսի ճանապարհորդութիւններից և Նոր-Աշխարհի յայտնագործութիւնից առաջ մերժում էին, ինչպէս ամենաանկարելի բան, մեր հակոտնեանների (անտիպօնների) այսինքն այն մարդկերանց դժութիւնը, որոնք զետեղուած են երկրի միւս երեսի վերայ, այնպէս որ մեր վերաբերութեամբ՝ նոքա, կարծես, գլխիվայր են մանգալիս: Այն ինչ հները մերժում էին հակոտնեանների գոյութիւնը, որոնք կան իսկապէս, նոքա հիւսիսային բևեռներում զետեղուամէին թզուկներ, որոնք ամեննեին չկային, այսինքն մարդիկ (այնքան փոքր հասակով, որ անկարելի էր), մի ոտի բարձրութիւնով, և որոնց անունը մնացել է առասպելներում:

Թաղնելով հին նախապաշտումները, Պ. Վաղդինգտոնը

իւր ունկնդիրներին հրաւիրումէ անցնել դէպի նոր նախապաշտումները, և ասում է Հներն ունեին մի նախապաշտումն շատ տարածուած էր, այսինքն՝ որևէ ձեռնարկութիւն ակսելու համարկան բարի և չար օրեր, և լաւ ու վատ թուեր:

Այդ նախապաշտումն մենք ոչ միայն պահել ենք, այլ և չափազանցրել ենք . . . Այդ օրը և այդ թիւը, դուք լաւ էք յիշում, և են՝ ուրբաթն ու պահուելու: Քրիստոնէայք այդ օրը և թիւը տարաբաղտութեան նշան են ընդունել: Ինչու: Որովհետեւ միանգամ և միայն միանգամ դարերի ընթացքում, պատահեցաւ, որ մի ժողովում որ բաղկացած էր տասերեք անձներից և որոնք նատուած էին մի սեղանի շուրջը վերջին ընթրիքն անելու, գտնիվում էր մի յանդուզն մասնիչը մի ծուզա, և որովհետեւ մի անգամ մի մեծ չարագործութիւն պատահեցաւ ուրբաթ օրը, մի մեծ զոհ մատուցուեցաւ, մի բացառական էակ պսակուեցաւ անօրինակ մարտիրոսութեամբ, սորանից պէտքէ եղակացնել, որ տասերեք թիւը և ուրբաթ օրը յաւիտեան տիսուր պէտքէ լինին. պէտքէ եղակացնել որ ամեն անդամ, երբ տասերեք անձնենք նատուած կ'լինին մի ենոյն սեղանի շուրջը՝ նոցա մէջ կ'լինի մի զոհ դէպի մահ դատապարաուած. որ ամեն անդամ, երբ կ'գայ ուրբաթ օրը, մեզանից իւրաքանչիւրը պէտքէ սպասի մի տարաբաղտութեան կամ մի անյաջողութեան եր գործերի մէջ: Հարցնում եմ ձեզ. ուր է մի այսպիսի կարծիքի ճշմարտութիւնը:

Պ. Վաղդինգտոնը իւր հրապարակախօսութիւնը աւարտումէ այսպէս. «Պարոններ, ես մօտեցայ այս երկայն կըսթութեան վախճանին:

«Ինձ մնամէ եղակացութիւն հանել սորանից, և վերջացնելով՝ փիլիսոփայութեան դասեր կամ խորհրդածութիւնը:

թիւններ տալ ձեզ:

Ես չեմ ցանկանում, որ դա տրամաբանութեան դառ լինի: Եւ որպէս զե չընկնեմ այն կողմը, դէսի որը ես հակվում եմ իբրև փիլիսոփայ, ես, եթէ թոյլ կ'տաք ինձ, մի կարծ համեմատութիւն կ'անեմ; որ՝ յօս ունիմ, պարզապէս կ'արտայայտի այն բոլորը, կ'նչ որ ասուեցաւ մեր մոլորութիւնների և նախապաշարումների վերաբերութեամբ:

Երեակայեցէք մի մթին քարայր, ուր միայն մթութիւն է և խաւար. թանձր գոլորշներն արգելում են լցոնին, որ թափանցի նորա մէջ: Դուք տեսնում էք աստ և անդ, խաւարի մէջ փայլելիս մի քանի առկայծող, աղօտ և խաբուսիկ երեսյթներ, որոնք կախարդում են մարդու տեսողութիւնը, բայց որոնք փախչում են ձեր առաջեկց և ձեզ արգելում են բռնել:

Ուրեմն, դուք ամենքդ հասկացաք այն ձշմարտութիւնները, որոնցով ես զբաղեցրի ձեզ այս երեկոյ: Այդ քարայրը մեր սեփական խելքն է, մեր անհատական հասկացողութիւնը: Խաւարը, որ ներսից մթնեցնում է նորան, մեր տգիտութիւնն է, մեր գիտակցական ընդունակութեան սահմանն է: Արգելող գոլորշները մեր կրքերն են, մեր հպարտութիւնը կամ մեր թեթեամութիւնը, մի խօսքով, մեր բարոյական տկարութիւնները: Այն երեսյթները, որոնք փայլում են արտաքին լուսով, նախապաշարումներն են և մոլորութիւնները» Եւ վերջացնում է իւր խօսքերը՝ աւելացնելով, որ միայն կրթութիւնով և գիտութիւնով կարող ենք հալածել մեր միջեց այդ բոլոր նախապաշարումները:

Հնթերցողը այս բոլորից կ'եզրափակի՝ որ ամեն ազգ ունի իւր նախապաշարումները, որ այդ նախապաշարու-

մների օկիզը և ծագումը պէտքէ որոնել նոյն ազգի անցեալի մէջ, որ շատ անգամ որևէ նախապաշարման հիման վերայ ստեղծվում են շատ ուրիշ նախապաշարումներ, և որ, վերջապէս, բոլոր ազգերի նախապաշարումների հիմքը պէտքէ որոնել ընդհանուր, մարդկային ազգի պատմութեան և նորա ամենահեռաւոր անցեալի խորքում:

Նոյնպէս կարելի է նկատել, որ այդ ֆրանսիական նախապաշարումներից շատերը ընդունուած են և մեր մէջ: և մէնք մեր յառաջաբանը չերկարացնելու համար այստեղ օրինակներ չ'ենք բերում:

Հարկաւոր համարեցինք ծանօթութիւնների մէջ բերել մի քանի բացատրութիւններ, որոնց մէնք գտնում ենք աւանդութիւնների մէջ:

Յայտնի բան է, որքան շատ տեղերից ունենայինք նախապաշարումներ, այնքան լայն և ընդարձակ հասկացողութիւն կ'ունենայինք նոցա վերայ, և ընդհակառակն ուրքան սակաւաթիւ տեղերից են հաղորդուած նոքա, այնքան նեղ և սահմանափակ կ'լինի մեր գաղափարը: Մեզ մասնակցող քաղաքները շատ չեն: Այս գործում մեզ օդնել են 5 քաղաք և 5 գիւղ: Դոքա են՝ Տիֆլիս, Սղնախ, Երևան, Ալէքսանդրոպոլ, Շամշուլլայ, Շուլաւէր, Քարվանսարայ, Վ.՝ Ազուլիս և Սաղիան: 6 անձինք նիւթ ուղարկեցին Տիֆլիսից, 3—Ալէքսանդրոպոլից, և 8—առանձին տեղերից: Եւ այդ է պատճառը, որ այս հատորում նախապաշարումների մէծ մասն առնուած է Տիֆլիսից:

Մեզ ուղարկուած նախապաշարումների թեւը հաս նում էր 1000—ի: Բայց նոքա բոլորն էլ նախապաշարումներ չ'էին: Այլ կամ աւանդութեամբ էին, կամ ճշարպանական հիմնուած առողջ դատողութեան վերայ և կամ

Հայոց մեջոյներ էին զանազան վկասների առաջն առնելու համար:Այդպիսիները մենք՝ չներմուծեցինք գրքիս մէջ: Կային և՝ այնպիսի նախապաշտումներ, որոնց այստեղ ներմուծելը անհամեստութիւն կլինէր: Այս հատորի մէջ կայ 618 նախապաշտումնք:

Միւս հատորը կ'ունենայ մի քանի բաժանմունք,
որոնց մէջ առանձին գլխներ կ'կազմեն՝ զրւութիւնութիւն-
ները (предразсудки) առանդութիւնները (преданія). Համա-
պալու կամ կարծէները (повъръя), առանդութիւնները,
(съевѣrie) և ճշմարտութիւնները, որոնք լնդունուած են իբրև
նախապաշարմունք:

Այս աշխատութիւնը, անդրանիկը լինելով իւր նման-
ների մէջ, յուսով ենք, որ կ' դարձնի իւր վերայ շատ բա-
նասէրների ուշադրութիւնը: Թող ուրեմն, ոչ ոքչ' ևնայի
մեզ հաղորդելու իւր նկատողաւթիւնները, որոնցից մենք
օգուտ կ' քաղինք: Իսկ այդ օգուտը կրկին կ' վերադրձնենք
Ազգին, ներկայացնելով նորան մեր աշխատութեան շարու-
նակութիւնները առաւել կատարելագործուած:

ՄԵՆՔ ՀԵՆՔ ԴԱՂԱՐԻԼ օԳՈՒԹ ՔԱՂԵԼՌ ԵՎՐՈՊԿԱՆ
ԼԵՂՈՒՆԵՐՈՎՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՅ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԱԾ
ԱՎՔԵՐԻՑ: Ուստի ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՈցա,-ոՐՈՆց յայտնի են
այդպիսի գրքեր,-որ կամ ուղարկեն մեզ : ԳՐՔԵՐԸ, ԿԱՄ
ԳՐԵՆ մեզ նոցա անունները:

Այստեղ աւելորդ չենք համարում աւելացնել, որ նա-
խապաշարութիւնի առիթով մի գլքոյկ տպուած է եղել
դեռ ևս 1857-թուին։ Այդ գլքոյկն ունի հետևեալ ա-
նունը և մակագրութիւնը։

«Հայկական առածներ և աւտոդութիւններ, որ պարունակում զանազան բարոյական, տնտեսական և կրօնական խորհուրդներ. Ա. Պ. բուրգ, 1857. Ժողովեալ և բացայալ

տերալ՝ ի Յովհաննիսէ Ա. Արզանեանց, մականուանեալ
Սայաթնով:

Այդ գրքոյկը, որ բաղկացած է 40 երեսից, պարունակումէ իւր մէջ երեսուն նախապաշարմունք իւրեանց բացատրութիւններով։ Խակապէս միայն 15—են նախապաշարմունք, իսկ միւս 15-ը զգուշութիւններ են, որոնք սահմանուած են զանազան տնտեսական վնասների առաջնառներու համար։

Այդպիսիները մենք մտադիր ենք առանձնապէս ժողովել հետևեալ հատորի համար իւրեանց բացատրութիւններով։

“Սահմապաշարումներ ժողովելու մասին մեր յայտարարութիւնները տպուեցան «Մեղուի և «Մշակուի մէջ 1874 թուին: Բայց այսքան ուշացնելն ունէր իւր զանազան և մեզանից անկախ պատճառները, որոնց յիշելն աւելորդ է: Իսկ մեզ նիւթ հաղորդողները՝ տեսնելով, որ մեր աշխատութիւնը լցու չի տեսնում, գուցէ, բոլորովին յուսակտուր եղան, - և այդ է պատճառը, որ միայն հինգ ամիս են նիւթեր ուղարկել. իսկ այնուհետև դադարեցին: Յուսով ենք, որ ստանալով մեր աշխատութեան I հատորը, նորա կառունակեն մասնակցելու մեջ այս գործում:

Ու ընթերցողն իմանայ, թէ որևէ նախապաշտութեան բնչ տեղ է ընդունուած, դորա համար մենք հարկաւար

Համարեցինք մէջ բերել այստեղ հետեւալ բացարութիւնները:-

| | |
|-------------------------------|--------------|
| Ա. Նշանակում է Ալէքսանդրօպոլ. | |
| Եր. | Երևան. |
| Շամի. | Շամախի, |
| ՍՂ. | Սղմախ, |
| Շուշ. | Շուշաւէր. |
| Շամշ. | Շամշուլդայ, |
| Սաղ. | Սաղիան, |
| Քար. | Քարվանսարայ. |

Իսկ նոքա, որոնք այս նշաններից ոչ մէկը չ'ունին, բոլորը հաղորդուած են Տ Փ Խ Ւ Խ ց:

Վերջացնում ենք մեր խօսքերը, աւելացնելով որ այս գործի յաջողութիւնը և կատարելութիւնը կախուած է լաւ օգնականներից: Մեզ նիւթ հաղորդողը ինքը պէտքէ լաւ հետախուզի և լաւ ծանօթ պէտքէ լինի տեղին: Նա չ'պէտքէ գրի ամեն պատահած նախապաշարութիւնը լաւ ըմբռնելու նորա էութիւնը: Այդ է պատճառը, որ մեր գրքի մէջ միքանի տեղ յայտնի չէ պատճառը, որ ինչո՞ւ այս-ինչ բանը, ոյս-ինչ ժամանակ, այս-ինչ մարթէ դուն արգելվումէ կամ առաջարկվում է անել . . . : Այդ պիսի նախապաշարութիւնների վերջը դրել ենք հարցական(?) նշաններ. և նոքա բոլորը ն են:

Մէջ նիւթ հաղորդողն ին յայտնելով նէ ի հրապարական շնորհական լուսականը, յոյս ունենք, որ՝ կարդալով մեր «ՆԱԽՈՊԱԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ» ՆԱՐՄՈՒՆՔՆԵՐ նոքա կ'ուղարկեն մեղ առաւել լաւ կարգաւորած նիւթեր, աշքի առաջ ունենալով մեր գրքում մացրած դաստորսութիւնը:



ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

727

I ԱՐԵՒ.

1. Չմեռը, անդրանիկ որդին տան գոնից կարմիր թել է կախ անում, որ ամբողջ օրը արև լինի: (Սաղ.)
2. Արեւը, ասում են, կարող է անիծել մարգու:
3. Արեւի մայր-մանելուց յետոյ տուն չեն աւելում, աղբ չեն գուրս ածում: Որովհետեւ ալլը գուրս ածել այդ ժամանակը, նշանակում է, ածել արեւի երեսին: Աւելողը սաստիկ կ'հիւանդանայ. իսկ առողջանալու համար նա պէտք է լրւանայ իւր երեսը այն ջրով, որով արեւը լուանում է իւր երեսը: (2.)

1 Սորա մասին պատմում են:- Օրը տարաժամել էր, և մի աղջիկ, որ գեռ չէր վերջացրել քարգահի կարը, արեւին ասում է. «Արեգակ, մէր չմտնեմ, ընչկի էս պակասն էլ թամացնեմ պրծնեմ», իսկ արեգակն անիծել է նորան. «Բար դառնաս դու տեղն ու տեղդ. մնիրաւ, չես տեսնում, ինչթաւոր դարձած եմո». Եւ աղջիկը քար է դառնում իւր քարգահի պաշը նատած:

(2) Պատմում են:- Մէկ աղջիկ, արեւի մայր մտնելուց յետոյ, տունն աւելի է և աղջը գուրս ածել, փոքր ժամանակից յետոյ նա հիւանդացել է և մեռել: Ցերեկը, արեւի մօտ մերենս լինելով, մեռած է լինում. զիշերը կենդանի: Այս ցաւին դարման տանելու համար նորա հայրը հագնաւմ է երկաթեայ տրեխներ, առնում է երկաթեայ զաւազանը և ճանապարհ է ընկնում արեւի բնակարանը գտնելու համար, որ ինդիրի այն ջրից, որով արեւը լուանում է իւր երեսը: Ասում են. զեռ այս օր էլ նա շարունակում է իւր ճանապարհորդութիւնը, և չէ կարողանում գտնել արեւի բնակարանը:

Առեւ ծագելը և հայր հանիլը բայտարում էն հետեւ էնդրով
 4. Երբ արել հայր է հանում, նշանակում է գնում է
 քնում իւր մօր ծոցում: Խոկ ցերեկը կրկին բարձրանում է
 ծովի երեսովը. նորա մայրը նստած է երկրի միւս ծայրում:
 ծովի ափումը: (Նամշ.)

5. Առեւ կատարում բայտարում էն այսպէս.-
 5. Արծում են, թէ սատանաները ստուերարկում են
 արելի երեսը:

6. Առաւօտը վաղ զարթում է արել. բայց տեսնելով,
 որ մարդիկ հեռացել են արդարութեան ձանապարհից,
 նա սաստիկ բարկանում է, արինը գլուխն է ընկնում և
 խաւարում է:

7. Կատ մօտ լինելով Արարիային և սաստիկ այրելով
 Արաբներին, վերջապէս արել սաստիկ մօտենում է նոցավ
 իսկ նոքա բարկութիւնից այնքան փշերով և շամփուրներո.
 իսկ նոքա բարկութիւնից այնքան փշերով և շամփուրներո.
 առանում է նոցանից և խաւարում:

8. Ասում են. արել և լուսինը քոյր ու եղբայր են:
 (1) (passim)

(1) Մէկ օր արեգակը խմոր հունցելիս է եղել և լուսինը
 հեաը խօսելով ասել է. «Դու ցերեկն ես լուս տալիս և վրեժ
 մարիկուողի աչքերը ծակձըկում ես. Ես գիշերն եմ լուս
 տալիս ու աչքեր չեմ ծակձըկում» Արել, լսելով իւր եղբօրից
 այս խօսքերը, շատ նեղացել է և խմորու ձեռքով ապտակ
 է զարկել նորա երեսին: Դեռ այսօր-էլ մնում են լուսնի
 երեսին այն հարուածի հետքերը, նորա վերայ երեսող բծերը.

II. ԼՈՒԾԻՆ.

1. Առոր ծնուած լուսնին (ծնունդ լուսնի) ցոյց են տա-
 լիս մի ոսկեղէն կամ արծաթեղէն բան, բերանով ծվծվաց-
 նելով դէպի լուսինը, որ ամբողջ ամիս ոսկի կամ արծաթ
 շատ ունենան, հարուստ լինին: (passim)

2. Առոր լուսնին աշխատում են փակ բերանով պատահել,
 որ ամբողջ ամիսը հաց սակաւ ուտեն:

3. Առոր լուսինն առաջն անգամ տեսնելիս ծնողները
 համբուրում են անդրանիկ որդուն, որ նա երկար կեանք
 ունենայ:

4. Դեռ նայում են մի բաղտաւոր մարգու երեսին, յե-
 տոյ նորածին լուսնին, որ բաղտաւոր լինին:

5. Ովնոր լուսինն առաջն անգամ բաղմութեան մի-
 ջեց է տեսնում, ասում են, ամբողջ ամիսը նա այդ բազ-
 մութեան չափ հիւրեր կ'ունենայ:

6. Եթէ մէկը պատահմամբ բաց բերանով է տեսնում
 նոր լուսինը, այդ ամսում նա հաց շատ կ'ուտի. որովհետեւ
 բաց բերանը հացի կարօտութեան նշան է:

7. Առաջին անգամ նոր լուսին տեսնելիս՝ աղջեկը մի
 մազ է քաղում իւր գլխեց, որ մազերը չ'թափուեն, չպա-
 կասեն:

8. Կինը կամ սողջիկը, որ առաջն անգամ տեսնում է
 նոր լուսինը, իսկոյն կզում է գետնին և երեք անգամ
 կրկնում:

« Նոր լուսինը շնչաւոր,

« Դուն թագաւոր, ես մեղաւոր.

« Նստած՝ բանիս բարաքաթ,

« Կանգնած՝ ջանիս հարաքաթ: »

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

I. ԲՈՅԱՐ.

1. Երբ մի ծառ գովումեն նորա առաստ պտղաբերութեան համար, ծառի տէրը ծածուկ թքում է ծառի վերայ, որ նորան աչք չդիպչի:
2. Ծաղկաղարդին եկեղեցում բաժանած ուռը պահում են ալեւրի ջվալի մջ, որ ալեւրն ամենևն չպակասի:
3. Ով ցանկանում է մէկի սէրը զրաւել իւր վերայ, նա իւր ծոցումը լոշտակի տերեւ է պահում: (1)
4. Սոխը կորատելիս մի սոխ ցցում են դանակի ծայրին, որ միւս սոխերը կորցնեն իւրանց կծուութիւնը և չվնասեն աչքերին:

5. Ջահիլ աղջկան արգելում են սոխ ուտելը, որ նորա ծծերը շուտ չմեծանան: (Փար.)

6. Ախտորը մարդու ձեռքին չեն տալիս, որ ստացովը հարինք չընկնի. այլ ցած են դնում, որ նա վեր առնի:

(1) Լօշտակի մասին պատմում են հետեւալիք: Անպոչ-ձգնաւորը մի փոքրաւոր ունէր լօշտականուվ: Մէկ անդամ ճգնաւորը քնած է լինում: Լօշտակը կանթեղի ձիթով թրջում է նորա մօրուքը և վառում: Ճգնաւորն իսկոյն զարթում է և, նորան անիծելով ասում է. «գետինը մտնեսո»: Լօշտակը տեղնիտեղը գետինն է մտնում: Բայց դեռ բոլորովին գետինը չմտած՝ նա մի բան է ինպարում ճգնաւորից: Ճգնաւորը համաձայնում է տալ և ասում է. «Ով քեզ եօթը թզաչափ համաձայնում է տալ և ասում է. «Ով քեզ եօթը թզաչափ իսորութեան մէջ կդանի ու կհանի, թող նա մտնի քա փոխանակի: Այսուամենայնիւ, գետինից դուրս զալով դու չես կինդանակի: Միայն ամեն տեսակ հիւանդառթեան դեղ կլինես, Աթէ նանաւ, միայն ամեն տեսակ հիւանդառթեան դեղ կլինես, Աթէ քեզից կտրեն այն մասը, որի մէջ ցաւ է գոյում հիւանդը

II. ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ.

1. ԶՈՐՔՈՑԱՆԻՆԵՐ.

- Ա. 1. Կովի կաթը տաքացնելիս մէջը մի փոքրը շուր են խառնում, որ կովի ծծերը չցամաքեն:
2. Կովը կթելիս նորա միջքին դնում են նախրատարի գտակը, որ կովի կաթն առատանայ: (Գուռնիկ)
3. Ուր կովի ծծերու չվերքուուին, դրացին նորա կաթից պատրաստած մածունն ուտելուց յետոյ կծուճը չելուանում: այլ մէջը բամպակի կամ աղի կոոր է դնում և վերագարձնում է տիրոջը:
4. Ասր ծնուած երինջի (էգ հորիժ) վզեց կոտրած գդալի գլուխ են կախանում, որ նորան աչք չդիպչի:
5. Այն հորթը, որի ճակատին լրտանձնել նշան կայ, ասում են, նա այն պատճառով ունի այդ նշանը, որ նորա մայրը յղութեան ժամանակ նոր լուսին է տեսել:
- Բ. 6. Զի:— Երբ նոր գնած ձին կամ մէկ ուրիշ կենդանի տուն են տանում՝ տէրը նորա ճակատին մի ձու է կոտրում: որ նորան աչք չդիպչի: (Ծուլ.)

Կ ուտեցնեն նորան, նա կառողանայու Սորանից յետոյ Լօշտակը գետինն է մտնում Լօշտակի արմատը հազրագիւտ է, և, չնայելով, որ այդ բոյսի հանելը վտանդաւոր է, գիւղացիք գտնում են նորան հիւանդի համար: Բայց վախենալով, որ ենթարկուեն ճղնաւորի դրած պատճին, նոքա արմատից չեն հանում այդ բոյսը: Այլ փորում են մինչև ոտները. մի շուն եօթն, որ քաղցած են պահում: Եերբ նա յետին թելն է ընկնում, նորա վիզը թոկ են գցում և կապում են Լօշտակի գըլ-խից: Ես գունը դուրս է գջլում բոյսը և ինքը սատակում է, ենթարկուելով ճղնաւորի սնէծքին:

7. Զիու նորածին ձագը զցում են իւր մօր վերայ, որ
կայտառ լինի:

8. Սատակած ձիու տէրը իւր ձիու գէշը որիշի ձիա-
ներով է տանել-տալիս, որ միւս ձիաներն էլ շուտ չսա-
տակին:

9. Տան սեմի տակը թաղում են սատակած ձիու որմ-
բակը, որ այդ տունը ազատ լինի ամեն տեսակ տարա-
փոխիկ հիւանդութիւններից:

Գ. 10. ԿԱՏՈՒ: — Ասում են՝ կատուն Քրիստոսի ձեռի
աղլուխն (թաշկինակ) է: (1)

11. Բարեկամ բարեկամի կատու չի տալիս, որ իւրեանց
մջ ատելութիւն չ'ծագի. Երեխ այն պատճառով, որ
կատուները շուտ կովում են միմւանց հետ:

12. Երբ կատուն քողում է իւր յեաին թաթը, ասում
են, անձրե կ'գայ:

13. Մինչև իւր ձագերի մեծացնելը կատուն եօթ տեղ
է փոխում աւելի ազահով լինելու համար: Այդ տեղա-
փոխութիւնը, ասում են, նորա ձագերի մլրտութեան
խորհուրդն ունի:

14. Եշբ կատուն երեսը սրբում — լուանում է, հիւր կ'գայ:

15. Մի անից միւսը տեղափոխուելու ժամանակ վարձա-
բնակը նոր տան կրակարանում լուանում է իւր կատուի
թաթերը, որ սովորի նոր տանը, չկորչի:

16. Մեւ, աննշան (անբիծ) կատուի դունչը աչքացաւ:

(1) Դորա մասին պատմում են: Մէկ անգամ, Քրիստոս եւ Յահանար խօսում է ինդրախտումը Յանկարձ, նոցա առաջնից ու մուկ է վաղում: Որովհետ կատու չկար, որ մուկը բանէր, ու Քրիստոս իւր թաշկինակը զցում է մկան ետելից: Իսկոյն թաշկինակը կատու է դառնում, բռնում է մուկը և փափացնաւմ է:

ունեցողը քսում է իւր աչքերին, որ աչքերն առողջա-
նան:

17. Կատու սպանողը այդ մեղքից ազատուելու համար
պէտքէ եօթը եկեղեցի շինի: Կամ գորա փոխարէն նա
գետի ափումը, եօթը տեղ երկ- երկու քար է կանգնաց-
նում միմեանց գէմ դրած, որպէս թէ շինել է եօթ եկե-
ղեցի:

Դ. 18. ՇՈՒՆ: — Շան ունակը, ասում են, կոիւ է գու-
շակում (1)

19. Շան ունակը նոյնպէս տանաիրոջ մահն է գուշա-
կում, ուստի նորա աչքերը կապում են և մէկ անձանօթ
տեղ կորցնում (passim)

20. Երբ շունը ձգձգում է, տէրը փող ստանակը յօյս
է կապում:

21. Եթէ շունը պառկելիս զլուխն ուղղում է դէպի
տան գուռը, տանու կենդանիներից մէկը կ'սատակի: (Նուլ.)

Ե. 22. ԳԱՑԼ: — Գայլի բռնած կենդանու մնից չ'են ու-
տեցնում երեխային, որ նա գայլի պէս ագահ և անյագ
չ'լինի:

(1) Ով ուզում է շուն սպանել, առաջ այդ դիտաւորութիւ-
նը մի կերպով հասկացնում է նորան: Շան մասին պատմում
են: Նոյի որդիկերանցից մէկը դարբին էր: Որովհետ նա ու-
նելիք չունէր, եռացըրած երկաթը ձեռով էր բռնում և ձեռ-
ներն այրում: Մէկ օր նորա «կետօ» անունով շունը Ասու-
ծու հրամանով գնում նստում է նորա առաջեր և ուները մի-
միանց վերայ խաչաձև դնելով բռնում է հացը: Դարբինը,
այս տեսնելով, այդ ձեռով մի զործիք է շինում, ունելիքը: և
ազատվում է ձեռները այրելուց: Շանը շատ կարելի է տես-
նել այդ դրութեան մէջ. Երբ նա մի տեղ պառկում է, սովո-
րաբար ստները միմիանց վերայ է դարսում:

23. Երբ անձրեւային օրը փայլում է արևը, ասում են, ու պայլը արու որդի է ծնում։

24. —Մկան կրծած գիրքը անխնայ այրաւմ են, որով հետև, ասում են, նորա միջի գրուածքը հածելի չէ Աստուծուն։ (Քար.) (1)

ԹՌՉՈՒՆՆԵՐ.

Ա. 1. ՀԱՅ և ԱՔԱԴԱԴ. — Համեմ ընտելացնելու համար երեք անգամ թքում են նորա բերանում և յիտոյ բաց թողնում սրահում։ (Ամրական սրահում պատռա առաջ) 2. Վիւրակէ օրը հաւը թուխս չեն նստեցնում որ ձագերը արու լինին։

3. Միենոյն պատճառով՝ տղամարդին է թուխս նստեցնում հաւը։

4. Ով կնքահայր չէ եղած, նա հաւ չե մորթում։ (?)

5. Եթէ մորթած հաւն ուշ է հանգստանում, ասում են մորթողը ծանր չէ։

6. Մորթած հաւի փորում եղած մանր ձուիկները անպատճերը չեն ուտում, որ հարսանիքի գիշերը շգեգ։ Նին այդ ձուաների նման։

7. Քառասնօրեայ վառիկները կուվում են միմեանց հետ։ Այդ կախն ընդունում են իրեն նոցա մկրտութիւն։ և յետյ նոցա գործ են ածում կերակրի մեջ։

8. Երբ հաւը կանչում է աքաղաղի պէս, այդ դուշակում է իւր տիրոջ մահը, ուստի նորան շուտով մորթում են։

9. Կարծում են թէ աքաղաղն այն պատճառով է կանչում, որ լսում է երկնքի զանգերի ձայնը։

(1) Ասում են՝ մուկն առաջ թռչուն էր Երբ Առառած կար մեցաւ սահմանի պատժել Փարաւոն թագաւորին, Կարեց այդ թռչունի թիւերը և մուկ շինեց նորան։

10. Նորա կանչելը բակուկասութիւն են համարում Աստուծուածու թէ Պետրոս Առաքեալի, թէ ամեն մարդու համար։

11. Երեկոյին կանչող աքաղաղը վտանգ է գուշակում։ Աւստի նորան գրհում են որ և է սուրբի։

12. Եթէ երեք անգամ դանակ քսելով չի կտրվում աքաղաղի վեցը, չորրորդ անգամ քսելը մեղք համարելով էլ չեն մորթում։ (Քար.)

13. Երբ պատահմամբ աքաղաղը վայրէ ընկնում տան երդկից, այդ դուշակում է կամ հրարի դալը, եթէ աքաղաղը կանգնելով նայում է դռան դիմացի պատին. կամ ընտանիքից մէկի ճանապարհարգելը, եթէ նայում է դէպի դուռը։

14. Եթէ աքաղաղը կանչում է դռան սեմի վերայ կանգնած՝ տղայ հիւր կդայ այդ տունը. իսկ եթէ սենեակում, կին հիւր։

15. Երբ աքաղաղի թևի փետուրները դուրս են ցցվում, զրահաւորւած հիւր կդայ։

16. Գրաբնանը նորեկ ծիծեռնակին աշխատում էն կուշա փորով հանդիպել։ (?)

17. Ցաջողութիւն չի լինի այն տանը, ուր բայն է շինել ծիծեռնակը. որովհետեւ երեխաները կիւաղան բնի հետ, կքանգին. և ծիծեռնակը կ'անիծի նորանց։

18. Շղանի սպանելը մեղք է համարվում։ Որովհետեւ նոյ նահապետը նորա բերանի ծիւղով աւետիս ստացաւ և միւնցն ծիւղը աղաւնին Գաբրիէլ հրեշտակապետի հետ ընծայ տարաւ Մարիամին աւետիս տալու։ (Քար.)

19. Երբ կաշաղակը կը կը չում է ծառի վերայ, ասում են, հիւր կդայ. անգամ տան տիկինը կանգնում է փլաւքամին ձեռին, սպասելով հիւրին։ (Եր.)

20. Տեսնելով դռան մօա նստած կաշաղակին, որ կը կը չում է, տան տէրը երեք անգամ կը կնում է. Թէ իւր

ես, տեղի փոխի, թէ շառ ես, տեղի կանգնի՛ յուսալով,
որ եթէ նա տեղը փոխի, նորա տունը ճանապարհորդ կը-
մոնի՛ (նր.)

21. Առաւօտը ագռաւի ձայն լողը նեղութեան ձայն
կըի (1.)

22. Անձեղի ձայն լողը բարի լուր կ'ստանայ: (Ծուլ.)

23. Տարուայ մէջ առաջին անգամ ուրուր տեսնողը մի
թել է կապ գցում, որ ուրուրը չ'մնասի իւր՝ տանու
թռչուններին:

24. Առաւօտը, անօթի, յօպոպի կամ կկուի ձայն լը-
սողն ամբողջ տարին վնասների մէջ կ'լինի: Իսկ եթէ հաց

(1) Ագռաւի վելոյ ժողովորի բերանում երգվումէ
հետեւել երգը:

Եկուան էկաւ կղկղաց, Ես էլ ձեզ պէս մի մարդ ՚ի
Աղբանոցսւմ քըջքաց, Մահկանացու, մհացու,
իրա պատիժն ստացած՝ Փոխանակ ես էս ասելու՝
Կոկուալով ասաց. — Ասի, «Ադամի, տապանդ մաշխ՝
Վակարից իմ հնաձն հալը, Խեղճ Ադամը հիմի էլ
Պշերից իմ անթալաշը. Տանջում ա, մաշխ...»
Մարդկերանցից իմ աֆալը Քարը իսկի չի մաշխիլ,
Անրծուած ա իմ մաշը. Եթէ Աստօծ չի օդնիլ: —
Երբ որ զըկեց Աստօծը Դրա հմար ինձ Աստուած
Ինձ Ադամի ծոցը. Մարդս ակռաւ շինած,
Որ ասեմ. Ադամի, մաշի. Գիշակեր: — Նա ինձ ասեց, —
Պատունգ ու դրւս արի, — Միշտ անիծեալ մնաս:
Կոկուալով մեռնիս. գերեզմանն դու չմոնիս,
Չուդ բողազովդ վեր գցիս.
Քեզ սպանողի մեղքին թողութիւն եմ տալիս:

կերած է լուսմ նոցա ձայնը, ասում է. «Ես ախտեցի քեզ,
և յօյս ոնի, որ տարին անվնաս կ'անցնի իւր համար:

25. Յօպոպի թեկի փետուրները պահում են շորերում,
որ տօտծն ամեն մարդու մօտ յարգ ունենայ, խօսէ դու-
գայ: (1.)

26. Ով գլխացաւ ունի, երեք անգամ յօպոպը պտտեց-
նում է իւր գլխովը, որ ցաւը դադարի:

3. ՍՈԼՈՒՆՆԵՐ.

Ա. 1. 0Զ: — Տարուայ մէջ առաջին անգամ օձ տեսնողն
ասում է. «Դիխացաւ քեզ», որ ամբողջ տարին գլխացաւ
չ'ունենայ: (Սաղ.)

2. Նորերի մէջ օչի շողին են պահում, որ ոչինչ բանից
չ'վախենան:

3. Միենոյն նպատակով կուլ են տալիս օձի շապիկը:
(passim)

4. Օձի շապիկը աչքերին են քսում, որ աչքացաւ
չ'ստանան:

5. Գանդատողը գրապանում օձի շապիկ է պահում, որ
դատաւորի առաջև այնպէս ճարտար և իմաստնաբար
խօսի, ինչպէս իմաստուն է օձը:

6. Այն օձը, — որ բնակվում է տան առաստաղում և
ոչոքի չի վնասում, ասում են, բարի հրեշտակ է օձի կեր-
պարանկով:

(1) Պատմում են, թէ յօպոպը մի համեստ հարս է լինում:
Մէկ անգամ, երբ նա իւր գլուխը սանրում էր, ներս է մըտ-
նում նորասկեսրայրը, Հարսը ամօթից չի կարողանում երևիլ
նորա մօտ. ուստի ինդրում է Աստծուն, որ ինքը թռչուն
գառնայ և թռչի: Այնպէս էլ լինում է: Դեռ այսօր էլ յօպո-
պի գլխին մնում է այն սանրը:

Բ. 8. ՄՈՂԵՍ: — Ով որքան մողէս է սպանում, ատում են,
այնքան տարի՞ կ'աւելանայ նորա կեանքին:

9. Զատիկկ երկուշաբթի օրը քաբափում, մողէսների ըլ-ների առաջև շաքարի կտորներ են՝ դնում, մի բան խնդրե-լով։ Աթէ մողէսը շաքարի կառը դէպի բունն է քաշում, — խնդիրը կ'կատարուի։ Եթէ ոչ. չի կատարուի:

միանած չե նարսն միջառ զի լուսպան զ0 . 1 . 11
սոցակի միջառ հրովար դր օրոց սարգակի ք և նառա
բինայ շիցո դր նառայ մի թիրոց քի զի պարկուն . 2
սոցակի միջառ և լուսպան զ0 . 2 . 11
ուղիւնուց մի սայս և լուս խթանարան մըմէմԱ . 3
սոցակի դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 3 .
դր նառա դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 4
դր նառա դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 5
դր նառա դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 6
դր նառա դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 7
դր նառա դր նառա մի սոցակի զի լուսպան զ0 . 8

Առաջի է սպան տակու ին զրաբու ԱՅ ու Նահանջ (1) առաջ է արձ ով առան դժբախ ով ու զա զա Ամրատ թԱ ազ Խամարդոսի ով պիտին զայա ուղարկութիւն առա Խամ մարդու զա ու առանս է Խոյրու զայա ու ու ազ օրու է զայա ու ու առան է Խոյր է սպաբ ուղաք և զայա ու զայա

ԵՐԱՐԴ ՀԵՏՈ.

ՄԱՐԴ

Յա ուս գլուխութեաց զամարտասր Առաջնաժողովը դրէ .
ոչ չ Խառսութեա մուշտացար բժիշտու մէ ծառքական
(ուստաք) լրաց մի ազգութեա բայց ոչչ որ պահ մասի մէն
- բ. Եթէ վեսան կամ Հարսը տկարութիւն ունի, -իւր թէի
տակը աթար է պահում Նկեղեցուց դուրս գալիս, Ճա-
նապարհին նա մի կողմն է նետում աթարը, յուսալով, օր-
իւր տկարութիւնն-էլ հետք կ' վեա:

2. Եշեղեցին մասնելիս հարսը բռնած է ունենում փեսայի վերարկությօց և նոքա ո՛չ ոքի չեն թողնում իւրեանց միջովն անցնելու, որ հարսը քառասունքոտ չլինի։ (†)

Յարմագուին տալիս են երմք կտոր
շաքար, որոնցից մէկը նա գցում է չորս, խաչաձև ճանա-
պարհի վերայ. որ աղաս մնայ շարերի հարուածից. եր-
կրորդը՝ եկեղեցում, որ խաչը ողորմի նորան, և երրորդը՝
փեսայի տանը, որ այնուեղ քալքը աչքով նայեն նորա
վերայ:

4. Պատկի գիշերը աղջկելքը խփում են սորահարսի գըլ-
խին, ասելով. «Քու ջրից ինձ վրայ. Էլ կաթիւոր իւրեանք-
էլ շուտով պսակուին» (passim).

(1) Պատկի գիշերուանից մինչև 40օր և առաջին որդէծնուն
թիւնից մինչև 40 օր՝ նորապատկ և ծննդական կինը վտանգի
ենթարկուելու երկիւղի մէջն է։ Այդ օրերում պատահած առ-
բարաղատութեան հետեւանքը քառասունքակոյն է առ-
ւում,

5. Պատկի կարգը կատարելու ժամանակ զգուշանում են, որ թագը չ'թէքուի պահկուղների գլխին: Որովհետև դիմէկի գլխին թէքուած թագը գուշակում է միւսի վաղահամար:

6. Երբ եկեղեցում պահկուղները գլուխ-գլխի տուած կանգնած են՝ նոցանից իւրաքանչեւրն աշխատում է կոկուածի ուոր, որ ինքը իշխող լինի նորա վերայ: (passim)

7. Պատկի կարգը կատարելիս, փեսայի կամ հարսի աղականներից մի կին մի կտոր փայտ ձեռքին տաշում է, ասելով, «Ըսէնց թող տաշուին ևս փահկուղների վրէն վաղ խօսողները, ու ըսէնց չ'քանան սրանց վեայ արած ջորուհու» (թալիսմ):

8. Եթէ միենան եկեղեցին ներս են մտնում օքրից պահկուղներ, այդ վերջիններին արգելում են մանել: Եթէ ուստառաջին պահկուղները այդ օքրից մինչև եօթ տարի մնորդի կ'մնան:

9. Պատկի կարգը կատարելիս փեսայի կամ հարսի թըշ նամիններից մէկը կապ է գցում թելը, փակում է բաց կողպէքը, ծալում է բաց դանակը, որ հարսը քառասրըն քակու (քառասունքոտ) լինի:

10. Ամէ՛թ թշնամին հարսի ոտնամաններում ցորեն է թափում, որ նա օքրի չքերի, և նա այնքան տարի օքրի չքերիւ որքան ցորեն է թափել թշնամին: (Սղ.)

11. «Կան գիշերը պահկուղի տանը կողպում են կողմէքը. իսկ բանալին դնում են նորա գրպանը, -որ նորան չարը չ'խիթի:

12. Եթէ պահկուղը հիւանդ է, նորա ոտների տակը յուղունքներ են թափում, որ հիւանդութիւնը յուղունքների հետ պահկուի, այսինքն իւրեանից հեռանայ:

13. Պատկի գիշերը հարսնացուն ձեռքում պահում է

հայելիք դեշից և մեղրամնմից շինած խառնուրդը, որ փեսայի տանը իւր վերայ ոչոք իշխանութիւն չ'գործ դնի:

14. Եթէ, պատկի գիշերը, փեսան է կարմրում, աշանակում է առաջնի որդին արու կ'լինի. իսկ եթէ հարսը, էգ:

15. Որ անդրանիկ որդին արու լինի, պատկի գիշերը հարսի գտնում դնում են հայելիք կտոր, որի մէջ նանյում է դէպի փեսայի տունը:

16. Հալաւն օրհնելու ժամանակ հարսը միշտ փեսայի ճակատին է նայում, որ փեսան յարգի նորտն և սիրի, որքան սիրում է իւր անձը:

17. Պատկի կարգը կատարելուց յետոյ, եկեղեցուց գուրտ գալիս, հարսը նայում է դէպի երկնքք. որովհետև այդ ժամանակ բաց են նորա համար երկնքի գռները, և ինչ այդ բոտէին, խնդրի, կ'կատարուի:

18. Երբ նորապսակներն անցնում են հոսող ջրի վերայից կամ կոխում են, դւան սեմը, խաչեղայրը սուրբ բանում է նոցա գլխների վերելը, որ նոքա աղատուին չարուածից: (passim)

19. Իսկ եթէ Ճանապարհին նոցա որ և է կենդանի է պատահում, նոքա այդ կենդանու բնաւորութիւնը կըստանան: (Սղ.)

20. Եկեղեցուց տուն վերադառնալիս փեսայի տան սեմք վերայ դրուած է լինում մէկ ափաէ, որ կոտրում է փեսան իւր ոտի հարուածով, -որպէս զի այդպէս փշըուին նորա ոտի տակը բոլը գալոց չար պատահարները:

21. Երբ փեսացուին ցոյց են տալիս հարսնացուն, այդ վերջինի ծոցումը հայելիք կտոր են դնում. իսկ գլխազարդի առակը, մի կտոր շաքար, -որ աղջիկը տղայի աչքերում երեւայ փայլուն, ինչպէս հայելին ևքաղցր՝ ինչպէս շաքարը:

22. Նշանադրուած աղջկայ օժիառումը կօշիկներ և մեթել չեն տալիս, որ նորափեսան շուտ չմեռնի: Արսիչեաւ սե գյոնը առհասարակ սկի նշան է:

23. Մինչ պսակի օրը, նշանուած երիտասարդը գուլպայի ծուպը ոտին չի փաթաթում, որ այդպէս չկապուի, չխախտուի իւր ունեցած սէրը գէպի նշանուածը: (Քար.)

24. Միւնոյն նպատակով աղջիկը մայր չի գցում իւր կօձակները: (Քար.)

25. Եթէ նշանուած երիտասարդը տկարանում է իւր նշանած աղջկայ սիրուցը, նորան այդ զրութիւնից հոնելու համար՝ լուանում են աղջկայ ձեռները, և ձեռնաուցի ջուրը ծածուկ խմեցնում են փեսացուին:

26. Փեսացուն միրգ է ուղարկում հարսնացուի տունը: Հարսնացուն չի ուտում այդ մրցից մինչեւ պսակուիլը, որ առելի չլինի իւր սկեսրին:

27. Նորապսակների հարսանիքի շորերում ասեղներ են ցցում, որ սատանաները չգովանան շորերը:

28. Հարսանիքի գիշերը, փեսայի գոտիկը կապելիս՝ նա երեք կոլում է գծոտիկի ծայրը, որ այդպէս ոտնակու լինեն իւր թշնամիները:

29. Հարսնացուին բալուաւորելու համար՝ նորա հարս սանեկան գոտին մի բալուաւոր երիտասարդ է կապում նորա միջընին:

30. Հարսի մնից յետ բերած հացը փեսայի տանը բաժանում են ամուրիներին և կոյսերին, նորա էլ ուտում են, որ արժանան այդ օրին:

31. Պսակի առաջին գիշերը, ջրամանը ջում լինում են և դնում են նորապսակների բարձի տակը, որ նորա ջրի պէս երկար կեանք վայելեն:

32. Մի տարուայ պսակուած տղամարդը ծառ չի տրն-

կում, որ կամ ծառը կամ ինքն անպատճ չմնայ:

33. Պսակի առաջին երեք օրերը նորահարսը միս չի ուտում, որ ուրիշներն էլ իւր մրց չուտին, չբամբասեն:

34. Պսակի գիշերը, երբ հարսնացուն դուրս է դալիս հայրական տնից, յետ չի նայում, որ հօդոն տանը մահ չպատճէիր աղաւ մեզը վիճակը դրանուած լուսականը:

35. Նորապսակների գլխներից թագերը վերառնելուց յետոյ՝ օրհնած գինին տալիս են կոյս տղաներին և աղջկերանցը, որ խմեն և իւրեանք էլ պսակի արժանան:

36. Թագերը վերառնելուց յեւայ պահանամ են այնպիսի տեղ, որ նորապսակները չկարողանան առենել հակառակ պակ գեղուածում նորա շուտ կմեռնեն:

37. Այս լէաքը, որ պսակի գիշերը ծածկել էր նորա հարսը, կրիին ինքը պէտք է ոմաշի, եթէ ոչ իւսան շուտ կմեռնի:

38. Իւր ծնողներին այցելութիւն անելուց յետոյ՝ նորա բաժարսը նոցա շնարհակալութիւն չի անում, որ այդ նորա վերջին այցելութիւնը չլինի:

39. Նորահարսին, քառասունքի մէջ, խստի արգելու են գետնին ջուր թափել երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակէ երկուները որ շարը չ'խփի նորան:

40. Գիշերը, ջաւք բերելու գնալիս, նորահարսը հետը մէկ ածխակոթ է տանում: Դեռ սափորը չլորած նա ածխակոթը ջուրն է զցում, այն գիտաւորութիւնով, որ ածխակոթը ջրի մէջ թրշալով չարերը վախինան և փախ չեն: (Քար.)

41. Կա միւնոյնն է անումնա և ջրաղացի մօտից ջուրը բերելիս միայն այս գիպուածումը ածխակոթը ջրաղացին է թողնում: (Քար.)



42. Որ նորափեսան ուժեղ տղամարդ լինի՝ երիտասարդ՝
ները նորան ձնագունտ են խփում։ (Քար.) (1)

43. Նորապսակների խաչեղբայրը լինելու է նոցա կըն-
քահայրը։ Հսելով, որ նոցա անդրանիկ որդին աղջիկ է,
նա հրաժարվում է կնքահայր լինելուց։ Եթէ ոչ՝ հան-
դերձեալ աշխարհում գորտերը կ'կեղեքեն նորա դեմքը։—

2. ՅՂ ՈՒԹԻՒՆ.

Ա. 1. Յղի կինը հաւը թուխս չի նստեցնում, որով-
հետեւ եթէ զանցառութեան տայ այս զգուշութիւնը,
կամ ձուաներից ձագեր չ'են դուրս գալ, կամ իւր արդանդը
կ'աւերուի։

2. Յղի կինը չի ուտում եփած հաւի ոտները այն մըտ-
քով, որ երեխան, կաթը ծծելիս չ'կեղեքի մօր սոխնքը։ (2)

(1) Մինչև մեծ-պասի երկուշաբթի օրը, նորափեսան չի երե-
սում գիւղի հասարակութեան մէջ, այլ իւր գործերը կատա-
րում է առանձին։ Մեծ պասի առաջին երկուշաբթի օրը նո-
րափեսան (թող առունը «Գրիգոր» լինի) դուռը փակում է ե-
թագնվում է առնը։

Գիւղացի երիտասարդները հաւաքվում են նորա դաների
մօտ և հարցնում։ «Գրիգոր տանն ա», — Տանն ա, համա կա-
րաւ չի դուրս կեայ» պատասխանում են ներսից։ — «Չէ. չի-
ըմի, պատի դուրս կեայ» աղաղակում են դրսից թետոյ նորա-
փեսան ներսից ձայնէ տալիս։» Ախաբէր դուս կըեամ. մի
չարէք գինի կառնեմ. համա ինձ չթակէք»։ Այս ասելով, նա
դուրս է գալիս, առնում է գինին, երիտասարդները խմում
են. և վերջը՝ պատրաստած ձնագնտերը խփում են նորան
ամեն կողմից։

(2) Գուցէ այն պատճառով, որ եփուած հաւի ոտը բալորովին
նման է երեխայի փոքրիկ ձեռին, երբ նա բանում է մօր
ժիծը։

3. Նա չի ուտում գոմէշի միսը, որ երեխան 10 տմիս
չ'մայ արգանդում։ Իսկ եթէ պատահմամբ կերել է, նա
երեք անգամ անց է կենում կանգնած գոմէշի տակից։

4. Նա աղ չի գնում նոր պանիրը, չի թթուեցնում կա-
ղամբը, ներկ չի շինում, որ անվաս կերպով որդի ծնի։

5. Նա չի կանգնում մորթուող ոչխարի մօա, որ երե-
խան կոկորդացաւ չ'ունենայ, չ'իրխուայ մորթուող ոչխարի
պէս։

6. Յղի կինը ցորեն չի խարբարում, որ երեխան վերքոս
չ'լինի։

7. Բայց եթէ նա սախոված է խարբալել, գեռ եօթ
հատիկ ցորեն դէն է գցում, յետոյ սկսում է գործը։

8. Նա ծամուակ չի ծամում, որ երեխան փորացաւ
չ'ունենայ։

9. Նա չի նստում ջվալի վերայ։ Հակառակ գիսուա-
ծում նորա ցաւն այնքան սաստիկ կ'լինի, որքան մեծ է
ջվալը։

10. Եկեղեցւմ ողջոյն տալու ժամանակի, յղի կինը ող-
ջոյն առնում է. բայց ուրիշն ողջոյն չի տալիս։ (?)

11. Երբ յայտնվում է, որ յղի կինը տկարացել է որ-
դէծութեան պատճառով, միայն իննամսեայ ժամանակ-
միջոցից վազ, որ նշանակում է, թէ ինչ-ինչ պատճառներ
ստիպում են նորան աւերել արգանդը, այդ բանի տուածն
առնելու համար՝ նորա շապիկի քանոցումը, հինգ տեղ է
հատ կոտէկոմնոցներ կամ կէս-կոտէկանոցներ են կարում,
և վզիցը կախ են անում մի շար յուրանքներ, որոնք
հուշ են առփում։ (1)—

(1) Առում են՝ այդ յականքները վայր են ընկնում կարկափ
հետ։

գցել: Յղի կինը ձեռքը մխումէ այդ աւազանի մէջ. և առաջին առարկան, որ ընկնումէ նորա ձեռքը՝ հանում է ջրից: Եթէ հսնածը գնտասեղ է, — նա տղայ կ'ձնի. իսկ եթէ յուլունք է կամ ասեղ, — աղջիկ:

3. ԾՆՍԴԱԿԱՆ:

Ա. 1. Ակսած այն օրից, երբ կինը որդի է ծնում, մինչև քառասուն օրը, նորա ամուսնու ոչ ուտում է ոչ խմում այն անօթից, որ գործ է ածում իւր կինը: Եւ այդ այն պատճառով, որ իւր գործերը անյաջող ընթացք չ'ընկնեն, — աչքի առաջ ունենալով, որ մինչև քառասուն օրը, ծննդականն անսուրբ է:

2. «Քառասունքում ծննդականը ոտով չ'օրօրում իւր մանկիկը: Եթէ արհամարհի այս զգուշութիւնը՝ նորա որդին թոյլ կ'լինի, միշտ տկար և ուշ կ'սկսի ման դոլ:

3. Նա չ'մտնում գրացու կամ բարեկամի տունը, որ իւր տան մկները չ'շատանան: Խակ եթէ պատահմարք գնացել է մեկի տունը, — այնտեղից գուրս գալիս՝ տանտիկինը ջուր է թափում նորա ետեւից: Եւ այդ այն պատճառով է անում, որ ծննդականի կաթն առատանայ, ինչ պէս առատ է ջուրը:

4. Գիշերով ծննդականի սենեակը մտնողը ձեռքին պծխակոթ է ունենում, որ իւր հետ եկած չար հրեշտակը այրուի այդ փայտի վերայ: Յետոյ, այդ փայտով նա մի շրջան է քաշում ծննդականի անկողնի շուրջը, որ, — եթէ սենեակում չար հրեշտակ կայ, — չ'մտնենայ նորան:

5. «Սոյնպէս չարի հարուածից ազատուելու համար ծննդականի մահձի մօտ գնում են՝ հրացան, գանակ, կիպրիանոս, Սաղմոս, Նորիկ, ..: Եւ նորա գլուխը լուանալու

42. Ասում են յղի կինը փայծաղ ուտելուց յետոյ որտեղ, իւր մարմնի վերայ ձեռքը դնի, ծնուող երեխայի նոյն տեղում նշան կ'թնայ:

13. Այս կինը, որ ցանկանում է յղանալ, մեռած մարդու գանգով ջուր է խմում:

14. Յղի կինը, կամենալով արու զաւակ ունենալ, — երբ որդին մի տեղոց ջուր է թափում, — աշխատում է անցնել ջրի շերտի ատակով:

15. Ծնուող երեխայի ուուշ գուշտէնու համար գործ է ու ուստամատաւալ մեջոյները: —

16. Յղի կինը նոր ձեռած շապկի օձիքը դնում է իւր զլսին: Եթէ այդ միջոցին նորա սենեակը տղայ ներս մտնի, — տղայ կ'ձնի: Եթէ առաները ցած է թողում, — էղ կ'ձնի:

17. Կա դցում է կրակի վերայ հաւի լեզին: Եթէ լիզին տրաքիւմ է, — տղայ կ'ձնի: Եթէ չ' աղջիկ:

18. Կա թքում է մրջիւնի վերայ: Եթէ մրջիւնը դուրս է գալիս թքի միջից, — տղայ կ'ձնի: Եթէ չ' կարողանում դուրս գալ, — աղջիկ կ'ձնի:

19. «Քանաքեռ գիւղում» կայ մէկ աղքիւր «Ծարաւ» — աղքիւր անունով: (1) Այդ աղքիւրի աւազանում կանայք զանազան դոյնի յուլունքներ, ասեղներ և գնդասեղներ են

(1) «Ծարաւ աղքիւր» է կոչվում, որովհետեւ ճանապարհանձն հորդներն այդտեղ զովացնում են իւրեանց ծառաւը:

ժամանակ, կողքին շամփուր են տնկում, որի ծայրին մի սոխ են ցցում: (passim)

6. Ալ ախեցած ծննդականին շաբաթ երեկոյին նստեցնում են դռան սեմի վերայ և ջրով լցրած թասը գնում են նորա գլխին: Ծննդականը մի փայտ է գցում թասի մջ, որ ազատուի երկիւղի վատ հետեանքից:

7. Երբ ծննդականի տաճ տուածից յուղարկաւորում են հանգուցեալի դիակը, ծննդականը պարկած դրութիւնից կանգնում է անկողնում, որ ազատ մնայ չարի հարուածից: Իսկ երեխան տանում են դռների մօտ, որ շուտ սկսի ման գալ: (Տիմ. և Ա.լ.)

8. Երբ մանկաբարձուհին (տաճ—մէր) մի ծննդականի տնից գնում է միւսի տունը՝ կամ մի մահատոն, կամ այդ վերջինից գնում է ծննդականի մօտ,—միշտ այն տնից, որտեղից նա դուքս է գնում,—նորան տալիս են մի հացի կտոր, որի վերայ աղ են ցանում: Այդ հացի կտորը նա տանում՝ ուտեցնում է ծննդականին, որ նա չ'տկարանայ: Կամ նորածինը կանգնեցնում են մանկաբարձուհու ուսերի վերայ: (Տիմ. և Ա.լ.)

9. Քառասունքից ազատուելու համար քառասունքոտ կնոջը կշռում են աթարի և լեարդի հետ: Իսկ կշռելուց յետոյ աթարն ու լեարդը թաղում են գետնում:

10. Միւնոյն նպատակով նորան տանում են գերեզմանատունը: Այստեղ, նորա ձեռների և ոսների բթամատներից անցեն կացնում եօթ գոյնի բրդեայ թելեր (գերձան) և երեք տեղից կտրատում են. յետոյ նորա գլխին քառասուն գդալ ջուր են թափում: (Սաղ.)

11. Միւնոյն թաղում կան երկու ծննդական: Եթէ դոցանից մէկը պատահմար գնում է միւսի տունը, նոցանից մէկը կամ միւսը քառասունքոտ կլինի: Այդ ցաւից

ազատուելու համար՝ ծննդականները գնում՝ նստում են մի այնպիսի տեղ, որտեղից սկս յում են չորս խաչաձև ձանապարհ, միայն մէջք-միջքի կացրած: Այդ դրութեան մէջ նորա փոխադարձաբար ծիծ են տալիս միմեանց երեխաններին:

12. Նոր թխած լոշերից առաջին անգամ հանած լոշի միջուկը բոլորաձև դուրս են կտրում այնքան, որ քառասունքոտ կինը կարողանայ անցնել նորա միջովը: Քառասունքից ազատելու համար այդ լոշն անց են կացնում նորա վրովի:

13. Ծնող կնոջ տակը յարդ ու ծղօտներ են սփռում, նմանեցնելով Մարիամ Կուսի դրութեանը: Սորանով յոյս են կապում, որ երեխան կունենայ Քրիստոսի շնորհքը:— Զորրորդ օրը այրում են յարդը և ծղօտները. և այրուելիս վերայից ոստնում է ծննդականը, որ քառասուն օրը կատարուած համարուի:

14. Ծննդականը, որի որդիքը շուտ-շուտ են մեռնում, որպէս զինորածին երեխան երկար կեանք վայելի, — նորան մի քանի կօպէկով վաճառում է միքազմազաւակ ծնողի վերայ: Այսու ամենայնիւ, թէ փողը և թէ երեխան մնում է վաճառողի մօտ:

15. Միւնոյն նպատակով նորածին տալիս են Բաֆչ անունը. որ ամենքը նորան այդ անունով կանչեն, և Աստուած բախչի նորան իւր ծնողներին: Կամ նորան թուրքի անուն են տալիս:

16. Այն ջուրը, որով մկրտել են երեխային՝ տանում են ծննդականի տունը: Նորանով լուանում են այն բոլոր անօթները, որոնց մերձեցել էր ծննդականը, որ սրբուին թէ անօթները և թէ ինքը ծննդականը: Եետոյ գործ են ածում այդ անօթները:

17. Ծննդականի ցաւին գեղ անելու համար՝ նորա առաջելք դնում են մէկ աման, որի մէջ դրուած է մի տրեխ, —և ասում են. «Այ ձեռդ հանի, քեզ համա կաթնէ վլաւ ենք բերել» (Սղ.)
18. Այն կինը, —որի արգանդը շուտ—շուտ աւերվում է, —անյ է կենում էզ իշխ տակովը, ասելով. «Իմ՝ փոք բեթարաբ ըլելը քեզ. քու բարաքաթն ինձ»:
19. Որքան ապրի ծննդականը կամենում է որդի չժնել, այնքան ձուից ձուաձեղ են եփում, և նա ուտում է: (Սղ.)
20. Ծննդականի տունն ուղարկած աւշտն (ընծայ) մէջ երկու հաց են դնում, որ երեխան մնացական և բաղ-տաւոր լինի:
21. Այն ջրի մէջ, —որից պէտք է խմի ծննդականը, —ածում են եկեղեցու յատակի հողեց: (?)
22. Ծննդականին կերակուր տալու ժամանակ, մինչ քառասուն օրը, նորա առաջելք ամրող հաց չեն դնում: (?)
- Բ. Եթէ ինը բժուաբութեանը է ծնում, ծնուանը բեր-լոցնելու համար՝ բեմում են հետեւու միջներին. —
23. Նորա ամուսինը իւր շորի քղանցով ջուր է խմեց-նում նորան:
24. Թեթև կերպով գութանով վարում են այն տանիքը, որի ասակը գոնվում է յլին: (Դուռնիկ.)
25. Նորա շորի քղանցով ջուր են խմեցնում ձիու: (Սաղ.)
26. Ծնող կող սենեակը հող են ներս բերում տանիքից: (Դուռնիկ.)
27. Նորա կողքին ջուրն են դնում այն ծառի տերեր, որ ուխտագնացները բերում են նրուսաղէմից:

28. Նորա մատում հազցնում են ուրբանիարուր կամ ասծութ: (1)
29. Նորա միջքին կոտում են ասեղ ձու և կիսում են հացը:
30. Տանը վատում են այն մեղքամամը, որ ծնող կնոջ հարանիքին այրվում էր նորա հալաւի մատուցարանում
31. Բաց են անում տան մէջ գտնուած ամեն փակ առարկայ՝ կողմէք, գանակ...և այլն: (Սղ.)
32. Նորա մօտ յիշում են Աստուածածնի անունը:
33. Յաւի սաստիկ բոտէներում որոնում են այն մար-դուն, որ երբեմն օձի բերանից ազատել է գորտը: Գորտ շորի վեշում ջուր են ածում, որտեղից տանջուողը իր-մում է երեք ումակ:
- #### 4. ՆՈՐԵՇԻՆ ԵՐԵԽՈՒՅՑ.
- Ա. Նորածին երեխան շոր հրեշտակի հարուածից աղառելու հո-մաք պահպանում էն հետեւու զգուշութեանները. —
1. Գիշերով, նորածին երեխան չեն անցկացնում հոսող ջրի վերայով: Խսկ եթէ ստիպուած են անցկացնել, —տա-նողը ձեռքին բաց դանակ է բռնում:
2. Մինչեւ նորածին երեխան պարկած է խանձարրում, յառասուն օր նորա գլխի մօտ ջուր չեն դնում:

(1) Խւագ—հինգչաբթի գիշերը, դարբինը առանց խօսելու մի քանի երկաթեայ մատանիներ է շինում. և դորանք կոչ-վում են ուրբթարուր, կամ անժմին: Հետեւեալ առաւուը նա գնում—կանգնում է եկեղեցու դռանը, ուր ժամաւոր կա-նայք փողով առնում են նորանից այդ մատանիները, Վաճա-ռու այդ միջոցում կրօնական լուսթիւն է պահպանում:

3. Երբ, գիշերով նորածին երեխան տնից դուրս են տանում, նորա ճակատին ածխով մի խաչ են գծազրում: Այլ և նորա ծոցումը դնում են հաց և ածխի կտոր (passim)

4. Նորա օրօրոցի գլխին կապում են փոքրիկ կրիայի ոսկոր կամ ուռկանի կտոր:

5. Երբ երեխան ջուր է խմում, մայրը ձեռքը նորա գլխին է դնում:

6. Կորածին երեխայի պորար թաղում են եկեղեցու պատի տակը, որ երեխան աղօթասէր լինի:

7. Երբ երեխան կակազում է, նորա լեզուի կապերը խզելու համար՝ նորա բերանին քսում են եկեղեցու բանալքը:

8. Մինչդեռ երեխան չի կարողանում ազատ խօսել՝ նորան չեն նստեցնում անասունների (ձիու, իշի) վերայ, — որ նոցա պէս անխօս, համբ չ'լինի:

9. Կորածին երեխան մեւնոյն մազում խարբալում են շան լակոտի հետ, որ շան պէս ճարտար դառնայ, խօսքը դրսու գնայ:

10. Կորածնի բերանից հոսող լորձիւնն ընդհատելու համար գողանում են նորա կնքահօր թաշկինսակը, և նորանով սրբում են նորա լորձիւնը: Ասում են, կնքահօրն-էլ վտանգ կ'պատահի:

11. Խսկոյն, երբ ճնվում է երեխան, նորան դուրս են տանում սենեակից՝ (եթէ գիշեր է) աստղերին ցոյց տալու համար, որ երեխան ճանաչի իւր աստղը՝ ներս բերելեա նորան ցած չեն դնում, մինչև նա չ'փոշտայ: Խսկ փրաշ-ապը յայսոնում է, թէ նորա ճակատագիրը, բաշու արդէն դրուեաւ:

12. Կորածինը բազաւաւրացնելու համար, մերժին օլը,

Ճննդականի անկողինը ծալքում դարսում է մի բաղտաւոր երիտասարդ:

13. Բազուաւոր է համարվում այն երեխան, որի գլխին սպիտակ մազ կայ:

14. Կորածին երեխայի գլխի մազերից մի փոքր գերծում են և փաթաթելով մի փաթեթքում՝ պահում են: Երբ երեխան գառնում է 6-7 տարեկան, ցոյց են տալիս նորան իւր մազերը, հարցնելով. ուս ում մազն առ: Երեխան, յայտնի բան է, պատասխանում է, թէ դա այս կամ այն մարդու կամ (գուցէ) կենդանու մազն է: Նորա պատասխանն արդէն վճռում է, թէ նա ապագայում այնքան բաղտաւոր պէսք է լինի, որքան ներկայումն բաղտաւոր է նաև որի անունն երեխան յիշեց:

15. Ծնուած օրից երեք տարի շարունակ, երեխային՝ նորա ծննդեան օրը, գլորում են այնտեղ, ուր նա ծնուել է, — որ նա բաղտաւոր լինի:

16. Երբ առաջին անգամ կտրատում են մի տարեկան երեխայի եղունգները, նորա մասին մատանի կն հագցնում, — որ նա բաղտաւոր լինի: Խսկ կտրատուած եղունգներն ածում են ալիւրի ջվալը: —

17. Մինչև մի տարին նորածնի դլուխը չեն սանրում, որ նորա ատամները նորպ չ'գուրս դան:

18 Նորա ձեռքին ծաղիկ չեն տալիս, որ նա խիտ ծռուի չ'ստանայ:

19. Չեն համբուրում նորա պատուանգանը, որ նա անդամնալոյց չ'գառնայ. չեն համբուրում յետոյքը, որ նա հիւանդու չ'լինի, և վեզը, — որ նա խոռվիան չ'լինի. որովհետեւ երեխան խոռվիան միշտ վեզը թեքում է:

20. Չեն թոյլ տալիս նորան հայելիի մեջ նայելու, որ երկոս չ'լինի:

21. Զեն թոյլ տալիս լուսնին նայելու, որ նա չ'նիշա-
րանայ:

22. Երբ երեխան վայր է ընկնում, նորան բարձրացնե-
լով, երեք անգամ խփում են գետնին և վերան թքում,
որ երկիւղ չ'մնայ երեխայի սրտում: Կամ երեք անգամ
կրկնում են. Տափի (դետնի) թեթեռութիւնը քեզ: Քու-
ծանրութիւնը տափինո: (Ասպ.)

23. Միենոյն նպատակով՝ մայրը, որի գրկում երեխան
վախեցել է որեւ է բանից,—համբուրում է նորա կուրծքը: —

24. Որ երեխան ստահակ չ'լինի, այն ջուրը, որով նո-
րան լողացրել են, մի տարի ժամանակով մէկ առանձին
տեղ են թափում: Այդ ջրից յանում են քնող երեխայի
վերայ, որ նա հանգիստ քնի:

25. Երեխան քնեցնելու ժամանակ, սենեակում եղաները
ամենքը նստում են, որ նորա քունը չ'խանգարուի:

26. Երբ երեխան օրօրոցում չէ, ուրիշ երեխայի արգե-
լում են օրօրեւ նորա օրօրոցը, — որ առաջնի փորը չ'ցաւի
կամ չ'մունի: (passim)

27. Երեխան դիշերը չե քնում: Դորա համար՝ երբ նա
պարկած է օրօրոցում, նորա վերմակի տակը մի խաչա-
ձև բամակ են դնում, որ և յետոյ վառում են, և մոխերը
թռողնում են օրօրոցի տակը:

28. Երեխան քնեցնելու ժամանակ ոչոք չե դուրս գնում
նորա սենեակից, որ նորա քուննել հետը չ'տանի: Իսկ
եթէ մէկը ոտիսպուած է դուրս գնալ, նա ջուր է սրսկում
երեխայի վերայ:

29. Ծնուելու օրից ալեւրի չփալի մէջ գցում են ընկղա-
քարը, — որ երեխան քառասունքոտ չ'լինի. այսինքն՝ որ նա
ուշ չ'սկսի ման գալ:

30. Միենոյն նպատակով, երբ հայրը, ծնուելուց յետոյ

առաջին անգամ ներս է մանում սենեակը, մանկաբար-
ձուհին նորածինը գնում է նորա ուսերի վերայ:

31. Քառասունքից ազատելու համար՝ երեխան անց են
կացնում անեղի միջեց:

32. Երեխային խանձարից գէպի օրօրոցը տեղափոխե-
լու համար՝ որոնում են այն օրը, երբ լուսնի լուսնն է, —
որ երեխան-էլ լուսնի պէս գեր լինի:

33. Թոյլ կազմուածք ունեցող երեխային երեք անգամ
կանգնեցնում են յղացած (Էշոծ) խմորի վերայ, — որ խը-
մորի պէս լցուի, գերանայ:

34. Երեխան սովոր է հող ուտել: Դորա առաջն առ-
նելու համար, մայրը մի քսակում հող է լցնում, և անց
կացնելով երեխայի պարանոցը, — կախում է նորա միջքի
վերայ:

35. Երեխան լողացնելիս կաթսայով ջուր չեն ածում
նորա վերայ, որ նա գող չ'լինի:

36. Նորածնի բազուկն անց են կացնում՝ զանազան յու-
լունքներ, բուսա.. .և այլն, — որ աշք չ'գիպէ նորան:

37. Երեխայի ձեռքը վարդ չեն տալիս, որ նա-էլ վար-
դի պէս շուտ չ'թառամի:

Գ. Երեխայի հետեւ երկարացնելու համար որինում էն գե-
պետու, մը ջայունեցին:

38. Իւր նորածին երեխային մայրը երեք անգամ անց
է կացնում կասկարէնքի օղի միջով, և երեք օր նորա օ-
րօրոցի տակը մաղ է դնում:

39. Մինչդեռ երեխայի պորտը չե կտրած, — մայրը
ոչոքի կրակ չե տալիս իւր տնից:

40. Դեռ չ'ծնուած երեխայի համար մայրը՝ իբրև ողոր-
մութիւն, սպիտակեղիներ և թել է ժողովում իւր դրա-

ցիներից և բարեկամներից: Յետոյ ծնուռղի համար հագնելիք է կարում: և նա պէտք է հազնի երեք տարի:

41. Միենայնը կարում են նոյնպէս քահանայի հնոտի սպիտակեղէններից:

42. Երեխային կանչում են այն անունով, որ տուել են նորան մկրտելիս, և ոչ փոփոխած անունով:

43. Ծնուռելուց յետոյ, դեռ երեխային ձեռքից ցած ըդրած, նորա գլխի վերելը բռնում են երկանաքարը, որի ծակից ջուր են թափում նորա գլխին:

44. Մի՛ բոլորովին նոր և փոքրիկ քիլայի մէջ մի մեխ (բևեռ) են զցում,—որին ասում են քառամեծ, —մի ձու և մի վէգ. և այդպէս երեխայի նոգերուն հետ թաղում են տան սեմի տակը: (1)

45. Մայրը երեխային զնում է կշռի մի թաթում, իսկ միւսումը զնում է այնքան միս, որ թաթերը հաւասարակառուին: Յետոյ միաբ հանում է և թաղում է գետնում, որպէս թէ թաղեց իւր որդին:—

Դ. Ահա՛, ի՞նչ միջներ են գործ ուսում ծնողները՝ նէտպելով որ երեխան չէ չարողանում ոտքի իտունելով աչք առաջ ծնուռով նորա հասակը:—

46. Երեխային լողացնում են, զցելով լուացքի թարախում՝ մնի պատառ, հաց, աղ, կամ ածելով զինի:

47. Շաբաթ երեկոյին երեխան զցում են մի քթոցի մէջ, և շալակելով քթոցը՝ նորան մնի են ածում եօթ տուն, հաց խնդրելով: Ժողոված հացերը ծախում են, ստացած փողով մեղրամոմ են գնում և վառում են այն եկեղեցում, որին ուխտել են: (passim)

(1) Քօռամեխոյ են անուանում, որովհետև գորանով կորացնում են չարի աչքերը:

48. Գողանում են դրացու շերեփը. որ և է թորոնէտան տանիքի վերայ նորանով մի շրջան են քաշում, և շրջագծի վերայ երեք անգամ պտտեցնում են երեխային:

49. Նորան երեք անգամ կախ են անում թորոնետան երդկից և հանում:

50. Շաբաթ երեկոյին նորան տանում կանգնեցնում են դարբնի սալի վերայ. այդ դրութեան մէջ մի զյու մեղրամոմ են վառում նորա աջ և ձախ կողմից:

51. Շաբաթ երեկոները մի կին երեք անգամ տանում է նորան նախրի առաջև, այնտեղ որտեղց սկալում են չորս ճանապարհ, —և ասում է. ևլ' նախրի, էս երեխի ոտը քեզ. քու ուր սրան:

52. Նորան կանգնեցնում են նոր լուսնի դիմացը, և կամաց դանասկը մօտեցնելով նորա կրծքին, ասում են. ևլ' լուսին, էս երեխին մօրթում եմ քու խաթեր. արձակի, սրան, որ ման դայ, թէ չէ իժում սրա մեղքը քեզ նից կհարցնուի:

53. Երեխայի ոտներին կանաչ ու կարմիր թելեր են կապում: Նաբաթ երեկոյին կանգնեցնելով նորան դռան սեմի վերայ՝ մէկ աղջիկ կարատում է այդ թելերը:

54. Մերձակայ մահատնից հաց են գողանում, զցում են լուացքի թաբախը և լրզացնում են երեխային:

55. Երեխան տանում են ոսուայնանկի (Չուլհակ) մօտ և նա նորա ոտների վերայ կարտառում է հիւսուածի վերջն ծայրերը:

56. Նորան նստեցնում են այն սկուտղի (սինի) վերայ, որով թորոնից կրում են թաժայ հացերը. միայն այն ժամանակ, երբ հացերի տաքութիւնից սկուտղի երեսին գոյրշները քրտունքի են փօխարկուել:

57. Մայրը չի գործածում այն ջուրը, որով լողացրել
են երեխային:

58. Մայրը նորան լողացնում է որևէ է աւագ քահա-
նայի գերեզմանի վերայ:

59. Իւր ոտնաջըռվ մայրը լուանում է երեխայի շորերը: —

5. ԱՄՈՒԼ ԿԻՆ.

Ա. Կամեսայուն որդենութեան արժանանալ, ամուլ ինը
բեռամ է պետեալ մջոցներն:

1. Սա երեք անգամ անցնում է մեռեալի գագաղի տակից:

2. Սա խմում է այն ցիսաջրից, որ գոյանում է գետնին
մեռածի զիակը լողացնելուց յետոյ:

3. Վանաշած ծառի ճիղերից նա կանաչ ու կարմիր
թելք է կախ անում և ասում. «Փու գալարութինը ինձ,
իմ արութինը՝ քեզ: Յետոյ կարասում է թելքը:»

4. Մկրտութեան ժամանակ, —երբ քահանան միռոնը
թափում է աւազանում, —այդ ջրից աշխատում են գողա-
նալ (որովհետեւ քահանան չի թոյլ տալիս տանելու) և
խմեցնում են ամուլ կնոջը:

5. Այդ միռոնաջրից քահանան մի քանի կաթիլ կա-
թեցնում է ամուլ կնոջ պարանոցից, շըրերի տակովը:

6. Երբ նոր մկրտուած մանուկը տուն են տանում, ճառ-
ապարհին նորան համբուրում է ամուլ կինը:

7. Ամուլ կինը հեծնում է գոմեշը և ասում. «Փու բերքն
ինձ, իմ չըրերիլը՝ քեզ:»

8. Նա ջուր է խմում սատակած ջորու սմբակով:

9. Ամուլը ուխտ է գնում որևէ է սուրբի: Գնում է ուխ-
տատեղին և եկեղեցում իւր միջքից գօտիկը յետ անելով
տալիս է քահանային, որ նա մի քանի օր խօրանումը
պահի: Յետոյ նա գնում է և յետ է պահանջում գօտիկը,

և որևէ է ներկայ եղող մարդու խնդրում է, որ գօտիկը
կապի իւր միջքին: Գօտիկ կապողը արդէն կնքահայր է
նշանակվում այն երեխայի համար, որի ծնուելու մասին
յոյս են կապում երկու կողմը ևս:

10. Ուխտ գնելուց յետոյ ամուլը ոսկերչն շինել է տա-
լիս սուրբի պատկերը արծաթից կամ թիթեղից (յետ)՝
և կախ է անում իւր պարանոցից: Նոյնպէս երկաթեայ
ողեր է կախ անում պարանոցից և ձեռների բլակներից:
Եւ երբ գնում է ուխտատեղին, այդ բոլորը թողնում է
սուրբի պատկերի առաջեր և առն է վերադասնում:

11. Նորա գօտիկը փաթաթում են և տանում՝ գնում
են եկեղեցում որևէ սուրբի պատկերի առաջեւ: Հետեւալ
օրը ամուլը գնում է գօտիկը վեր առնելու: Աթէ գօտիկը
բացուել է, նա յցյա ունի, որ հանի իւր նպատակին: —

12. Ամուլթինը մեղք համբուրով՝ ամուլ կինը
կամենում է քաւել այդ մեղքը: Նորա համար նա մի
փոքր կտաւ է գնում և պահում իւր տանը: Երբ մեկը
երեխայ է մկրտում, նա այդ կտաւը տալիս է կնքահօրը
և նորանում փաթաթում են նոր մկրտուածին, և երեք
օրից յետոյ կրկին վերադանում են տիրոջը: Այսպէս
եօթը նորածին երեխայ այդ կտաւում փաթաթելուց յե-
տոյ, այլ ևս նորան չեն գործածում: Երբ մեռնում է այդ
ամուլ կինը, կտաւը գցում են նորա զիակի վերայ, երբ
նա արդէն հանգստանում է դագաղում: Այդ է հանգու-
ցեալի կտակը, որով նա կամենում է արժանանալ զրախտի
ժառանգութեանը:

Ա.

1. ԶԱՐ ԵՒ ԲԱՐԻ ՀՐԵՇՏԱԿ.

Ա. 1. Գիշերով գետնին տաք ջուր թափողն ասում է, և եռու, հեռու։ Նա այդ ասում է չար հրեշտակի զաւակներին, որ նոքա չ'այրուին տաք ջրից և նոցա մայրը չը անիծի թափողին։

2. Յօրանջողը խաչակնքում է երեսը, որ չար հրեշտակը բերանը չ'մտնի։

3. Կանգնած հաց չեն ուտում, որ չարի բաժին չ'լինի։

4. Գիշերը չեն սուլում, որ չարերը չ'հաւաքուին. որովհետեւ նոքա սիրում են սուլերը ձայնը։

5. Եթէ բերանից վայր է ընկնում հացի պատառը, խկոյն վեր են առնում և ուտում, որ չարը չ'ուրախանայ, որովհետեւ այդ նորա բաժինն է։

6. Անկողին պատրաստողը խաչակնքում է անկողինը, որ մինչեւ պարկելը չարը վերան չ'նստի։

7. Տան բոլոր պատերի վերայ ածխով խաչեր են գծադրում, որ չարը տուն չ'մտնի։

8. Շաբաթ գիշերը հրացան չեն գործածում չար հրեշտակի երկիւղից։

Բ. Չար հրեշտակի հրացանից աղաթ հնալսու համար՝

9. Չ'են մանգալիս վտանգաւոր տեղերը։ (Եր.)

10. Չ'են կանգնում դռան սեմի վերայ։ (Եր.)

11. Պարտիզում ընկուզենի չեն տնկում։ (Եր.)

12. Որը տարածամելիս երեխաներին արգելում են՝ խոնարհի առուների վերայ կամ մօտից անցկենալ, կանգնել ծառերի տակը և ջուր հանել ջրհօրից։ (Եր.)

13. Խաչաձեւ ճանապարհից անց կենալիս խաչակնքում են երեսը։

14. Երբ երեխան, քնից արթնանալով՝ ջուր է խնդրում,

մայրը՝ խաչակնքելով նորա երեսը, բերանին մօտեցնում է ջրամանը և խմեցնում։

15. Բաղանիք մտնողը խաչակնքում է երեսը։

16. Տանտիրոջ բացակայութեան ժամանակ օտար մարդ ներս չ' մտնում այրուող տունը։

Գ. 17. Դուռը բանալիս կողպէքը դուն վերայ չ'են թողնում, որ տան բարի հրեշտակը չ'տրտմի։

18. Արևամտին բաց են անում ծալքի դուռը, որ բարի հրեշտակը ծալքը մտնի։

19. Մարդուս աջ ուսի վերայ, — ասում են, — միշտ նըստած է բարի հրեշտակը. իսկ ձախի վերայ — չար հրեշտակը. Քնելիս ձախ կողքի վերայ են պարկում, որ չարին յաղթեն։ (1)

20. Միջքի վերայ պարկողը խառնիխուռը երազ է տեսնում։ Սորան բացատրում են այսպէս։ Չար և բարի հրեշտակները կովում են. և մինչդեռ տեսում է նոցա կըռպիր, քնած մարդը ենթարկվում է խառնիխուռը երազների։ (2)

2. ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ.

Ա. 1. Երեխաների մէջ տարածուող ծառելիք և հողը հրեշտակներից ողարկուած հիւանդութիւններ են համարում։ Դորանցից իւր որդիքն ազատելու համար՝ մայրը

(1) Ընդհակառակին՝ միշտ պէտք է պարկել աջ կողքիվերայ, որովհետեւ ձախ կողքի վերայ պարիելով, մենք ճնշում ենք սիրտը և վասում։

(2) Միջքի վերայ պարկողը վատ երազ է տեսնում, որովհետեւ այդ դրութեան մէջ՝ մանաւանդ տաք սենեակում և փափուկ անկողնում, միջքի ուղեղը շատ շուտ է գրգռվում։

անսալի բաղարջներ է թխում և երեսներին մեզը քսելով,
բաժանում է գրացիներին:

2. «Եղնակս հազին վերջ տալու համար մի հայուսատ
մարդ մշակներ է վարձում և փորել է տալիս մէկ աղւ-
բանոց, լայն փողովակի նման, հորիզոնական ուղղութիւ-
նով: Դորա միջովն անց են կենում հազոր երեխաները:
Եւ ալբանոցի վերայ գնելով՝ մի փոքրիկ ջսաման, մի կը-
տոր շաբար, մի տիկին և մի բլիթ, — տուն են գնում:

3. Այն տանը, —ուր ծաղկով հիւանդացած երեխայ կայ,
— իստակ մոմ (մեղրամոմ) չեն վառում և խունկ չեն
ծխում, որ տանու բարի հրեշտակի ձեռներն ու ոտները
չայրուին: Կարծում են, թէ հրեշտակիւերի ձեռներն ու
ոտները մեղրամոմից են շնուած:

4. Բարի հրեշտակին նեղութիւն չտալու համար այդ-
պիսի տան մէջ չեն գործածում՝ դանակ, սուր, ասել,
տաք բաներ, ... և այլն:

Բ. Որ «Շաղինակից» աղող ճան:

5. Բուն—բարեկենքան օրը ծամած ծամուակը պահում
են և ծամում են ջատիկ օրը:

6. Տան առաստաղում պահում են եղենու ոստերը:

7. Խորոված պանիր են ուտում:

8. Իւրեանց խմոր—խաշից ուրիշի չեն տալիս: —

Գ. «Ջերմը» կարեւու համոր

9. Ջերմողը, —և առհասարակ երկարատեւ հիւանդու-
թիւն ունեցողը, —իւր թեկի տակը բահկակ է պահում
մի ցերեկ և մի գիշեր: Այդ բահկակը նա գնում է մե-
ռածի պատունի մէջ, որ նա հիւանդութիւնը հետը տանի:

10. Ջերմողին նատեցնում են գերեզմանաքարի վերայ.
Նորա ոտների տակը գնում են մի շամփուր և մէկ ունե-
լը. և այդ դրութիւնն մէջ լուանում են նորա ոտները:

11. Առաջին անգամ գորտի ձայն լսողը կապ է գցում
թաշկինակի ծայրը և տանում՝ կապը բաց է անում
ջերմողի վերայ:

12. Ջերմողի հասակը թելով չափում են. այդ թելը
գնում են նոր հանգուցեալի կրծքի վերայ, և այնպէս
թաղում են:

13. Ջերմողի շապիկն ընկղմում են ներկարարի կարտ-
սում: և թաց—թաց տանում՝ հազցնում են տիրոջը:

14. Ջերմողը կտրում է եկեղեցու զանգերի թոկից և
նորանով կապում է իւր բազուկը: Նրեք օրից յետոյ թոկը
ջուրն է գցում:

15. Նա իւր ձեռներն ու ոտները լուանում է եկեղե-
ցում դիակալ սեղանի վերայ:

16. Կորան խմեցնում են այն ջրից, որով պատարա-
գիւ քահանան լուացել էր իւր ձեռները:

Դ. Որ «Երեսի գեղնութեան» անցինայ:

17. Դեղնութիւն ստացողի վզեց դեղնայուրունք են կախ-
անում: (Ալ.)

18. Դեղին գնաասեղ չեն պահում շորի վերայ:

19. Շամախում, գեղնութիւն ունեցողին տանում են
քաղաքից դուրս, Սարլըշ տառած տեղը (1), տանելով
հետները մէկ աման վլաւ, վերան քրքում (զաֆրան)՝
ցանած, մի հատ ոչխարի կամ տաւարի ոսկոր գեղին գու-
նով ներկած և մի քանի գեղին մեղրամոմ: Սարլըշ հաս-
նելով՝ ոսկորը թաղում են գետնում և մոմերը վառում են
քարի վերայ: Հող վեր առնելով՝ քսում են հիւանդի ծա-
կատին, աչքերին: Հիւանդը, —գետինը համ-

(1) «Սարլըշ» մի քանդուած փոս է, մէջը հողով լցրած
և շուրջը մի քանի քար ժողոված, քառանկինի ձեռփ:

բուրելով, — երեք անգամ կրկնում է. «Տեղնութիւնս այստեղ մնայ, տեղնութիւնս այստեղ մնայ»: Յետոյ տուն են վերադառնում, ցանելով ճանապարհին բոլոր փլաւը: —

Ե. 20. Հարբուղիսից ազատուելու համար ճանապարհին դնում են մի տիկին և մի կտոր շաքար: Ասում են, շաքար տանողը կ'ստանայ հարբուղիսը:

21. Ում աչքի վերայ փոքրիկ խիլթ կոյ, նա ճակատից այդ աչքի վերայ թերով ասեղ է կախ անում, որ ուռուցքն անցկենայ, փախենալով ասեղից:

22. «Դրացիները և այն տան բնակիչները, — որոնց մէջ գտնվում է աչքացաւ ունեցողը, — ու թել են կապում ցուցամատներին, որ աչքացաւը չ'տարափոխուի նոցա մէջ: —

23. Մօլօքուր (1) ունեցողն այդ հիւանդութիւնից ազատուելու համար մերկանում և փաթաթվում է մէզարի (այծի մազերից հիւառաձք) մէջ, աստղերի երեալու ժամանակն անց է կենում եօթը տանիք, և գրորվում է մէկ այրի մարգու տանիքի վերայ: (Տիփո. և Ա.լ.)

24. Միւնցին դիաւորութիւնով՝ նա ջուր է քսում իւր մարմնի վերայ. յետոյ միւնցին տեղերում քսում է որևէ ոսկեղին իր (մատանիք, գինդ) որ նա ստացել է օժիտումը: —

Զ. Խանութ համար, Աէ էրդուրակն Հիւանդութիւն ունեցուը վերջը է տողը Աէ է Քառակի:

25. Նորան նստեցնում են մի քանդուած ջրաղացում: Այդտեղ, հիւանդ—երեխան լաց է լինում: Նթէ այդ մի-

(1) «Մօլօքուրը» մի տեսակ հիւանդութիւն է. որի երեալովը մարմնի վերայ բշտիկներ են զոյանում, և մի տեղ քորելով, բշտում է միւս տեղը:

ջոյին, նա երեսն ուղղում է դէպի ջրաղացի գուռը, — կը մեռնի:

26. Ճիւանդին նստեցնում են մի գերեզմանի վերայ: Եթէ նա լաց է լինում, կառողջանայ:

27. Նորան երեք անգամ կշռում են իւր ծանրութեան չափ աթարի հետ: Եթէ հիւանդը ծանր է լինում, — կը առողջանայ: —

Է. 28. Ճիւանդի տէրը եօթը գերեզմանից հող է վեր առնում, ասելով. «Ձալդ ապսարես» և մի շորում փաթաթելով՝ դնում է հիւանդի բարձի տակը, ատելով, կամաց. «Քեզ բարովից» — որ շուտ մեռնի:

29. Եթէ հիւանդն առաջին անդամ պէտք է անկողին մննի ուրբաթ օրը, նա սպասում է, որ շաբաթ օրը պարկի, որովհետեւ Քրիստոս ուրբաթ օրը թաղաեցաւ:

30. Մահումերձ հիւանդի մօտ հրաձգութիւն են անում, որ չ'մեռնի: Խոկ եթէ հիւանդը կին է, նորան տղամարդի շոր են հազցնում: (Եր.)

31. Գլխացաւ ունեցողը իւր գլուխը չի լուանում չորեքշաբթի օրերը՝ սկսած աւագ — չորեքշաբթի օրից:

32. Ատամնացաւից ազատուելու համար համբուրում են գեռ չ'մրտուած երեխային:

33. Առողջ մարդը հիւանդի դեղից հոտ չի առնում, որ գեղի ոյժը չ'կորչի:

34. Միւնցին նսպատակով՝ դեղն ընդունելուց յետոյ դեղի գդալը հակառակ երեսի վերայ են դնում:

35. Շամիստ, քաղաքի մի փոքրիկ տան մէջ, մի թուրքի գերեզման կայ, որին բնակիչները Ծիրվան—Փեր (Ծիրվանայ սուրբ) են անուանում: Հիւանդին տանում են այդ գերեզմանը, տանելով և մէկ աման ջուր: Նորա երեսը լուանում են գերեզմանաքարի վերայ և պատռի-

րում են նորան երեք անդամ՝ գերեզմանը համբուրելով՝ կրկնել այս խօսքերը ։ Ծանրութիւնս քեզ, թեթևութիւնդ ինձ։ Յետոյ ջրով լցրած ամանը քարի վերայ կոտրելով, մի քանի սև փող են դնում այնտեղ և վերադառնում։

36. Եթէ այս միջոցը չի կարողանում առողջացնել հիւանդին, ծնողները նորան տանում են ծառ—Քարը, որ քաղաքից դուրս է։ Նորա միջից երեք անդամ անց են կացնում հիւանդին, կրկնել տալով նորան վերայիշեալ խօսքերը։ Յետոյ, մի փոքր պատառելով նորա շորից՝ դրանում են այդ քարի վերայ և առանց յետ նայելու վերադառնում են։

37. Իսկ եթէ այս ևս չի յաջողում, մի փոքր խմորից մարդու կերպարանքով և նմանութիւնով՝ մի պատկեր են շինում, որին Բարդու (փոխանորդ) են անուանում։ Հիւանդի գլխից երկու մազ քաղելով՝ կպցնում են այդ բաղալի գլխին. արտևանուկից երկու մազ քաղում՝ նորա համար արտևանունք են շնում. եղունգներեց կտրատելով՝ դնում են եղունգների տեղը. և այն։ Հետևեալ առաւօտը հիւանդին տանում են գերեզմանատառն և մի գերեզմանի վերայ թաղում են խմորը, որպէս թէ թաղել են հիւանդին։ Եւ եօթ գերեզմանի վերայ լուսնալով հիւանդի ձեռներն ու ոտները՝ ասում են. «Հիւանդութիւնդ այստեղ մնայ, հիւանդութիւնդ այստեղ մնայ. Աստուած սաբար քցի!»

38. Երբ մէկի վերայ երեւումէ բոր կամ գորա նման բշտիկներ՝ բորոտին տանում են բաղանիք, ուր լողացնում են նորան միտուն լուսուն։ (Ա.լ.) (1)

39. Երեխայի վերայ նկատելով հանրուէլ (1), նորան տանում են բաղանիք։ Զրի մէջ թափում են 40 կաղճն, և այդ ջրով երեք անդամ լողացնում են երեխային։ Այդ կաղճները ոչ ոք չի ուտում, որ կաղճուկ չ'ստանայ։ (Ա.լ.)

40. Իւր հիւանդութիւնից ազատուելու համար՝ հիւանդը մի սև թաշկինակ է գնում ծոցը և գնում է մէկ ովստատեղի։ Այնտեղ, գռներում, թողնելով թաշկինակը, տուն է վերադառնում։

41. Երբ գանակոծ երեխան հիւանդանում է, նորան առողջացնելու համար ծեծողը լուսնում է իւր ձեռները և ջուրը խմեցնում է երեխային։

3. Դ Ե Ղ.

Ա. «Գորդունուէլ» բժշկելու համար՝

1. Գորտնուկ ունեցողը, լուսնի ծննդին, ծառի արմատի մօտ մի կտոր ալ թաղելով ասում է. «Ուսին, դու էտեղ չքուի, սա էստեղը, (Տիկ. և Ա.լ.)

2. Եկեղեցու աւելիով ժամկոչը սրբումէ գորտնուկը։ (Եր.)

3. Կանթեղի պատրուգով ձէթ են քսում գորտնուկի վերայ։ (Եր.)

4. Գորտնուկի վերայ քսում են այն ցեխը, որ գոյանում է գետնին դիակը լողացնելիս։

5. Գորտնուկի վերայ քսում են ձիու բերանից հոսած լըրձիւնը։

6. Գորտնուկի վերայ գնում են բերանից վայր ընկած հացի փշրանքը։

(1) «Միրազի—թասը» գտնում են գետնում։

(1) «Կաղճուկը» կաղճու չափ դեղին վերք է։

7. Գորտնուկ ունեցողի առաջելը, քարի տակ, ջարդում են կենդանի գորալ:

8. Գորտնուկ ունեցողը գիշերով եօթ հաս աղի փըշրանք է պահում ծոցումը: Առաւատը վաղ, առանց խօսելու գետն է թափում փշրանքը, երեք անգամ կրինելով. ևնդ, դու բակ հայուի, գորտնուկ, դուն—էլ ըստեղ հայուի:

9. Միենոյնը երեք անգամ կրինելով՝ նա կանգնում է վառած թորոնի մօտ, մէջքը գէպի թորոնը, և զլիսի վերելից աղի երեք փշրանքը մէկ—մէկ թորոնն է գցում:

10. Գորտնուկը լուանում են գերեզմանաքարի վերայ հաւաքուած անձրեաջովք:

Բ. «Ա ախեցած նորդուն» ունդ անելու—համար՝

11. Նորան խմեցնում են Աւագ—հինգաբթի օրուայ ոտնալուայի ջրից:

12. Տեառն—ընդ—առաջին վառած փայտերից մնացած մոխիրը և փայտերը ջրի մէջ խառնելով՝ խմեցնում են վախեցածին:

13. Մի բաժակ ջրում թաց են անում եօթ տան բանալիներ և ջուրը խմեցնում են վախեցածին:

14. Ջրումը սրելով բուրփառի ածուխը՝ խմեցնում են վախեցածին:

15. Թորոնի կոշտ մոխիրը ջրի հետ խառնելով՝ խմեցնում են նորան:

16. Ա ախեցողը գիակի կրծքի վերայ կտաւ է դնում, մէջը ջուր ածում և խմում:

17. Նա խմում է այն ջրից, որով պատարագիչ քահանան լուացել է իւր ձեռները:

18. Ապանած մարդու սեղանատամը ջրումը սրելով,

ջուրը խմեցնում են վախեցածին:—Կամ ատամի փոխանակ սրում են այն գնատակը, որից նա սպանուել էր:

19. Եօթ տան սիւների տակից հող են վեր առնում, խառնում են մի բաժակ ջրի հետ և խմեցնում են վախեցած մարդուն:

20. Անխօս, գետից բնրած ջուրը թափում են մէկ ամանում: Դորա մէջ թափթախելով թորոնի ածխակոթը՝ տալիս են վախեցածին խմելու:

21. Մէկ ամանով ջուր են պահում եկեղեցու սեղանի ետեղ: Այստեղ եօթն անգամ պատարագ մատուցանելուց յետոյ՝ ջուրը խմեցնում են վախեցածին:

22. Ա ախեցած մարդը խմում է այն ջրից, որ թափում է ջրաղացի անիւներից:

23. Նա խմում է եօթ գերեզմանաքարի անձրեաշըից:

24. Նա ուտում է այրուած հացի տակից:

25. Նա մէկ ամանով ջուր է տանում սրբահար (1) ունեցողի մօտ: Դա այն գիշերը քարը գցում է բերած ջրի մէջ, և առաւատը խմեցնում է նորան:

26. Նոր կաւեայ ամանը դնում են վախից հիւանդացածի կրծքի վերայ, երբ նա պարկած է: Ամանումը ձու են կոտրում և այդպէս դնում են նորա բարձի ետեղ: Եթէ հետևեալ առաւատը ձուն եփուած լինի, —հիւանդը կ'առողջանայ. Եթէ հում լինի մնացած, —կը մեռնի:

27. Ա ախեցած երեխային դեղ անելու համար՝ վախեցած տեղում թաղում են մի ձու, մէկ ոսկոր: Նրեկոյին ձուի մօտ ձրագ են վառում, և թողնում են այդպէս

(1) Որպէս թէ այդ քարը նա կովի սրտից է հանել:

մինչեւ հանգչելը: Յետոյ ճրագի տակից հող են վեր առնում և քսում են երեխայի կրծքին: (Նամիս.)

28. Առեւելց վախեցած երեխային,—մինչդեռ գիշակը եկեղեցումն է,—երեք անգամ անց են կացնում նորա դագաղի տակից:—(Նամիս.)

Գ. «Երբէալուս անցրելը կամ անմէ» ռարտարէցնելու—համար գործ են դնում հետեւալ միջները.—

29. Քահանայի տնից գողանում են նորա աւելին և այլում:

30. Ազիւսագործները իշե յօնքերին հինայ են քսում:

31. Գիւղացու կրտսեր որդին դաշակց ցխոտ արեիներով վերագառնալիս ցեխը պոկում են և կրակը գցում: (Դուռնիկ)

32. Իշե աչքերին աչք դեղ (սուրմա, սիւրմէ) են քսում:

33. Ջրամանը ջրով լցնում են և գետնումը թաղում:

34. Կալսելիս, կալի միջովը ջրով լցրած կուժ չեն անց կացնում, որ անձրեւ չ'զայ: (Դուռնիկ)

Դ. Որ անցրեա գոյ՝

35. Գորտ են սպանում:

36. Աշխատում են կրիան վայր գցել միջքի վերայ:

37. Կանաչ խոտն այրում են:

38. Ծածուկ հանում են նոր թաղած թուլքի դիակը գերեզմանից, կտրում են նորա գլուխը և թաղում են գետափումք:

39. Գիւղացի կանայքը, քահանայի խորհրդով, չութով վարում են որևէ է հսոսդ ջուրը, միայն ջրի ընթացքին հակառակ: Լծուածները և մաճակալները կանայքն են լինում: (Նամշ.)—

Ե. «Արքուութը» ռարտարէցնելու համար՝

40 Առաջին անգամ վայր ընկած կարկուտը կիսում են:

41. Թարոնից գուրս են գցում խաճրէալը: (Ալ.) (1)

42. Արահումը, անդրանիկ որդին՝ իւր բժամասների մէջ բանելով սանրի հակադիր ծայրերը,—վիզում է սանրին, որ պայշտ է գալիս մատների մէջ:

43. Անդրանիկ որդին ծոցումը պահում է մի հատ կարկուտ կամ ուտում է:

44. Ա առում են այն կիսայրեալ մոմը, որ Զատիկ օրը բաժանել են եկեղեցում:

45. Կասկարէնքը գնում են հակառակ երեսի վերայ և վերան աղ ցանում:

46. Մի թղթի կտորի վերայ աղօթք են գրում, ողահում են փաքրիկ պուլիկներում և պուլիկները թաղում են հանդումը: (Դուռնիկ)

47. Ըղիւսագործը գետի ափումը թաղում է իշե գանգը:

48. Եկեղեցիներում զանգակ են խփում: (passim)

4. ՀՄԱՅՈՒԹԻՒՆ.

1. Հիւանդութիւնը սուրբերից ուղարկուած պատիժ համարելով՝ հիւանդի մօտ պիտոյունն նարեկ կամ սաղմոս են կարդալ տալիս: Բայց, երբ այս միջոցը չե օգնում, դիմում են՝ հարցուեներին, գրբայցներին, փողոցներին, գարեւ գյողներին, և ենակի սայուղներին, (2) լուսի սայուղներին, ներ ուղարկներին,... և այլն. և կատարում են նոցա պատուերները: (passim)

(1) «Խաճրկաթը» երկու երկաթ է, որոնց խաչաձև գնում են թորոնի վերայ, ամաններ դնելու համար.

(2) Թիակը լինում է այծի կամ ոչխարի.

2. Խմանալու համար, թէ հիւանդը ո՞յ խաչեցն է հիւանդացել՝ մէկ իլեկի վերայ փաթաթում են ողոքած պատրոյգներ, այնքան տեղ, որքան խաչերի (սուրբերի) մասին կարծիք ունին: Այդ իլեկը գնում են ջրով լրած ամանի վերայ, այնպէս—որ իլեկը ջրին չէ դիազում և վերան մի թաշկինսկ են զցում: Բաւական ժամանակ այդպէս թողնելոց յետոյ՝ վեր են առնում ծածկոցը և տեսնում են, որ փաթաթած պատրոյգներից մէկի կամ միւսի ծայրը յետ է ողորուել: Մտաբերելով այն խաչերի անունները, որ նոքա տուել են այդ ողոքած պատրոյգներին՝ ասում են այս կամ այն խաչեցն է հիւանդացել:

3. Գնում են նետ—գնողի (1) մօտ: Նա պտտեցնում է նետը, յիշելով զանազան սուրբերի անուններ: Հիւանդն այն սուրբիցն է հիւանդացել որի անունը յիշելս նետը կանդնում է: (Ալ.)

4. Անհաստատ կարծիքը ստուգելու համար կանչում են մի պառաւ, որ Աֆո—շափի: Պառաւը, աղօթելով՝ երեք անգամ չափում է դուան սեմը: Եթէ երրորդ անգամ չափելս (ի հարկէ, այդ կախուած է թիզը լաւ բանալուց) սեմը երկայնանում է, կարծիքը ճիշդ է. Եթէ կարձանում է,—սխալ է: (Ալ.)

5. Աչք—հատը (2) աղօթում են: Թասի մէջ ջուր են թափում: աղօթովը թասը տալիսէ հատ ունեցողին. ինքը

(1) Նետ—գնելը հետեւեալն է: Նետ—գնողը բերում է մի մաղ, որի կողքի վերայ ամրացրած է մի մեխու նողի մի—մի մատով բռնում են մեխից: Նոցանից մէկը սուրբերի անուններն է յիշում. իսկ մաղը պտտվում է.

(2) «Աչքի—հատը» աչքում երևող սպիտակ բիծն է:

կանգնում է ետեղ և, իւր ձեռքից մի—մի հատիկ բրինձ գցելով թասի մէջ, աղօթում է:

6. Խմանալու համար, թէ ինչեց է առաջացել հիւանդութիւնը՝ պառաւը չափում է հիւանդի գոտիկը (եթէ գոտիկ չունի, մի շոր է կապել տալիս և յետոյ արձակում) իւր բաղկով: Եթէ, երրորդ անգամ չափելիս, գոտիկը երկայնանում է, —նշանակում է հիւանդը վախեցած է: (Ալ.)

7. Ում վերայ կասկածում են, թէ աչք է առեւէլ (1), — ծածուկ գնում են նորա տունը, նորա կօշեկների առկից մի փոքր հող են վեր առնում և բերում՝ կարում են հիւանդի շորերի մէջ, որ այլ ևս ոչ ոք չկարողնայ աչք—տալ նորան: Կամ այդ հողը կրակն են թափում:

8. Հակակենու նուրբ սատը մանր—մանր կտրատում են, ծակում են, և տէր—ողորմեայի հատիկների պէս թելումը շարելով՝ կախ են անում՝ մարգու, կովի, ձիու, ...վեզը, որ աչք—չգիպչի:

5. Ա. Ղ. Օ Թ. Ք.

1. Երբ կարիճը բռնում են, նորան զցում են ձիթով լրած շիշը: Յետոյ, երբ մէկին կարիճ է խայթում, ձիթամանից հանում են կարիճը և գնում են խայթուած տեղի վերայ, որ բժշկուի: Կարիճն աղօթում են այսպէս.

«Ալալիոս, Գալալիոս,
Աղայ Ստեփան, Ստեփանիոս,

(1) «Աչք—տալ» նշանակում է խօսել մի մարդու բաղութեան, հարստութեան, զեղեցկութեան մասին, մի խօսքով գովել նորան իւր լաւ յատկութիւնների մասին:

«Կալել եմ, կապել եմ,
«Սուրբ Սարգսի ձիու ձարով,
«Աստուածածնայ քաղցր կաթով.
«Ութ մատով երկու բթով,
«Չուշ, կարիճ, չուշ:

2. Ա ախեցածին պառաւն աղօթում է այսպէս.

«Այ, սուրբ Սրհակ վարդապլետ,
«Այ, սուրբ Սարգիս զօրապլետ,
«Այ, Տէր Յիսուս, Սուրբ Փրկիչ
«Եւ կիրիգոր Լուսաւորիչ.
«Եկաք մին տեղ, միաբան,
«Չեր աղօթքաւ, աղաշանքաւ,
«Չեր մաղթանքաւ, պաղատանքաւ,
«Սաղըրաք դուք սրան: (Սաղ.)

3. Ա չք—տուածին աղօթում են այսպէս:

«Չար աչք ա, չար նիսթ ա,
«Սպիտակ կեռիք ա, ճաղար մորդ ա,
«Սուրբ Ստեփաննոս, սուրբ Յովհաննէս,
«Ժս արախիս (եթէ երեխայ է) տիւ պահպանես:
Աղօթովը աղը պահում է աջ ձեռքի բռնումը և
դնում է երեխայի դլիխն, երեսին, կրծքին և միջքին:
Յետոյ թքում է աղի վերայ և դցում դլիխն: (Սաղ.)

6. ԹԱՂՈՒՄՆ.

Ա. 1. Երբ տան մեծը մեռնում է, մի փայտով չա-
փում են նորա հասակը և փայտը պահում են առաստա-
ղում,—որ կնդանի մնացողներն—էլ շուտ չմեռնին:

2. Ա սում են՝ հանգուցեալի պատան կարողը զրախտի
կարժանանայ:

— 3. Մինչդեռ դիակը տանն է, նորա երեսին մաղ են
գնում, ասելով. «Թո՞ղ աչքդ կշտանայ էս փուչ աշխարհ-
քիցը»:

— 4. Վահատուն ներս մտնովը կանքնում է դիակի դլիս-
կողմը, «Հայր մերս է առում և «ողորմի» է տալիս: Խոկ եթէ
զանցառութեան կտայ այս օրէնքը, — ասում են, — դիակը
սպառնալիք կտայ նորան ասելով. «Չունքի գուն իմ պա-
տիւր չեմացար, ինձ վրայ «Հայր մեր» չ'ասեցիր, բաս գուն
— էլ հետո արի»:

5. Հարուստ կամ բաղտաւոր հանգուցեալի դլիսի մազեց
և ձեռքի եղունդից կտրում՝ և տանը պահում են, որ
նորա հարստութիւնը կամ բաղտաւորութիւնը տանը մը-
նայ, հետը չ'զնայ:

6. Որ մահամերձ հիւանդը երկար ժամանակ չ'մնայ այդ
դրութեան մէջ, նորա ոտների պատուանդաններին մեզը
են քում:

7. Մի քանի հիւանդ, մեռնելիս կտակում են, որ իւ-
րեանց դագաղով չ'թաղեն, վախենալով մի գուցէ վերջին
դատաստանին դագաղը վզեց քաշելով գնան դատաւորի մօտ:

8. Երբ, հանգուցեալի մասին խօսելիս, մէկը փոշում
է, նորա միջքին երեք անգամ խփում են, որ նա—էլ
շուտով չ'մեռնի:

9. Երբ մէկը, — ներկայ լինելով հիւանդի մահուան բո-
պէին, — վախենում է, նորան հոգեվարք դրութեան մէջ
տեսնելով, մեռնելուց յետոյ նա կ'սմթում է դիակի ոտները,
նորան լողացնելիս իւր երեսը վերան լրւանում է և երեք
անգամ անց է կհնումնորա գագաղի տակից, — որ շուտով
ինքն էլ չ'մեռնի:

10. Երբ օտարտականի դիակը սայլով տանում են նորահարազատ քաղաքը կամ գիւղը, — առաջ քան սայլը տեղեց կշարժուի, սայլորդը մի քանի հաւի գլխներ կտրատում է, և հաւերը գցում է սայլի տակը: Յետոյ սկսում են ճանապարհը: Այս անում է այն պատճառով, որ իւր տաւարին — էլ մահ չպատահի:

11. Մանկահաս կնոջ գագաղում, դիակի գլխին էտք չեն դնում և միջքին դօտիկ չեն կապում, որ ամուսինն — էլ շուտ չմեռնի:

12. Դիակը յուղարկաւորելիս արձակում են օրօրոցում պարկած երեխայի ձեռներն ու ոտները, — որ նա — էլ չը մեռնի:

13. Երիտասարդ հանգուցեալի արժեւանունքը չեն փակվում, այլ և թաղելիս հողը պակասում է, որովհետեւ, — նորա առջը չը չենդացել էն աշխարհից:

Բ. Որ ճանապահը այլ և ճահ չպատահի, գործ են ածուց գույնեալ զգուշութեանելը, —

14. Ջրամանը դուրս են տանում՝ կոտրում:

15. Պատանի մնացորդը չեն գործածում, այլ դնում են դագաղում:

16. Դագաղում դնում են նոյնպէս ժանգոտած երկաթի կտորներ:

17. Մահատանը բանեցրած՝ կահ — կարասիքը, ամառնեղնը և հանգերձեղնը միայն ութերորդ օրն են վերած գարձնում աերերին:

18. Անդրանիկ որդու մահուան վերայ մայրը բարձրաձայն չե սգում:

19. Անդրանիկ որդու դիակը մայրը փաթաթում է իւր լշաքում և այնպէս են թաղում:

20. Անդրանիկ որդու դագաղը մայրն ինքն է տալիս յուղարկաւորներին:

21. Հանգուցեալի սիրելիները ապտակ են խիում դիակին:

22. Անդրանիկ որդին թաղելիս հայրը չի գնում յուղարկաւորների հետ. և հօգեհացից ինքը ոչ ոքի չի բաժանում:

— 23. Ծերունի հանգուցեալի կրծքում մէկ միլ (երկաթեայ կամ պողպատեայ թել որով գուլպայ են գործում.) են ցցում. մէկն — էլ դնելով գագաղում, ասում են. «Գնա, քու աչքը քեզ վրայ ըլի, մեզ վրայ աչք չ'ունենաս»:

24. Սգաւորների շորեր կարողը ուրախ կին պէտք է լինի:

25. Դագաղը սենեակից դուրս տանելիս, նորա ոտը երեք անդամ՝ խփում են գոներին: Հասնելով սրահի դրոներին, մէկը, — որի ծնողները կենդանի են, — զրաից մի քար է վեր առնում և տանում՝ գնում է այնտեղ, ուր առաջ զրուած էր դիակը: Յետոյ դուրս են տանում:

26. Օտար տեղում մեռնողի դիակը տուն չեն տանում, այլ դնում են դաշտում, ուր հաւաքվում են սգաւորները: Այնտեղից տանում են եկեղեցին և յետոյ — զերեզմանառուն:

27. Եկեղեցում, ողջոյն տալու ժամանակ, մի կին ողջոյն է տալիս դիակին, որ նա — էլ մասնակցի ողջունին:

28. Եկեղեցուց դագաղը դուրս տանելիս չեն տանում միենոյն ճանապարհով, որով տարել էին եկեղեցին, այլ որիշ ճանապարհով:

29. Յուղարկաւորող կանայքը, վերադառնալով մահառու, զոների մօտ լուանում են իւրեանց ձեռները:

30. Միենոյնն անում են նոքա նաև իւրեանց տները վերադառնալիս, երբ հասնում են իւրեանց զոներին:

31. Յուղարկաւորութեան ժամանակ, ով տեսնում է

յուղարկաւորութիւնը՝ մի բուռը հող է վեր առնում գեանից և մի կողմն է դցում (Ա.Լ.)

32. Թաղման երրորդ օրը մահատէրը լուսնում է այն վերմակի, բարձի և ներքնակի չորս ծայրերը, որոնց մէջ պարկած էր հիւանդը:

33. Թաղման եօթն օրը չլրացած՝ մահատանը կար չեն անում:—

34. Գ. Պարախտի մի ծառը (գուցէ, կենաց ծառը) և երկնքի աստղերը, մահ պատահելիս՝ կատարում են այն, ինչ—որ նախասահմանուած է: Խակոյն, երբ մէկը մեռնում է, այդ ծառից վայր է ընկնում մի տերեւ, իսկ երկնքից,—մէկ աստղ (passim)

35. Մահուան եօթներորդ օրը, մահատանը, սգաւորների մերձաւորները (կանացք) լուսնում են իւրեանց գլխները. յետոյ գնում են իւրեանց աները: Այդպէս են անում, որ իւրեանց աներումն—էլ մահ չպատահի:

36. Հանգուցեալի այգը (1) կատարելուց յետոյ նորա գերեզմանահողից տուն են տանում, ածում են մի պարկի մէջ և նորանով ծեծում են ստահակ երեխաներին, որ խելօքանան:

37. Ով մեռնողի վերայ անընդհատ սգում է, նորա վըշտերին վերջ տալու համար՝ նորա վզովը, շորերի տակից, ծածուկ թափում են մեռնողի գերեզմանահողից:

38. Նոր մեռելատէր մայրը, շաբաթ երեկոները, մինչ աստղերի երեալը, ջուր չի խմում: Որովհետեւ այդ ժամանակ, հանդերձեալ աշխարհում, հրեշտակները մեռած-

(1) «Այդ» ասվում է այն եկեղեցական կարգը, որ կատար գում է հանգուցեալի համար թաղման հետեւալ օրը:

ների հոգիները տանում են ջուր խմեցնելու: Խակ այդ միջոցին նոքա հետները չեն տանում այն մեռնողի հոգին, որի մայրը այս աշխարհում ջուր է խմել, ասելով նորան. Քու փայն մէրդ (մայրդ) խմեց:

39. Նա շաբաթ օրը չի լուսնում իւր զլուխը, որ հանգերձեալ կեանքում նորա որդիքը չխմեն լուսցքի սապոնաջրից:

40. Խակ եթէ նա ստիպուած է շաբաթ երեկոյին ջուր խմել, երեք անգամ ջուր է թափում իւր ետեղ, թիկունքի կողմը:

41. Մահուան օրից մինչև 40 օր, մեռելատէրը, եկեղեցում,—ուր տարուել էր դիակը,—վառ է պահել տալիս կանթեղը, որ լուսաւորուի մեռնողի հոգին: (Քար.) (1)

42. Եթէ առաջին տարելիցին քար չեն գնում գերեզմանի վերայ, սպասում են եօթ տարի ևս: (?)

43. Գերեզմանաքարի վերայ չեն պարկում, որ վերջին դատաստանին, մեռնողը կարողանայ յարութիւն առնել, և որ պարկողը նորա մեղքերի պատասխանատուն չլինի:

44. Գերեզման օրհնել տուղը երեք բուռը հող է վեր առնում գերեզմանից և դէն զցում, որ հանդերձեալ կեանքում, հանգուցեալը նորա համար բարեխօսութիւն անի դատաստանի առաջելը:

45. Գերեզման օրհնել տուղը, այդ եկեղեցական կարգը կատարել տալուց յետոյ, յետ չի նայում դէպի գերեզմանը, որ ընդունելի լինի օրհնութիւնը:

(1) Մի քանի տեղ, ինչպէս Պաղախում, այսպէս են կատարում. իսկ ուրիշ տեղեր, ինչպէս Տիֆլիսում, տանն են կանթեղ վառում. փոքրերի համար մի քանի շաբաթ, մեծերի համար—մէկ ամբողջ տարի:

46. Հանգուցեալի հոգու փրկութեան համար նորա տաւնը, տարին մէկ անգամ շէլսկը են բաժանում:

47. Իսկ խեղդուածի հոգին սատանայից ազատելու համար մօրթում են մէկ ուլ, եփում են առանց բրնձի և բաժանում:

48. Երբ մէկը երազում տեսնում է իւր հանգուցեալին, նորան էլ չտեսնելու համար (որովհետև կարծում է, թէ մեռնողը իւրիան—էլ է հրաւիրում) հաց թխելու օրը, մի տաք կուտ (թորոնի պատից վայր ընկած, այրուած հացը) գցում է տանիքը և ասում. «Թող կշտանայ աչքդա:»

49. Միևնոյն նպատակով՝ երազողը հանգուցեալի գերեզմանի վերայ մէկ ածխակոթ է տնկում և ասում. «Էս տքու փայն, էլ ինձ չերեաս:»

50. Երբ միևնոյն նոր հանգուցեալը երազվում է մի քանի հիւանդների, և եթէ նոքա—էլ շուտով մեռնում են,—քարեկամները հանում են գերեզմանից երազուող հանգուցեալի զիակը: Գիւղի իւրաքանչիւր տնից մի—մի փայտ են դուրս բերում և դիզում են նորտ գերեզմանի մօտ: Յետոյ վառում են այդ փայտակցուր և զիակն այրում են նորա մէջ: Մոխիրը կրկին թափում են գերեզմանը և քահանան՝ ժողովը տգիտութիւնից ստիպուած՝ նորից նորա վերայ թաղման կարգ է կատարում: (Ուզունթալայ) (1)

(1) Մի հայ վարդապետ մեզ պատմեց, որ ինքն ականատես էր եղած այդպիսի գէպքերի Ուզունթալայում:

III.

ԽԾԱԲՆ ԴԾԽԸՎԱԾԵՄՄՈՒՆՔ.

Ա.

1. ՏԱՆ ԲԱՐԱՔԱԹ.

Ու առն բարաքաթը առնը նոսյ, ուրու չգոսյ, գործ էն դնում հետեւու զգուշութիւնները. —

1. Կոր թխած հացերից առաջին անգամ հացթուկն է ուտում:

2. Խմոր գնդելիս՝ խմորից աւելացած մասը գնում են տաշտին և նորա վերայ խմոր աւելացնելով՝ գնդում են:

3. Խմոր—խաշը ուրիշին չեն տալիս: Խոկ եթէ ստիպւած են տալ, վերացից մի փոքր վեր են առնում:

4. Ուրիշին քացախ տալուց առաջ՝ մի քանի կաթիլ քացախ սրակում են տան առաստաղին. և յետոյ են տալիս:

5. Կոր մրգից (նուգար) առաջ առնողն է ուտում, յետոյ ուրիշները:

6. Շաշելիս, գեռ ամենի համար վեր են առնում իւրեանց բաժինները, յետոյ դրացուն են բաժին տալիս:

7. Սփոռցը վեր առնելիս՝ մէջը հացի կտօր են թողնում:

8. Չեն այրում շերեփը:

9. Այս ջուրը,—որով տան մէջը ուն են լուացել —

թափում են մէկ առանձին տեղ, սւր մարդու ոտ չե
դիպում:

10. Գիշերը, սենեակի աղբը դուրս չեն ածում:

11. Մի տնից միւսը տեղափոխուելիս՝ վարձաբնակը հին
տան բոլոր անկիւններից հող է վեր առնում և թափում
է նոր վարձած տան անկիւններում: և աւելում է հին
բնակարանը:

2. ՀԱՅԻ ԹԱՆԿՈՒԹԻՒՆ.

Ո՞ հայը չ'լանէտայ՝

1. Երեխաներին արգելում են՝ կարծուացնել: ար-
գելում են խաղալ լեւ—խոզ (1), պալքառեր (2) և նոր-
հօլը կամ հօլքեր (3) խաղերը:

(1) «Թել—խաղը» հետեւալն է: Երեխան իւր ձեռների
դաստակները բռնում է ուղղահայեաց դրութիւնով, փոքր—
ինչ հեռի միմեանցից: Մի թել անց է կացրած մի ձեռքի
մատներից մինչև միւս ձեռքի մատները: Յետոյ նա ատամով
դուրս է քարշում մէկ որև է թել, որից յետոյ թելը զան-
գան երկրաչափական ձևեր է ստանում: Այս խաղը երկուսով
— էլ են խաղում:

(2) «Պօլիսուղին» մի փայտեայ տափակ ճախարակ է. թելի
մի ծայրը խաղացողի մատին է ամրացրած, միւսը՝ ճախարակի
մէջ: Խաղացողը, շարժելով ճախարակը և բռնելով ուղղահա-
յեաց դրութեան մէջ, աշխատում է վերջին ծայրից թելը ճա-
խարակի վերայ փաթաթելով ոլորել և ճախարակը մօտեցնել
իւր ձեռքին: Բռնելով ճախարակը, նա կրկին բաց է թողնում
գետնին և դարձեալ բարձրացնում:

(3) Հետաքրքիր է իմանալ այդ խաղի էութիւնը:

2. Կողա արգելում են ցիսից հաց թիւել:
3. Ըլեւրի մաղը խաշամանի վերայ չեն դնում:
4. Կշեռքը՝ թաթերն արձակ, ձեռին բռնած, տուն չեն
տանում:

3. Հ Ա Յ Ի Բ.

Նեանեալ դեպէրը գուշում էն հերկ գուլուստը.—

1. Եթէ մոմի ծայրին երկար ցցուած են նորա չհալ-
ւած մամները:
2. Երբ հողաթափներն ընկած են միմեանց վերայ:
3. Եթէ տնից դուրս եկողի հողաթափը դռան ետևն է
մնում:
4. Եթէ պատահմամբ երեխան աւելում է տունը:
5. Եթէ խմոր հունցելիս մի կտոր վայր է ընկնում
գետնին:
6. Երբ մէկի աչքերը անդիտակցաբար մեխուած են
մնում միւնցին տեղը՝ կամ հիւր կգայ, կամ անձրեւ, կամ
ձիւն: (passim)
7. Երբ բերանցից վայր է ընկնում հացի պատառը, կամ
ձեռքից՝ դդալը: (Ա.Ը.)
8. Երբ քորվում է մէկի բեղատեղը: (Եր.)
9. Երբ մէկի ստորին ծնօտը քորվում է, մօրտքաւոր
հիւր կգայ:

4. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ.

1. Եթբ պատահմամբ, սփռոցում հացը կողքի վերայ է դրվում, —նշանակում է այդ տնից մէկը կ'ձանապարհորդի:

2. Եթէ մէկի կոկորդը քորվում է, —նորա տունը ձանապարհորդ կ'գայ: Որովհետև ձանապարհորդը հետն ուտելու բան է բերում: (Եր.)

3. Երբ ձանապարհորդը դուրս է գնում տնից, նորա ետևից գետնին ջուր են թափում, որ նա ջրի արագութիւնով գնայ և վերադառնայ:

4. **Ճ**անապարհորդի պարկից հաց են գովանում, որ նա շուտ վերադառնայ:

5. Երբ ձանապարհորդը դուրս է գնում, նորա ետևից թշնամին կոտրում է ջուլ լրած մի ջրաման, որ նա վնասուած վերադառնայ:

6. Որ ձանապարհորդը բոլորովին չ'մոռացուի իւր ընտանիքում, տնից դուրս գնալիս իւր լեզուն գնում է իւր սիրեցեալի բերանը:

7. Որ ձանապարհորդը դատարկ չ'վերադառնայ, դրացուց մէկ աման ջուր կամ մի հաց են խնդրում և տանը պահում:

8. **Ճ**անապարհորդի հացից ուտեցնում են ծծմօրը, որ նորա ծծերում կաթն առատանայ:

9. **Ճ**անապարհորդի դուրս գնալուց երեք օր պէտք է անց կենայ, որ տունն աւելին: Շուտ աւելիը նշանակում է, թէ մերձաւորները նորա մահն են ցանկանում:

10. **Մ**էկը միւսին թելած ասեղ է տալիս: Եթէ թելի ծայրը կապ գցած է, ստացողը չի ընդունում, որ չ'կապուի

նորա ձանապարհը, եթէ նա մտադիր է ձանապարհորդել: 11. Լաւ կ'վերջանայ նոցա ձանապարհորդութիւնը, որոնք երկու անգամ պատահում են միմեանց միւնցն տեղում:

12. **Ճ**անապարհորդի վերադարձը գուշակում են թիզ— չափելով: Եթէ թիզը՝ երկայնանում է, —շուտ կ'վերադառնայ: Եթէ կարձանում է, —ուշ: (Ալ.)

13. **Մ**իւնցնը գուշակում են և այսպէս: —Մի գդալ տալով երեխայի ձեռքը, պատովիրում են տնկել պատի մօտ: Եթէ գդալի երեաը ուղղվում է այն կողմը, որտեղից պէտք է գայ ձանապարհորդը, —նշանակում է նա ուշ կը վերադառնայ: Հակառակը գուշակում է նորա շուտ գալը: (Ալ.)

5. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ.

1. **Մ**ի կին ուխտում է տարուայ մէջ եօթն անգամ բորիկ ոտով և զլիին կարմիր թաշկինակ կապած՝ գնալ որեւ է ուխտատեղի: Եթէ, մի քանի անգամ գնալուց յետոյ, որեւ է պատճառով ընդհատվում է գնալը, —նա սկըսում է նորից, չհաշուելով առաջն գնացածները, —որ ուխտն ընդունելի լինի:

2. **Մ**իւնցն նպատակով՝ ուխտաւորը մեղքամոմեր է վառում զոհի ոչխարի եղջւրներին և այդպէս եօթն անգամ շրջեցնում է նորան եկեղեցու ըրա կողմը:

3. **Մ**իւնցն դիտաւորութիւնով՝ նա մէկ ումա ջուր է պահում բերանում և տանում՝ թափում է ուխտատեղին գուանը:

4. Ուխտած սուրբը համբուրելուց առաջ՝ ուխտաւորը ճանապարհին ծաղիկ չե քաղում և հոսող ջոփ մէջ ձեռները չե լուանում, որ իւր նովատակին համնի:

5. Եթէ,—ուխտատեղին հասնելուց առաջ,—ուխտաւորը իւր մաքում ցանկանայ մի բան գտնել ճանապարհին, և գտնի,—կ'զրկուի այն ողորմութիւնից, որին նա սպասում էր սուրբից:

6. Հիւանդ ուխտագնացը՝ ուխտատեղում գտնուած ծառի ծիւղց կախ է անում մի թել որի ծայրերին երկու խիճ են կապուած, և ասում է. «Իմ ցան ըստի ֆիայ, ինձ լաւութիւն տրե», —որ բժշկուին իւր ցաւերը:

7. Ուխտատեղում, եկեղեցու սվաղած պատի վերայ սեղմելով՝ քարափի քար են կայնում, (որովհետև սեպ քարը դժուար կ'ապչի) սուրբից մի բան խնդրելով: Խնդիրն ընդունուած է համարվում, եթէ քարը կպած կմայ:

8. Ուխտատեղում, ճաշեց յետոյ, չեն թափ տախս սփոռցը. այլ թրմացքը հաւաքում են և տուն գնախս հետներն են տանում, և պահում են իբրև տան—բարաքաթ:

9. Ասում են, թէ մատաղն ընդունելի կ'լինի Աստուծուն, եթէ մատաղացու կենդանին, մորթելուց առաջ ձայն կ'հանի՝ 7, 12 կամ 15 անգամ: Եօթն անգամ ձայն հանողը,—ասում են,—հաճելի կ'լինի Աստուծուն, որովհ հետեւ Աբէլը մօտ բերեց Աստուծուն իւր զոհը իւրեանց բնակարանից 7 սամէն հեռաւորութեան վերայ: Տասներկու անգամ ձայն հանողը,—որովհետև ընդունելի եղաւ նոյ նահապետի զոհը, որ մատուցուեցաւ Արարատի վերայ տապանից 12 սամէն հեռաւորութեան վերայ: Տասնեհինգը,—որովհետև Արարածն Իսահակին

զոհեց իւր բնակարանից 15 վերստ հեռաւորութեան վերայ: (1)

10. Ուխտատեղի տօնե օրը, այդ եկեղեցու յատակի տակը, մինչև տարելիցը, պուլեկի մէջ գինի կամ ձու են պահում: Դա կոչվում է խաչուռոյ: Երբ խաչալուան պահող ուխտաւորները, միւս տարի կրկին գնում են, հանում են խաչալուան, առաջ իւրեանք են ուտում՝ խըմում: յետոյ ուրիշներին են բաժանում, որ իւրեանց ուխտն ընդունելի լինի:

11. Ուխտագնացը, տուն վերադառնախս, չե տանում իւր հետ փայտի մնացորդը, որ հիւանդը փայտի պէս չ'ըրանայ. չե տանում աղի և սապոնի մնացորդը, որ սուրբը վիշտ և կսկիծ չ'ցոյց տայ նորանց:»

12. Ուխտագնացը տուն չե վերադառնում մինչև բառապար պալը: (2)

13. Երբ վանահայրը նկատում է, որ ուխտաւոր չե գալիս,—այդ ցավին գեղ անելու համար,—նա եկեղեցու բանալիով խփում է եկեղեցու դռներին, և,—այն սուրբի անունը տալով, 'ի պատիւ որի կանգնեցրած է եկեղեցին, ասում է. «Այս ինչ սուրբ), ուխտաւոր բեր»:

(1) Հեռաւորութիւնն այն ժամանակը չափում էին ասպարէգներով: Մէկ ասպարէգը մօտ 85 սամէն ունի, այնպէս որ 6 ասպարէգը մի վերստ է կազմում (510 ս.) Տես Աւետ. Դուկ. 24, 13. Յովհ. 6, 19. Յայտն. 21. 16.—«Братское руководство простымъ людямъ къ чтенію нового завѣтъ то есть святаго евангелия и Апостола. С. Петербургъ. 1875.»

(2) Երբ սուրբը երազվում է ուխտաւոր ընտանիքից մէկին ասում են, խաչը գաստուր տուեց, արձակեց, —բաւական համարելով նոցա ուխտադրութիւնը.

Բ.

1. Մ Ա Պ Ա Զ.

1. Մազերը չեն համարում, որ չպակասին:
2. Աղջեկը կամ կինը չե ծածկում տղամարդի գլխարկը, որ իւր մազերը չթափուին:
3. Աղջկայ զիսի մազերը, առաջեն անդամ սափրելիս, նորա ոտների տակը երկայն, ոլորած թոկ են դնում, որ նոր դուրս եկող մազերը թոկի պէս երկայն լինին:
4. Տղան չե բռնում աղջկայ հիւսը, որ նորա մազերը չթափուին:
5. Միենյն նպատակով՝ աղջեկը իւր գլուխը լուանալիս, մազերը չե հիւսում:
6. Գլուխը սափրելուց յետոյ սափրավայրը կտաւիքը թափէ տալիս սափրուողի գլխին, որ մազերը շուտ աճին:
7. Մայիսի եօթին եկած անձրեի տակը կանգնում են գլխաբաց, որ զիսի մազերը խտանան: (passim)

2. Կ Ա Թ Ն Ա Տ Ա Մ .

1. Կաթնատամերի երեալու ժամանակը երեխայի գլխին հատիկներ են ցանում: իսկ առաջը հայելի կամ սանր են դնում: Եթէ երեխան հայելին է վեր առնում,—մայրը արու որդի կ'ծնի. Եթէ սանրը,—էդ: Իսկ հատիկներն ածում են, որ նորան լաւ ատամներ դուրս գան և շուտ դուրս գան:
2. Կաթնատամները փոխելիս ծնողները պատուիրում են

երեխային, որ հանած ատամները թորոնի խողովակը (սնդու) գցի, կրկնելով երեք անդամ: Ան' ու քեզ շան ատամ: տուր ինձ գառան ատամն:

3. Եսյդ ատամները նոյնպէս դնում են եկեղեցու պատի ձեղքերում, որ երեխան ժամասէր լինի. դնում են տան պահարանում, որ լաւ տնտես լինի. գռան ձեղքում,—որ նոր դուրս եկող ատամը գերանի պէս ամուր լինի:

3. Ե Ղ Ո Ւ Ն Գ.

1. Աղջեկը եղունդով քսում է իւր հիւսին. Եթէ մազերը խոպոպ են կանգնում, նշանակում է նա բարկացուո կ'լինի:

2. Վիւրակէ օրը եղունգ չեն կարում, որ հանդերձեալ կեանքում աչքերի արտեւանունքով չժողովել տան գետնից այդ եղունդի կտրած մասները. այլ և, որ մատները չդողան: (Տիբս. և Սաղ.)

3. Կտրատուած եղունդների մասները մէկ ապահով տեղ թաղելով, ասում են. Ան' զունգ, դուն ըտեղ կ'աց. Աղամ, դուն—էլ վկայ կ'աց, ուզեմ, թէ չէ, ինձ ռաստ գաստ,—կարծերով, թէ վերջին դատաստանին կ'պահանջուին այդ եղունդի մասները:

4. Կ Ո Ր Ո Ւ Ս Տ.

1. Ով մի թանկագին բան է կորցնում՝ մեծ գնով գլուռում է գայլի վէգը և այլում, յուսալով, որ գտնողն—էլ այդպէս կ'այլուի: (Սաղ.)

2. Միւնոյն նպատակով մեղրամոմերը ոլորում են և
այրում, անիծելով գտնողին:

3. Ով ցանկանում է գտնել իւր կորուսար՝ քարբ քարի
վերայ է դնում, կարծելով, թէ սատանան չի թոյլ տա-
լիս գտնել:

5. ՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ.

1. Եթէ տղան կարողանայ համբուրել իւր արմունկը,
առում են աղջիկ կ'դառնայ: Իսկ եթէ աղջիկը համբուրի,
—տղայ կ'դառնայ:

2. Եշին տղան, —որ կարողանայ անց կենալ ծիսածանի
կամարի տակից, —աղջիկ կ'դառնայ: Իսկ եթէ աղջիկն
անց կենայ, —տղայ կ'դառնայ:

3. Երբ բոյթ մատը բարձրացնում ենք վերե, մատի
ծայրը դէպի բազուկն ուղղելով՝ դաստակի և բլակի
սահմանում, մի փոքրիկ գոգաւոր փոս է կազմվում: —
Այն տղան, որ այդ փոսը ջրով կլնի և առ անց խօսելու,
բոբիկ ոտով կարող է նրուսաղէմ գնալ, —աղջիկ կ'դառ-
նայ: Իսկ եթէ աղջիկը կարողանայ այդպէս նրուսաղէմ
գնալ —տղայ կ'դառնայ:

6. Ա. Բ. Հ. Ե. Ս. Տ.

1. Հիւնութիւնը և գերձակութիւնը առում են, կար-
ծելով, թէ սատանան ներհակ է այդ արհեստներն ունե-
ցողներին: Երբեք ապացոյց՝ բերում են հետեւալ իրողու-
թիւնները: Հիւնը և գերձակը ինչ բան կարծ կտրեն:

նա այլ ես չի կարող երկայնանալ: (Քար.)

2. Դարբնին յարգում են իրեւ սատանաների հալածողի:
Որպէս թէ, երբ դարբինը մնումը բարձրացնում է և իր-
փում է սալին, սատանան ընկճվում է մրճի հարուածի
տակ: Սորան ապացուցանում են այսպէս. դարբինը, կարծ
երկաթը ջարդելով՝ կարող է երկայնացնել, և երկայնը՝
կրկն ծալելով, կարձացնել: (Քար.)

3. Եթէ դարբնին առաջարկում են նորոգել կոտրուած
կասկարէնքի մէկ ոտը, նա այդ չի յանձն առնում, որ իւր
կինը չ'մեռնի: (Քար.)

4. Կօշկակարին յարգում են, նորա արհեստի նախա-
վարպետ (փիր) ընդունելով նղիայ մարգարէին: (passim)(1)

5. Կօշկակարը մի հատ կօշիկ չի կարկատում, որ կինը
չ'մեռնի: (Քար.)

6. Ներկարարին և նորա ներկի —կարասը յարգում են,
ներկարարութեան նախավարպետ համարելով Սիմէօն—
Ծերունին: (passim) (2)

(1) Սորա մասին պատմում են հետեւալը: —Մէկ անգամ,
սատանան կնոջ կերպարանքով մօտենում է կօշկակար նղիա-
յին (մարգարէ), նորան գայթակլեցնելու մտքով: Բայց, տես-
նելով, որ չի կարողանում հասնել իւր նպատակին, նա մեր-
կացնում է իւր սպիտակ և քնքուշ ոտը, և առաջարկում է
կօշկակարին իւր ոտի չափով կօշիկ կարել: Սուրբ կօշկա-
րաը, —տեսնելով սատանայ —կնոջ դիւթիչ ոտը, —իսկոյն չար
միտք է անց կենում նորա գլխովը: Բայց, չխաբուելու համար՝
իսկոյն ձեռքի բիզը իւր աչքերն է կոխում և կուրացնում
աչքերը: Աստուած հաւանելով կօշկակարի արարքը, ուղար-
կում է իւր հրեշտակները, որոնք սուրբ կօշկակարին մարմնով
երկնք են բարձրացնում:

(2) Պատմում են, թէ Սիմէօն—Ծերունին մէկ աշակերտ է
ունեցել: Մէկ անգամ այդ աշակերտը բարկացնելով սուրբ

7. Այն տունը,—ուր գտնվում է ներկի կարասը,—
Ոջախ է ասվում: Այդ տունը սուրբ է համարվում, որով
Հետև, ասում են, Սիմեօն—Ծերունու բնակարանն է:
(Քար.)

8. **Փողահարութիւնը** (գուռնաշութիւն) սատանայական
գործ են համարում. որովհետև, ասում են, փողահարը
իւր փողի ձայնով պար է ածում սատանաներին: (Քար.)

7. ԲԱՄԲԱՍԱՆԻ:

1. Եթէ շորը կարելիս պէտք է դուրս կտրել մի փոքր
ակղ օձիք կամ թեւեր կարելու համար,—այդ կտորն—էլ
չեն գործ ածում շորի վերայ, թէպէտ հարկաւոր—էլ
լինի, —որ կարողին չբամբասեն:

2. Շորը հագին կարելիս՝ շորատէրը իւր բերանում պա-
հում է իւր մազը կամ ասեղ, —որ մազերը չթափուին,
չմեռնի կամ բամբասողները չշատանան:

3. Եթէ մլրատի բերանը բաց է մնացել իսկոյն փա-
կում են, որ թշնամին էլ այնպէս բաց չանի բերանը և
չբամբասի կար անողին:

4. Եթէ հաց ուտաղը պատահմամբ կծում է իւր մատը,
—ասում են, —նորան այդ միջոցին բամբասում են:

Ծերունուն, նորա անէծքով իսկոյն կերպարանափոխում է
և կապիկ է դառնում: Նշանն այն է, որ կապիկ եղունգները
կապոյտ են, ինչպէս ներկարարի եղունգները:

8. ԱՏԵԼՈՒԹԻՒՆ.

1. Կինը չի գործ ածում այն երեսսրբիչը և թաշկի-
նակը, որ գործ է ածում իւր ամուսինը,—որպէս զի ա-
տելի չդառնան միմեանց:

2. Այն ջուրը, որով պյուր լուացել է իւր ոտները,—
կինը չի գործ ածում իւր ոտների համար,—որ չ'ատեն
միմեանց:

3. Տունն աւելելիս, եթէ կնոջ ձեռքի աւելին պատահ-
մամբ դիավէ ամուսնուն,—դոքա կ'ատեն միմեանց:

4. Միմեանց աղաման չեն տալիս, որ ատելի չ'լինին
միմեանց:

5. Դուան սեմումը միմեանց չեն բարեւում, որ միմեանց
չ'ատեն:

6. Մէկը երեսը լուաց տաշտումը: Եթէ մէկ ուրիշն—
էլ կամենում է լուացուիլ միենոյն տաշտումը,—նա կ'ամ
տաշտին բռնով ջուր է խփում, կ'ամ այնտեղից երեք կա-
թիկ ջուր է դուրս ցայտում, —որ ատելութիւն չ'ծագի
առաջնի և վերջնի մէջ:

9. ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՑԱԶՈՂՈՒԹԻՒՆ.

1. Առաւոտը, արթնանալիս անկողնում շոր չեն հագ-
նում, որ ամբողջ օրը յաջողութեան մէջ լինին:

2. Միենոյն նպատակով, եթէ առաւոտը վաղ, մէկը
պատահում է քահանայի կամ իւր ատելի մարդուն,—
գետնի քարը շուռ է տալիս:

3. Առաւօտը, առաջին անգամ թախտից ցած գալիս,
առաջ աջ ոտն են կոխում գետնին,—որ օրը յաջողու-
թեան մէջ անց կենայ:

4. Ջեռները չեն կցում, մատները միմեանց մէջ հագ-
ցրած՝ որ անյաջողութիւն չպատահի:

5. Թրդթադրամը երկու մատների միջեց չեն ստանում,
որ անյաջողութեան չպատահեն:

6. Անյաջող ընթացք կբռնեն այն մարդու գործերը,
որի կօշեները երեկոյին ծուռն են դարառած գետնին:

7. Ո՞վ ում հետ թշնամութիւն ունի, նորա կրպակի
սեմումը մեխ է ցցում,—որ նորա առուտուքը անյաջողու-
թեան մէջ լինի:

10. ԲԱԴԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԱԲԱՂ- ՏՈՒԹԻՒՆ.

1. Ասակաւոր աղջկան տանում են դաշտը, կանգնեց-
նում են խաչաձև ճանապարհի վերայ և երեք անգամ
կրկնել են տալիս այս խօսքերը. Անրի, հեռացած բաղտ-
—որ բանակ, ամուսնանայ:

2. Միևնոյն նպատակով այդպիսի աղջեկն անց է կե-
նում աւանակի տակից:

3. Շուտով կբացուի այն աղջկերանց բաղտը, որոնց
մայրերը, միևնոյն օրը, երկու անգամ են պատահում մի-
մեանց միևնոյն ճանապարհում:

4. Աղջեկը իւր շորի վերայ ասեղ չի պահում, որ բաղ-
տը չէ առաջար:

5. Երբ աղջեկը, կիւրակէ օրը տունն աւելելիս լինի և

ձեռքից աւելին քանդուի, նա չի շինում, կապում,—
որ այնպէս չկապուի իւր բաղտը:

6. Աղջկայ օժիտը գրելուց յետոյ՝ թուղթը միշտ
զլիսի վերայ են պահում, ցած չեն գնում, որ աղջկայ
բաղտն—էլ յած չէնի նի:

7. Միևնոյն նպատակով՝ աղջեկը մատանի չի պահում
իւր մատումը:

8. Արշալուսին բաց են անում սրահի գուները, որպէս
զի ներս մտնի բաղտը, որ նստուած բաժանում է այդ
միջոցին:

9. Գիշերը, քնողը մայր չի գցում իւր կոճակները, որ
բաղտը չկապուի:

10. Ցերեկը, մոմ վառելուց առաջ հաց չեն ուտում,
որ հացով զբաղուած լինելով՝ չգրկուին բաղտից, որ այդ
ժամանակը բաժանվում է:

11. Դռան սեմի վերայ չեն նստում, որ նստողի բանը
յեռ չառյա, չը քամբաղտանայ:

12. Այն մարդը, որին հաց են տալիս և չի ընդու-
նում, ասում են, այդպիսով չայի է պայման իւր բանին:

13. Գիշերը, կանայք և աղջկերք գլուխը բաց չեն պա-
հում, որ չար հրեշտակը չփախցնի նոցա զիսից ուղարկ-
—մաղը:

14. Գիշերով գլուխ չեն սանրում, որ դովսթ—մաղը
վայր չընկնի:

11. ԵՐԱԾ.

Ահաւոր երաղ չպեսնելու համար՝

1. Դրաների մօտ կօշիկներ չեն թողնում:
2. Գիշերով հացի կուտ չեն ուտում:
3. Անկողինը մանելիս երեք անգամ կրկնում են. ճնի մուայ տեղս, 'ի գերեզմանա. տակս՝ գետին, վրէս՝ հող, կողքերքին՝ քարերա:
4. Երկրացալի երաղ տեսնողը շրջում իւր բարձր, որ երազը չկատարուի:
5. Միեւնոյն պատճառով՝ նա, առանց երազն ուրիշն պատմելու, գնում է դեսի ափը և երեք անգամ կրկնում. և յ ջուր, դու իմ տեսած երազը տանեաս:
6. Նոյն դիտաւորութիւնով, առաւօտը վաղ—վաղ նա ժամ է գնում և եօթը մօմ է վառում: Տուն վերադառնալիս մի քար է բարձրացնում և երեք անգամ ասում. և ս երազը քու տակը մնայա:

12. ՄԱՀ.

1. Կոր շոր հագնելիս և նոր աման գործ ածելիս, ասում են ռԱռաւօտ լուսոյ—ի հետեւալ տունը. Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա, որ երկար կեանք վայելեն:
2. Ոժիտի պայմանաթղթի հետ ծնողները միջնորդին տալիս են մի շուշ (երկայն, ոլորած թել): Թղթի հետ միասին նա այդ շուշն տալիս է տղատիրոջը, այն մաքով,

որ եթէ գործը գլուխ դայ,—ամուսնացողները այդ թելի նման երկար կեանք վայելեն:

3. Թիսելով հարսանիքի հացը, առաջին երեք հացը տաք—տաք տուն են տանում, որ նորափեսան, նորահարսը և խաչեղայրը երկար կեանք ունենան:

4. Շատ փոշացողը,—ասում են,—շատ կ'ապրի:

5. Երբ երկուսի զիսովն անց է կենում միեւնոյն միտքը, առաջ ասողը աւելի կ'ապրի միւսից:

6. Երկու կին միասին կար են անում: Եթէ նոցանից մէկը կամենում է ասեղ կամ գնտասեղ տալ միւսին, անմիջապէս նորա ձեռքն է տալիս: Խակ եթէ նա ասեղը գցում է դէպի խնդրողը, նորա կեանքի մնացորդ մասը այնքան երկայն կ'լինի, որքան հեռաւորութիւն անց է կենում ասեղը:—

7. Տան առաստաղի, սափորի և ջրի տակառի յանկարծակի ճայթիւնը գուշակում է տան մեծի մահը:

8. Հացը ծայրից չեն ուտում, որ ուտողի ծնողները ըմբնին:

9. Երեխային արգելում են ուտել եփած հաւի գլուխը, —որ նորա ծնողները չմեւնեն:

10. Շաբաթ օրը շոր չեն ձեռում, որովհետեւ այդ օրը՝ շաբաթուայ վերջին օրը լինելով,—շոր հագնողի կեանքի օրերն—ել վերջինը կ'լինին, եթէ շորը ձեւն:

11. Հանած շորը կոճակած չեն պահում, որ նորա տէրը չմեռնի:

12. Մահատանը հրաւիրուողը չի հագնում իւր նոր շորը, որ այդ շորը միշտ սև օրում չ'մաշի, —այլ խնդրում է ուրիշի շորը:

13. Նոր շոր հագնողին՝ եթէ ցերեկն է հագնում, ասում են, «Արեգակով մաշեաս: Խակ եթէ զիշերն է հագ-

նում, առաւօտն են շնորհաւորում, որ գետնի տակը չը
մաշի, ուր նոյնպէս մութն է, ինչպէս գիշերը՝ այսինքն՝
որ շուտ չ'մեռնի:

14. Ասր թխած հացերից առաջինը կինը չի ուտում, որ
մարդը (այր) չ'մեռնի. և մարդը չի ուտում, որ կինը չը
մեռնի:

15. Մինչգեռ հացերը թորոնումն են, կրակ չեն հա-
նում թորոնից, որ հացատիրոջ փեսան չ'մեռնի:

16. Ասր թխուած հացերը տուն տանելուց առաջ՝ տը-
ղային արգելում են հացից կտրել, որ նորա առաջին կինը
չ'մեռնի:

17. Երիասարդին և երեխային թոյլ չեն տալիս կցել
ձեռները, — որ նորա հայրը կամ մայրը չ'մեռնի: Իսկ եթէ
նա որբ է, չեն արգելում:

18. Հողաթափը և գլխարկը հակառակ երեսի վերայ
չեն թողնում, որ տէրը չ'մեռնի:

19. Հարսը հողաթափներով թախտը չի բարձրանում,
որ սկսուրը չ'մեռնի:

20. Միենյն նպատակով՝ նա չի խմում շշե մէջ մնա-
ցած գինին:

21. Խմորից խաշ վեր առնելիս, — եթէ խմորատիրոջ
աւագ որդին կենդանի է, — խմորի ծայրիցն են կտրում
իսկ եթէ մեռած է, ուրիշ տեղից են կտրում:

22. Խմորի տաշտը պատին չեն դէմ տալիս, որ տան
տիկնը չ'մեռնի:

23. Շապիկ լուանալիս, թերը միմեանց չեն քսում,
տրորում, որ տէրը չ'մեռնի:

24. Տան մէջ, մոմը փշելով չեն հանգցնում, որ տան
բնակիներն — ել այնպէս չ'հանգչեն:

25. Պատկուած մարդը թէյի առաջին բաժակը խմե-

լուց յետոյ միւս անգամներին չի փոխում իւր բաժակը,
որ կինն — ել այնպէս չ'փոխուի, չ'մեռնի:

26. Զեռքում երկու վառած մոմ բռնած՝ տուն չեն
մտնում, որ տանը մահ չ'պատահի:

27. Կծկի թելլ սեղմելով չեն փաթաթում, որ փաթա-
թողի հոգին դժուար չ'գուրս դայ:

28. Եղբայր ունեցողը գիշերով ծամուակ չի ծամում,
որ եղբայրը չ'մեռնի:

29. Ում լեզուն քոր դայ, նա շուտ կ'մեռնի:

30. Փեսան գինու մրուրը չի խմում, որ զռքանչը չը
մեռնի:

31. Մահատան ամաններում ջուր չեն թողնում, որով
հետեւ հոգեհան հրեշտակը իւր մահացնող սուրը լուա-
նում է այդ ջրերով, ուրեմն և ապականում է ջրերը:

32. Եթէ մի տան մէջ երկու անուանակիցներ կան, —
ասում են, — նոցանից մէկը շուտով կ'մեռնի:

33. Ու ոք չի համարում իւր կեանքի օրերը, որ չ'պա-
կասին, չ'մեռնի:

34. Կացինն ուսին դրած տուն չեն մտնում, որ տանը
մարդ չ'մեռնի:



Գ.

1. ՆՈՐ-ՏԱՐԻ.

1. Նոր—տարի առաւօտը, առաջին անգամ տան դուռը տան մեծն է բաց անում, որ նա շատ տարիներ անպահակաս լինի իւր տնից։ Բայց դատարկ ձեռով չի ներս մրանում. զո՞նէ մի փայտի կտոր տուն է տանում, որ ամբողջ տարին լի և յաջող անցնի նոցա համար։ Այդ փայտը այն օրը վառում են կերակուր եփելիս։ Մի փոքր վառելուց յետոյ հանգժնում են և մոխրում թաղում։ Այսպէս անում են ամեն օր մինչև Զրօրհնէքը։ Երբ այս տօնն—էլ անց է կենում, տանում՝ թաղում են արտի ծայրում, որ հունձն առատ լինի։ (Դուռնիկ)

2. Առաւօտը, մէկը գնում է, գետից ջուր է բերում, և ածում է տան բօղոր անկիւններում, որ տարին առատութիւնով անց կենայ իւր տան համար։

3. Միեւնոյն նպատակով՝ եօթ տան աղբանոցից փայտի խուշուներ են հաւաքում և ածում են իւրեանց աղբանոցում։

4. Ուրախութիւնով կ'անց կենայ նոր տարին այն տան համար, որի դուռն առաջին անգամ բաց է անում ուրախ բնաւորութեան տէր մարդ։

5. Միեւնոյն նպատակով՝ դռան առաջել, մի թոկից կարմիր շորի կտոր են կախ անում։

6. Հայրը իւր օրդուն արծաթ փող է բաշխում, որ նա ամբողջ տարին ուրախութեան մէջ անց կացնի։

7. Նոր—տարի օրը, առաւօտը վաղ, տան մեծը մատուցարանի վերայ դարսում է հաց, գինի, մեղք և չորս խնձոր, որոնց վերայ չորս հատ մեղրամում է վառում։ Մատուցարանը տանելով դէպի սենեակի չորս անկիւնները, նա ասում է. «Անուշ արէք, ովքեր չէք երեւում. չնհաւոր նոր տարի»։ Յետոյ, դուրս է տանում և սրահի մէջ տեղը կանգնելով՝ աղօթում է Աստուծուն, խնդրելով, որ ամբողջ տարին այնպէս քաղցրութիւնով անց կենայ իւր տան համար, ինչպէս քաղցրացրել է մատուցարանը։ Վերջապէս մատուցարանը տուն է տանում, և տան մեծից մինչև փոքրը, ամենին հրաւիրում է ճաշակելու հացից և մեղրից, ասելով. «Էսպէս քաղցր պառուեա»։ Յետոյ, մեղրից խաչաձև քսում է դռան ճակատին և վառած մեղրամոմի ծխով սևացնում է քսած տեղը։

8. Նոր—տարուայ համար հաց թիսոլը թիսում է և երկու հաց, զարդարելով նոցա երեսները ընկոյզներով և չամփիներով։ Այդպիսի հացը պարուայ հայ են անուանում։ Այդ հացերից մէկի մէջ արծաթ փող է լինում դրուած։ Կէսօրին, տան նահապեար կտրատում է այդ խորհրդաւոր հացը և բաժանում է ամենին մեծից մինչև փոքրը։ Բաղտաւոր է համարվում նա, որի բաժնում գտնվում է փողը։—Իսկ միւս հացն ուտում են Զրօրհնէքին։

9. Տարուայ—հացերից մէկն ասվում է չիս, միւսը—եւ։ Եզր պահում են ալիւրի ամբարում, որ նոցա համար տարին առախութիւնով անց կենայ։ Իսկ չեքը գցում են հոսող ջուրը, որ և տանում է նորան, ինչպէս տարուել է հին տարին։

10. Նոր—տարի օրը զգուշանում են ծախս անելուց, ուրիշին փող տալուց, որ ամբողջ տարին ծախսերի մէջ չընկնին։

11. Խնչպէս նոր—տարի օրը, նոյնպէս և՝ բոլոր երկուշաբթի օրերը, գիւղացիներն անպատճառ գործի են գընում, որ ամբողջ տարին գործի մէջ լինին: (Սաղ.)

12. Այդ օրը տանը ջուր չեն թափում, որ մրջիւններ լցու չ'ընկնին:

13. Ով այդ օրը ջակրտ (Ճախարակ) տեսնի, —ասում են, —ամբողջ տարին նորա գլուխը կ'ցաւի:

14. Յունվարի 3-ին, հաւերի ակրը կուտ է տալիս մէկ երեխայի, որ նա հաւերի առաջն ածի: Եթէ ամբողջ տարուայ ընթացքում այդ հաւերը անմնաս են մնում, հետեւեալ տարիներն—էլ միեւնոյն առաջարկում են նոյն երեխային: Բոլոր դրացիներն—էլ զիմում են միենոյն երեխային, նորա չեալ կրցած համարելով:

2. ԶՐՈՌՀՆԵՔ.

1. Զրօրհնէքին, ընդունում են հոսով ջրերի մի քանի վայրկեան կանգնելով: Որովհետեւ, —ասում են, —երբ Քրիստոս մկրտում էր, Յորդանանը կանգնեց:

2. Ով այդ րոպէին սափորավ ջուր հանի գետից, նորա սափորը կ'լցուի մարգարիտներով և թանկապին քարերով: Իսկ եթէ իւր բաղար որոնողն ուշանայ, սափորը միայն քարերով կ'լցուի:

3. Այդ օրը, եկեղեցում օրհնած ջրից տուն են տառում, և տանիքից թափում են կրակարանում, որ տան բարաքաթը չ'պակասի:

3. ՍՈՒՐԲԻ—ՍԱՐԳԻՍ.

1. Սուրբ—Սարգսի շաբաթին կանայք սապոն չեն գործ ածում, որ եղջերուի եղջեւրները գուրս գան, աճեն:

2. Այդ տօնին, շատ երիտասարդներ և աղջկելք ծոմ են պահում, և գոցա համար ծնողներն աղոթը են թըխում, որ և նոքա ուտում են ուրբաթ երեկոյին: Գիշերով սաստիկ ծարաւում են: Եւ այն աղջկելը, որ ծարաւ երիտասարդին երազումը ջուր է տալիս, —լինելու է նորա հարսնացուն: Այսպէս և այն երիտասարդը, որ ծարաւ աղջկան երազումը ջուր է տալիս, —լինելու է նորա փեսայուն:

3. Միեւնոյն երեկոյին, մի տափարակ ափսէում ալիւր կամ փոխինգ են լցնում և ափսէի կողքին մի վառած մոմ կացնելով՝ գնում են տանիքի վերայ: Եթէ դնողներն արժանի են դրախտին, Սուրբ—Սարգիսը իւր ձին հեծած կանցիենայ և ձին կ'կոխի ալիւրը կամ փոխինդը, որի վերայ կ'նկատուի նորա պայտի հետքը: (passim)

4. Ով այդ շաբաթուայ մէջ Ճանապարհորդում է, մինչև յաջորդ շաբաթը, նորա տանը ոչ ոք գլուխ չ'լուսանում, որ Սուրբ—Սարգսի ձիու ոսները չ'սայթաքին սապոնաջրի վերայ:

4. ՏԵԱՌՆ—ԸՆԴ—ԱՌԱՋ.

1. Տեառն—ընդ—առաջ—ին, երբ քահանան աւետարան կարդալիս համում է այն տեղը, ուր գրուած է:

և Եւ ընդ քո իսկ անձն սուր անցցէ», —ժողովրդականները խիզին դանակով կիսից կտրում են ձեռներում բռնած մռմերը, նոցա նմանեցնելով Քրիստոսին: (Կողբ)

2. Այդ օրը, երեկոյին, սրահում խոտ կամ փայտ են վառում. յետոյ մոխիրը թափում են տան անկիւններում, որ տան — բարաքաթը չ'գնայ, թափում են թուխսի տակը, որ ձագուկներն անվնաս դուրս գան ձուաներից:

3. Այդ կրակի ածխակողթից քսում են աչքերի կոպերին, որ աչքերը պայծառ լոյս ունենան:

5. ՄԵԾ-ՊԱՅ.

1. Բուն — բարեկենդանին կաժ չեն մանում, որ հացի մէջը կաժի պէս թելեր չգոյանան:

2. ՄԵԾ — պասի առաջին երկուշաբթի օրը, այն ջուրը որով լրւացել են ամսնները, — տաճարիկինը տանում է թափում երդկի չորս կողմը: Յետոյ մի քար է դնում երդկի մօտ, մի քար — էլ ձեռում պահելով՝ ձայն է տաշլս երդկից տանը գտնուողներին. «Ի՞՞նչ աղամ» — ԱՄուկն աղա, կարիճ աղա, օձ աղա, մորեխ աղա, ... պատասխանում են ներսից: Նա քարը քսում է միւս քարին, որպէս թէ աղում է: Այսպէս, նոքա աղում են և բնաջինջ անում այն բոլոր կենդանիները, որնց անունները յիշեցին, — յուսալով, որ նոքա կ'չքանան թէ տներում և թէ դաշտերում: (Ալ) (1)

(1) Այդ օրը, տան մեծը առաստաղից մը սոխ կամ կարտոփիլ է կախ անում, որի մէջը եօթ հատ հաւի փետուր է ցցում: Եւ իւրաքանչիւր շաբաթն անց կենալս, դուրս է հա-

3. ՄԵԾ — պասի առաջին հինգշաբթի օրը նզոված է, ուստի կանայք այդ օրը կար չեն անում: (1)

4. ՄԵԾ — պասի կիսին կար չեն անում, որ կար անողի ջանը (անձը) կէս չ'լինի. գլուխ չեն լուանում, որ գլխի մազերի կէսը չ'թափուի. եղունգ չեն կտրում, որ եղունգները կէս չ'լինին, ... Վերջապէս, մի որ և է անզգուշութիւնից՝ այդ օրը ամեն բան կարող է կիսուիլ:

5. ՄԵԾ — պասին խունկ չեն ծամում, եթէ ոչ հանգերձեալ կեանքում ծամողին կրակ կ'տան ծամելու:

6. ԾԱՂԿԱԶԱՐԴ.

1. Ըւագ — Չորեկշաբթի գիշերը տանը պահում են մասրու թուփը կամ Ճիւղերը, որ նորա փշերը պատառուեն գիսաւոր սատանային:

2. Միւնյոյն գիշերը, գաւիթներում փայտ են վառում չարերից աղատուելու համար. որովհետև նոքա միայն այդ գիշերն են շատ վախենում մարդկերանցից:

3. Միւնյոյն նպատակով այդ օրը, երեկոյին, դռան սեմումը շամփուր, իսկ շորերի մէջ ասեղներ ու գնտասեղներ են ցցում:

առում մէկ — մէկ փետուր, որ իմանան, թէ պասից որքան շաբաթ է անց կացել — Այդ սոխը կամ կարտոփիլն անուանում են՝ պ ա ս, ա խ ե լ ո ջ, տ կ լ ա տ ի զ:

(1) Պատմում են, թէ այդ օրը, մէկ աղջիկ կար անելիս է եղել Ամայրը պատուիրել է նորան թողնել կարը, և ուրիշ գործի ձեռք տալ, իսկ աղջիկը չի հնագանդուել: Ուստի մայրը նորան նզովիլ է այսպէս. «Դու ընենց աղքատանաս, որ էս օրուայ օրը կար անես, ու նրա փողով հաց ճարես»:

4. Աւագ—Հինգշաբթի օրը կանայք կար չեն անում: որովհետեւ այդ օրը ասեղ գործածել—նշանակում է օգնել Հրեաներին Քրիստոսին չարչարելում:

5. Եղին զիշերը, ծննդականի վերմակի բոլորի շուրջը ասեղներ են ցցում, և ամբողջ զիշերը անքուն աչքով հսկում են նորա մահճի մօա, որ չարը չ'մօտենայ նորան:

6. Աւագ—Ռիբաթ օրը կանայք կար են անում, որ իւրեանց ասեղներով հանեն Հրեաների աչքերը:

7. Միենոյն օրը նոր մեռելատէրը թխում է մի հատ անալի բաղարջ, որ ծակծակում է մատնոցով և բաժանում է դրացիներին, ինչպէս Քրիստոսի հոգեհաց:

8. Այդ օրը մազեր չեն հիւսում, որ գլխացաւ չ'ստանան:

9. Այդ օրը բանջար չեն քաղում, որովհետեւ Հրեաները բանջարով ծեծեցին Քրիստոսին:

10. Աւագ—Նաբաթ երեկոյին եօթ գլաւ մախոփ են ուսում, որ հարինքից աղատուին:

11. Ծաղկազարդին, եկեղեցում բաժանած ուռի Ճիւղը պահում են իւզամնում, որ իւզն անզակաս լինի անից: Այդ Ճիւղը գնում են թուխսի տակը, որ բոլոր ձուաներից—էլ ձագեր ստանան:

7. Զ Ա Տ Ի Կ

1. Զատիկ օրը,—ասում են,—բաղա են բաժանում: ով այդ օրը ցերեկը քնի, կ'զըկուի իւր բաժին բաղաից:

2. Այդ օրը, պատարագի ժամանակ, կանգնում են գափթներում, մաղն երեսին բռնած, և նորա միջովը նա-

յում են արեին, որ տեսնեն յարութիւն առած Քրիստոսին:

3. Այդ օրը, եկեղեցում բաժանած մատաղի ոսկորը պահում են տանը մինչև տարուայ վերջը, որ այնտեղ մրջին լցո չ'ընկնի: (1)

4. Այդ օրի թիակը ցոյց են տալիս երեխային, որ նա իմաստուն լինի:

5. Այդ օրուայ ծնուած երեխան, —ասում են, —իմաստուն կ'լինի, և իւր եղոնդին նայելով՝ կարող է գուշակութիւն անել:

6. Զատիկից մինչև համբարձումն, երկուշաբթի օրերը, երկան չեն պատում, իսոր չեն գնում և թել չեն կրծկում, որ կարկուտ չ'գայ:

7. Ճինդ նաւակատիկների շաբաթներում (Ճրօհնէքին, Զատկին, Վերափոխմանը, Ս. Խաչին և Վարդափառին) և Զատկից մինչև Համբարձումն, (երբ ժամասացութեան վերջը ևկեցն, աէրա է ասլում) երեկոները, երբ լսվում է եկեղեցիների զանգահարութիւնը, —կար չեն անում, որ հաւաքութ չ'լինին: (ԱՀ) (2)

(1) Մի կին մեզ պատմեց, որ բաց անելով պահարանի գուռը, տեսաւ, որ մրջիւնների զօրագունդը հաւաքուել էր Զատկուայ ոսկորի վերայ:

(2) Հաւաքութ այն կինն է ասում, որ այդ օրէնքի դէմ մաղանչելով երեկոները չի կարողանում տեսնել և հաւիպէս կուրանում է:

8. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ Առաւտօտը

1. Համբարձման առաւտօտը, առանց մի մարդու հետ խօսելու, մի քար են դնում ծառի ճիւղերի արանքումը, ասելով. «Քու պառւղը քարի պէս զայիմ մնայ, չ'վերթափուի» և արմատի մօտ մոխիր ցանելով՝ ասում են. «Ճիւգու չ'ընկնի քու մէջը»:

2. Այդ օրը, կովատէրը իւր կովի կաթը՝ գրացիներին է բաժանում, որ իւր կովն առատ կաթն ունենայ: (Դուռնիկ)

3. Կոյն օրը, առաւտօտը վաղ—վաղ առանց խօսելու, գետից ջուր են բերում, և նորանով լուանում են գլխացաւ ունեցողի գլուխը, որ ցաւը կրուի:

4. Ե՞իննոյն օրը, արշալուսին, առանց խօսելու, մի մարդ կանդնում է փողոցում և ունկնդիր է լինում որ և է մարդկային ձայնի: Առաջին խօսքը. որ նա լսում է,— բաւականութիւն է տալիս նորա հետաքրքրութեանը: Եթէ լսու խօսք (ուրախ, կարմիր, հարուստ) է լսում, —նշանակում է տարրուայ մնացորդ մասը նորա տունը բաղտաւորութեան մէջ կ'լինի: Իսկ եթէ վատ խօսք (տխուր, սե, աղքատ է լսում, —նորա տունը անյաջողութեան և վատ օրում կ'լինի:

5. Համբարձման գիշերը, ժամի մէկին, ժողովուրդը ընդունում է անշունչ առարկաների շունչ ստանալը: Այսպէս. ծաղիկները խօսում են միմեանց հետ, յայտնելով, թէ իւրեանք ինչպիսի ցաւերի և հիւանդութիւնների համար կարող են գեղ դառնալ: Աեառները շարժվում են տեղերից և մօտենալով՝ ողջունում են միմեանց: Գետերը և աղբիւները կանգ են առնում մի ժամ, որ կատարեն իւրեանցից խնդրողի կամքը: (Ալ.)

6. Կոյն գիշերը, աղջկերքը իւրեանց անունու, խոտերից միահաւասար փունջեր են կապում: Ում խոտը առաւօտը երկայնացած լինի, նորա կեանքը կ'երկարի: (Ալ.)

7. Համբարձման եօթներորդ օրը չորեքշաբթի, կատարում են վիճակահանութիւնը: (1) Ամեն բան վերջացնելուց յետոյ, ծաղիկները հանում են ամանից, ջուրը լցնում են մի թասի մէջ, և երկք կամ ջրս կին թասը բռնում են իւրեանց բթամատների վերայ, աշխատելով ազատ և խաղաղ պահել ջրի մակերեւոյթը: Երբ արդէն ջուրն անշարժ է, մի կին կամաց հեռքը քսում է թասի շուրջը, մի բան ցանկանալով իւր մոքումը: Զուրը պտտուելով, շարժ-

(1) Համբարձման նախընթաց երեկոյին (չորեքշաբթի) մի կին, առանց խօսելու, եօթ գոյնի դաշտային ծաղիկներ է հաւաքում և տուն տանում: Գիշերը, այդ ծաղիկները մի բացօթեայ տեղ է դնում, մի պայծառ աստղի պահպանողութեան տակ: Հետեւեալ առաւտօտը, նոյնպէս անխօս, գետից ջուր է բերում: Դրացիներից մի—մի բան (մատնոց, մատանի, զանակ, փող...) է հաւաքում, որով նոքա նշանակում են իւրեանց սիրելիների անունները, բերած ջուրը, ծաղիկները և այդ առարկաները թափում են մէկ ամանի մէջ և վեց ցերեկ, վեց գիշեր պահում են բաց օդում: Եօթներորդ օրը, այդ կանայքը հաւաքում են և նստում են մէկի տանը վիճակահանութեան համար: Իւրեանց մէջ տեղը նստեցնում են մէկ աղջիկ, որի երեսից ամանի վերայից քող է գցուած: Նստող կանանցից մէկն սկսում է երգել «Ճան գիւլումը»: Մի տուն երգերուց յետոյ, աղջիկը ձեռը միտում է իւր առաջեր զրուած ամանում, և առաջին անգամ պատահած առարկան հանում է: Առարկայի տէրը, —քննելով երգուած տան միտքը, —ուրախանում է կամ տրտում: Այսպէս, կարգով երգելով և մի—մի առարկայ հանելով, երբ ամանումն—էլ ոչինչ չի մնում, վերջանում է հանդէսը:

փում է: Եթէ շարժուածքը աջ կողմն է ուղղվում,—բարի է, կ'կատարուի բաղտախնդիր կ'նոջ ցանկութիւնը: Իսկ եւթէ ձախ կողմն է ուղղվում,—նա մի փորձանքի կը պատահի:

8. Համբարձումից մինչև Վարդավառը ուխտատեղի չեն գնում, սուրբերին համբարձուած համարելով: Իսկ Վարդավառից մի շաբաթ առաջ պաս են պահում նոցավերադի համար:



Ա Ե Բ Զ

Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք Ա Հ Ի Ն

| Ձ | Նիւթ տուողների ազգ—անուն-ները: (1) | Քաղաքները և Գիւղերը: |
|----|--|-------------------------------------|
| 1 | Գրիգոր Մատինեանց | Տփխիս |
| 2 | Նիկողայոս Խօջեանց | |
| 3 | Գրիգոր Պապեանց | Քարվանսարայ |
| 4 | Համազասպ քահ. Տէր—Յովհաննի-սեանց | Տփխիս |
| 5 | Յարութիւն Ղեռնդեանց | |
| 6 | Նիկողայոս Նաւասարդեանց | Նուլաւէր (գ.) |
| 7 | Լեռն Մէլիք—Ադամեանց | |
| 8 | Մկրտիչ Աթաբէգեանց | Սաղիան (գ.) |
| 9 | Յովհաննէս Աթանասեանց | |
| 10 | Գէորգ Ղասարեանց | Ալէքսանդրո-պօլ |
| 11 | Տ. Տէր—Մարկոսեանց | |
| 12 | Ալէքսանդր Աստուածատրեան Զա-խարեանց | Նամախի |
| 13 | Ալէքսանդր Արարատեանց | |
| 14 | Եղիշէ քահ. Տէր—Աստուածա-տրեանց | Սղնախ |
| 15 | Մկրտիչ Խապիրեանց | |
| 16 | Մեսրովը աւագ քահ. Փափազեանց | Ալէքսանդրո-պօլ Աերին - Ազուլիս (շն) |
| 17 | Ն. Կարապետեանց | |

(1) Բոլոր 17 անձնիք մեղ հաղորդել են ընդ ամենը 860 նախակաղաքանունք, որի միայն կ'է ս'ն է մեղ հարկաւորուել:

ԳՐՔԻՍ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԱԶԳ—ԱՆՈՒՆՆԵՐԸ.

ԱԼԵՔՍԱՆԴՐՈԳՈՅՆ.

1. Աղէքսանդր Սանցեանց 1
2. Աղէքսանդր Սիմէօնեանց 1
3. Աղարէկ Արշակունի 2
4. Արամ Մատուկեանց 2
5. Աւետիս Միրզայեանց 1
6. Աւետիս Քարտաշեանց 2
7. Գաբրիէլ Ցովէտնիսեանց 1
8. Գարեգին Տէր—Ցովէտիեանց 1
9. Գէորգ Ղասարեանց 1
10. Մինաս Քահ. Տ. Պետրոսեանց 1
11. Մկրտիչ Արաբաջեանց 1
12. Մկրտիչ Սահակեանց 2
13. Մկրտիչ Տալեանց 1
14. Սարգիս Տ. Սիմէօնեանց 1
15. Օրիորդ Արաքսէ Պահլաւունի 1

Պարտ էսք համարում Տէր Հրապարական շնորհա-
կալութեանը յայտնելու Հայր Օգուէնտ Կուպակձեսնանցին,
հ. Օգուէնտ Հայրունուն, հ. Մեսրովը Փափագեանցին,
հ. Խորէն Միրզաբէգեանցին, հ. Եղեշէ Տէր—Աստ-
ածատրեանցին, Սարկաւագ Տիգրան Տէր—Բար-
սրդեանցին, Տիրացու Գրիգոր Մատթէոսեանցին, Պարոն
Յակօբ Տէր—Ցովէտիեանցին, պ. Աղաբէդ Արշակու-
նուն, պ. Ցարութիւն Շահնազարեանցին և պ.
Աղէքսանդր Զախարեանցին,—որնք չինսոյեցին իրեւոց
ջռնէրը՝ գրէիս համար Էտառուրդներ գոնեաւ:

ԱՐՄԵԱՆՍԿ.

| | | |
|----|-------------------------------------|---|
| 1 | Աղամ Տափախեանց | 1 |
| 2 | Անդրէաս Հալսձեանց | 1 |
| 3 | Աստուածատուր Ալթնժօփեանց | 1 |
| 4 | Բաղդասար Մելքոնեանց | 1 |
| 5 | Գաբրիէլ Սիմէօնեանց (դպիր) | 1 |
| 6 | Գալուստ Խարաթումանեանց | 1 |
| 7 | Գասպար Մահտեսեանց | 1 |
| 8 | Երիցուհի Մարիամ Հայրունի | 1 |
| 9 | Լուսեղէն Նալբանդեանց | 1 |
| 10 | Կատարինէ Դրագօնեանց | 1 |
| 11 | Ցովհաննէս Դրագօնեանց | 1 |
| 12 | Ներսէս Մազլումեանց | 1 |
| 13 | Պարոն Տալտապանեանց | 1 |
| 14 | Ստեփաննոս Լաշինեանց | 1 |
| 15 | Օգուստ Քահ. Հայրունի | 1 |

ԲԱԳՈՒ

| | | |
|---|-----------------------------------|---|
| 1 | Արտէմ Տ. Ս. Մինասեանց | 1 |
| 2 | Աւագ Գրիգորեանց | 1 |
| 3 | Աւետիս Ղարաբէկեանց | 1 |
| 4 | Բալասան Գրիգորեանց | 1 |
| 5 | Բէջանեանցի Խանութ | 1 |
| 6 | Գրիգոր Այվաղեանց | 1 |
| 7 | Գանինէլ Տ. Ս. Մինասեանց | 1 |
| 8 | Լևոն—Բէկ Լալայեանց | 1 |

| | | |
|----|--|---|
| 9 | Խորէն Քահ. Միրզաբէկեանց | 1 |
| 10 | Կարապետ Ժամհարեանց | 1 |
| 11 | Ղազարոս Ցովհ. Մայէլեանց | 2 |
| 12 | Մինաս Ս. Կաճկաճեանց | 4 |
| 13 | Մկրտիչ Քալանթարեանց | 1 |
| 14 | Յակօր Ապրեսեանց | 2 |
| 15 | Յակովը—Բէկ Լալայեանց | 1 |
| 16 | Ցովհիմ Մարտիրոսեանց | 2 |
| 17 | Ցովհաննէս Թարուահեանց | 2 |
| 18 | Ցովհաննիսեանց | 1 |
| 19 | Զաւլադ Տ. Խորայէլեանց | 1 |
| 20 | Սամուէլ Գրիգորեան Դիլդարեանց | 1 |
| 21 | Ստեփաննոս—Բէկ Լալայեանց | 1 |
| 22 | Գրիստափոր Տ. Ս. Ս. Մինասեանց | 1 |

ԴԱՎՐԵԺ

| | | |
|----|--|---|
| 1 | Արէլ Ի. Ապրեսեանց | 1 |
| 2 | Ալէքսան Մահտեսի—Գրիգորեանց | 1 |
| 3 | Ալէքսան Յ. Եղիազարեանց | 1 |
| 4 | Աղէքսանդր Թ. Ճալալեանց | 1 |
| 5 | Անդրէաս Արք—Եպիսկոպոս, առաջնորդ Գաւրիժու | 2 |
| 6 | Բաղդասար Բալայեանց | 1 |
| 7 | Գրիգոր Յակովեանց | 1 |
| 8 | Գրիգոր Յ. Խախանեանց | 1 |
| 9 | Թէոս Աւագեանց | 1 |
| 10 | Խորայէլ Խաչատորեանց | 1 |
| 11 | Կարապետ Տէր—Կարապետեանց | 1 |
| 12 | Մարգար Ա. Նազարբէգեանց | 1 |

| | | |
|----|-------------------------------|---|
| 13 | Մեսրովը ա. քահ. Փափազեանց | 1 |
| 14 | Մովսէս Մահտեսի — Անանեանց | 1 |
| 15 | Յակովը Մէլքոնեանց | 1 |
| 16 | Նիկողայոս Մ. Բաբաջանեանց | 1 |
| 17 | Տիգրան Գօրյեանց | 1 |
| 18 | Տիգրին Աշխէն Տ. Մ. Առաւելեանց | 1 |

Ե Բ Ե Ի Ա Ն

| | | |
|-----|---|---|
| 1 | Ա. Ղուկասեանց | 1 |
| 2 | Արշակ Աղարեանց | 1 |
| 3 | Բարսեղ Նահապեանց | 1 |
| 4 | Գալուստ Գասպարեանց (Ախալցիսեցի, Հեռագրատան աստիճանաւոր) | 1 |
| 5 | Գալուստ Խայիեանց. | 2 |
| 6 | Գալուստ Մակարեանց (Ագուլցի) | 2 |
| 7 | Գէորգ Աբիեանց (Ագուլցի) | 1 |
| 8 | Խւան Աղամալեանց | 2 |
| 9 | Լևոն Տէր — Յարութիւնեանց (Դգդիրցի, ոստանիլ) | 1 |
| 10 | Կարապետ Տ. Առաքելեանց (Կողըեցի) | 1 |
| 11 | Մահտեսի Սարդիս Դատեանց | 1 |
| 12 | Յակօբ Գէորգեանց | 2 |
| 13 | Յակօբ Տ. Ցովսէփեանց | 2 |
| 14. | Ցովչաննէս Խայիեանց | 1 |
| 15 | Ցովչաննէս Տ. Առաքելեանց (Կողըեցի) | 1 |
| 16 | Պետրոս Մէլքք — Դատեանց | 1 |
| 17 | Սիմէօն Մատինեանց | 4 |
| 18 | Ստեփաննոս Կանայեանց (Դգդիրցի) | 1 |
| 19 | Սոլոմոն Աղամեանց (Կարմիր — Աղբիւրեցի) | 1 |
| 20 | Քրիստոփոր Հախնազարեանց (Ագուլցի) | 2 |

Թ Է Լ Ա Ւ

| | | |
|---|---------------------------|---|
| 1 | Արէլ Քահ. Սուքիսեանց | 1 |
| 2 | Արտէմ Տէր — Մէլքսեղեկեանց | 1 |
| 3 | Կարապետ Քահ. Ասլանեանց | 1 |
| 4 | Սուքիս Սուքիսեանց | 1 |

Թ Է Ո Դ Ո Ս Ի Ա

| | | |
|---|--------------------------|---|
| 1 | Գրիգոր Թէրոյեանց | 2 |
| 2 | Ծերոն Տիրացուեանց | 1 |
| 3 | Կարապետ Քէրէսթէճեանց | 1 |
| 4 | Ցովչաննէս Քահ. Սարըյեանց | 1 |

Կ Ե Բ Զ

| | | |
|---|------------------------|---|
| 1 | Աղամ ԿոռոՃեանց | 1 |
| 2 | Գաբրիէլ ԷքմէքՃեանց | 1 |
| 3 | Դանիէլ Այվազեանց | 1 |
| 4 | Էմմանուէլ Պօպօլեանց | 1 |
| 5 | Խաչատուր Մալխասեանց | 1 |
| 6 | Խաչատուր Միքայէլեանց | 1 |
| 7 | Կարապետ Ժէմըռողեանց | 1 |
| 8 | Ցովչաննէս ԳալանՃեանց | 1 |
| 9 | Ցովչաննէս Կօժէ՛միկեանց | 1 |

| | | |
|----|-----------------------|---|
| 10 | Պետրոս ձեպէլէքեանց | 1 |
| 11 | Ռափայէլ Յարութիւնեանց | 1 |

ՆԵՐՔԻՆ—ԱԳՈՒԼԻՄ

| | | |
|---|------------------------------|---|
| 1 | Գէորգ Մանուէլեանց | 1 |
| 2 | Ղահրաման Դ. Մէլքը—Մուրադեանց | 1 |
| 3 | Մ. Ռօստոմեանց. | 1 |
| 4 | Պօղոս Աղամալեանց | 1 |
| 5 | Ռոկան Մ. Ռոկանեանց | 1 |

Շ Ա. Մ Ա. Խ Ի

| | | |
|----|------------------------------------|---|
| 1 | Արրահամբ—Բէկ Շահվերդեանց | 1 |
| 2 | Խւան Համբարձումեանց | 1 |
| 3 | Խրիստափօր Նազարեանց | 1 |
| 4 | Համազասպ Վարդապետ Համազասպեանց | 1 |
| 5 | Հայրապետ Խալարեանց | 1 |
| 6 | Միքայէլ Ներսիսեանց | 1 |
| 7 | Յակօր Խաչատուրեանց (Նուխեցի) | 1 |
| 8 | Յարութիւն Տ. Եսայիեանց | 1 |
| 9 | Զահանդիր Տ. Մատթէոսեանց (Սաղեանցի) | 1 |
| 10 | Զաւատ Տ. Ստեփանեանց | 1 |

ՍԻՄՖԵՐՕՊՈԼ

| | | |
|----|------------------------------------|---|
| 1 | Արմենակ Բահաթրեանց | 2 |
| 2 | Աւետիս Թղլեանց | 1 |
| 3 | Գէորգ Մ. Երևանցեանց (սարկաւագ) | 1 |
| 4 | Գրիգոր Մատինեանց | 2 |
| 5 | Երիցուհի Տիրուհի Կոպչակձեանց | 1 |
| 6 | Էմ. Սուբաշի | 1 |
| 7 | Ղազարոս Քէրաբչեանց | 2 |
| 8 | Յարութիւն Լ. Դաւթեանց | 2 |
| 9 | Յովհաննէս Աղաբալեանց (Ղղլարցի) | 2 |
| 10 | Յովհաննէս Յովհէփեանց (Եւպատօրիացի) | 2 |
| 11 | Պետրոս Թօփալեանց | 2 |
| 12 | Սերովիչ Մաերեանց | 3 |
| 13 | Վարդան Տ. Օ. Կոպչակձեանց | 1 |
| 14 | Տիգրան Տ. Բարսղեանց (սարկաւագ) | 1 |
| 15 | Օգսէնտ Քահ. Կոպչակձեանց | 1 |
| 16 | Օրիորդ Մանէ Կոպչակձեանց | 1 |
| 17 | Օրիորդ Նունէ Կոպչակձեանց | 1 |
| 18 | Օրիորդ Վարդուհի Կոպչակձեանց | 1 |

Ա Ղ Ն Ա Խ

| | | |
|---|--------------------------|---|
| 1 | Աղէքսանդր Պապօվեանց | 1 |
| 2 | Ամիրան Զիլաւեանց | 1 |
| 3 | Արշակ Քահ. Տ. Ստեփանեանց | 1 |
| 4 | Գէորգ Գանջէլեանց | 1 |

| | | |
|----|-------------------------------------|---|
| 5 | Եղեշէ քահ. Տ. Աստուածատրեանց | 1 |
| 6 | Պալէ Ապանեանց | 1 |
| 7 | Սարգիս Բաղդասարեանց (Թուքուրմիշեցի) | 1 |
| 8 | Սարգիս քահ. Տ. Ստեփանեանց | 1 |
| 9 | Օր. Եւայ Դաւթեանց | 1 |
| 10 | Օր. Մաշնկայ Այվազեանց | 1 |
| 11 | Օր. Մաշնկայ Ալանեանց | 1 |

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՒՄ

| | | |
|----|-----------------------------|---|
| 1 | Ամիրջան Դաւթեան Թովմայեանց | 1 |
| 2 | Աստղեկ Պօղոսեան Ազամիրզեանց | 1 |
| 3 | Աւետիս Խօջամիրեանց | 1 |
| 4 | Բաղդասար Տ. Միքայելեանց | 2 |
| 5 | Գէորգ Վարդապետ Սուրբնեանց | 1 |
| 6 | Դաւիթ Քալանթարեանց | 1 |
| 7 | Կարապետ Ա. Բէգլարեանց | 1 |
| 8 | Մինաս Արասիսնեանց | 1 |
| 9 | Յարութիւն Շահնազարեանց | 1 |
| 10 | Յովհաննէս Փանիեանց | 1 |
| 11 | Ռուբէն Գիւլումեանց | 1 |
| 12 | Սարգիս Հախնազարեանց | 1 |
| 13 | Սարգիս Փանիեանց | 1 |
| 14 | Ստեփաննոս Արասիսնեանց | 1 |

Տ Փ Խ Ա

| | | |
|---|---------------------------|---|
| 1 | Աթանագինէս Գ. Մելքոնմեանց | 1 |
| 2 | Անդրէս Քարիմեանց (Ժամլոչ) | 1 |

| | | |
|----|---------------------------------|----|
| 3 | Արշակ Ղոնդաղսագեանց | 1 |
| 4 | Արշակ Վարդանեանց | 1 |
| 5 | Աւետիս Գուլսակեանց | 1 |
| 6 | Բաղդասար քահ. Ղամազեանց | 2 |
| 7 | Բարսեղ Առաքելեանց | 1 |
| 8 | Գէորգ Գ. Մնացականեանց | 1 |
| 9 | Գէորգ Թուրազեանց | 1 |
| 10 | Գէորգ Յարութիւնեանց | 1 |
| 11 | Գրիգոր Մատթէոսեանց (Գպիր) | 1 |
| 12 | Գրիգոր Յակոբեանց | 1 |
| 13 | Դիմնեսիս Ղամազեանց (Գպիր) | 1 |
| 14 | Զրիգորեանցի Կովկասեան գրախանութ | 10 |
| 15 | Խսահակ Յարութիւնեանց (ուսանող) | 1 |
| 16 | Կարապետ Մ. Տ. Արքահամեանց | 1 |
| 17 | Կարապետ Սանթոյեանց | 1 |
| 18 | Կարապետ Տ. Յովակիմեանց | 1 |
| 19 | Համազասպ քահ. Տ. Յովհաննիսեանց | 2 |
| 20 | Հայկ Գ. Մելքոնմեանց | 1 |
| 21 | Յովակիմ քահ. Առաքելեանց | 1 |
| 22 | Յովհաննէս Գ. Մելքոնմեանց | 1 |
| 23 | Յովհէփ Մ. Ամիրշանեանց | 1 |
| 24 | Ներսէս քահ. Արովիւանց | 2 |
| 25 | Ներսէս քահ. Տ. Բարսելեանց | 2 |
| 26 | Ռափայէլ Գ. Մելքոնմեանց | 1 |
| 27 | Սարգիս Բահաթրեանց | 1 |
| 28 | Սարգիս Ղազարեանց | 1 |
| 29 | Սարգիս Տ. Վարդանեանց | 1 |
| 30 | Սարգիս քահ. Երէցեանց | 2 |
| 31 | Սիմէն Ֆրանգիւլեանց | 1 |
| 32 | Ստեփաննոս Ա. Դօփեանց | 1 |

| | |
|-----------------------------------|---|
| 33 Վաղարշակ Գ. Մելքոնեանց | 1 |
| 34 Տիգրան Տ. Բարսղեանց (սարկաւագ) | 1 |
| 35 Օրիորդ Հովհաննի Տ. Մանդակունի | 1 |

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱԹԱՐԱՐԱՅԻ ԳՐԱՄ

- 1 Գրիգոր Քահ. Մանդակունին 2 օրինակ Նուիրում է Տփխիսու Ս. Մարիամեան դպրոցին:
2. Նոյնը—2 օրինակ Տփխիսու Զորաբաշե Ս. Գէորգի դպրոցին:
3. Նոյնը—1 օրինակ Կոստանդիանոս Մատթէոսեանցին:
4. Գրիգոր Մատթէոսեանց (Դպիր) —1 օրինակ Օրիորդ Դարանիա Կ. Ա. գամեանցին:

Առարկա առ ձեզ չափան և հերկա պարագան առ
Ա. Ե ԱՅԼՈՒԹ ՏԵԽՆԻԿԱ ՊԱՐԱԳԱՆ ՀՈՒՐՈՒ ԱՅ
ՀԱՐԱԳԱՆ

Աժդարիսանից, Մեծ—Ղարաքիլիսից, Մէլիտօպօլից,
Նուխուց, Ստաւրօպօլից, և Քութայիսից չեն սպայել Ներ
աշուրէած բաժանորդականէոն Աւելենը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- | | | |
|----|-----------------------------------|-------|
| 1) | ԱՆԵԿԴՕՏՆԵՐ. Հատոր I. 1876..... | 50 4. |
| 2) | ԱՆԵԿԴՕՏՆԵՐ. Հատոր II. 1877..... | 50 4. |
| 3) | ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ Հատոր I. 1878..... | 50 4. |

Ըստ զրքելը կարելի է ստանալ հետևեալ հասցեով.
«Վ. Տիֆլիս.—Կավազսкая книжная торговля З. П.
Грикурова»

1.

«ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ»-ի II. Հատորը պատրաստելու համար ժողովում ենք ներ կեանքից առնուած նախապաշարումներ։ Մեզ նախապաշարումներ ուղարկողների ազգ—անունները կտպուին գրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կ'ստանայ մի օրինակ։

2.

«ԱՆԵԿԴՕՏՆԵՐ»-ի III. Հատորը պատրաստելու համար ժողովում ենք ներ կեանքից առնուած անեկդուններ։ Մեզ անեկդուններ ուղարկողների ազգ—անունները կ'տրպուին գրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կ'ստանայ մի օրինակ։

Մեր հասցեն։

«Վ. Սիմֆերոполь (Крымъ). Въ Армянское училище. Учителю Ованесу Назаріанцъ.»



| | | |
|------|-----------------------------|--------------------------|
| II. | բաղկացած | բաղկացած . |
| VII. | նախապաշարումն շատ | նախապաշարումն, որ շատ |
| XII. | դասաւորսւթիւնը | դասաւորսւթիւնը . |
| 1. | մարդու | մարդու: (1) |
| — | աւելի է | աւելի է . |
| 2. | նոցավ | նոցա |
| — | շամփուրներու | շամփուրներով . |
| 8. | ԹՌՉՈՒՆՆԵՐ | 2. ԹՌՉՈՒՆՆԵՐ . |
| 9. | զրահաւորւած | զրահաւորուած |
| 10. | իմ | իմ . |
| 15. | ին | ինչ . |
| 16. | աղջեկը | աղջեկը . |
| 9. | ակարանում է | ակարանում է |
| 17. | արգելու են | արգելում են |
| 18. | Գրիգոր | Գրիգոր . |
| 20. | եռլ | եռլ . |
| — | ծառաւը | ծառաւը . |
| 28. | ստիպուած է | ստիպուած է |
| 29. | գեր | գեր . |
| — | գերանայ | գերանայ . |
| 52. | մահաանը | մահատանը |
| 80. | նշանակում է | նշանակում է |

17

四

4

1

ԴԻՆ է 50 ԿՐՊԵԿ.

2013

0025341

ՀՀ Ազգային գրադարան



NL0025341

